Р(испольи)
С-21
33387



Христиан Елиаспергиудис

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ
ԹԱՆԳԱՐԱՆ

Բ(ստ.)
Շ-22
33387

ԱՐՄԵՆԱԿ ՇԱՀՄՈՒՐԱԴՅԱՆ

(Տարոնի Սոխակը)

33387

Գրականության և արվեստի թանգարանի
հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ - 1998

ԴՏՀ 78(479.25
ԳՄԴ 85.313(2Հ)
Շ 208

Կազմող՝ ԽԱՉԻԿ ՍԱՖԱՐՅԱՆ
Խմբագիր՝ ՀԵՆՐԻԿ ԲԱԽՉԻՆՅԱՆ

Գիրքը նվիրվում է Արմենակ Շահմուրադյանի ծննդյան 120 ամյակին

Շ 208 ԱՐՄԵՆԱԿ ՇԱՀՄՈՒՐԱԴՅԱՆ (ժողովածու, կազմող՝ Խ.Սաֆարյան) - Եր., ԳԱԹ հրատ., 1998, 144 էջ:

Գիրքը հայ մեծանուն երգիչ Արմենակ Շահմուրադյանի կյանքին ու գործին նվիրված առաջին հրատարակությունն է: Ընդգրկում է երգչի ինքնակենսագրությունը, մի հոդվածը, նամակները, ինչպես նաև նրա արվեստին օտար մամուլի տված գնահատականները, հայ մամուլի արձագանքները, հայ մտավորականների կարծիքներն ու ժամանակակիցների հիշողությունները:

Շ $\frac{4905000000}{841(01)-98}$ 98

ԳՄԴ 85.313(2Հ)

© Գրականության և արվեստի թանգարան

ԹԱՆԳԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ

Արմենակ Շահմուրադյանը հայ դասական վոկալ-կատարողական արվեստի խոշորագույն ներկայացուցիչն է: Անզուգական մի արվեստագետ, որը միաժամանակ Փարիզի Մեծ Օպերայում աննախընթաց հաջողություն գտնելուց հետո, թողնելով միջազգային ասպարեզը, ամբողջապես նվիրվել է հայ ժողովրդական ու հոգևոր երգին՝ տարածելով այն աշխարհով մեկ: Այս խոշոր երգչի անունը, սակայն, այսօր գրեթե մոռացության է մատնվել, և նոր սերունդը հազվադեպ հնչող որոշ ձայնագրություններից զատ նրան հաղորդակցվելու ոչ մի այլ միջոց չունի:

Մեծ երգչի խոշոր վաստակը և նրա ծննդյան 120 ամյակը հրամայաբար պահանջում են նորից ու նորովի ոգեկոչել նրա պայծառ հիշատակը: Այս նկատառումով Եղիշե Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանը կազմակերպեց հոբելյանական ցերեկույթ և ցուցադրություն՝ նվիրված Շահմուրադյանի կյանքին ու գործին: Այս ուղղությամբ հաջորդ քայլը սույն հատորի հրատարակությունն է, որի նախաձեռնողը անձնվեր մտավորական և պետական գործիչ Խաչիկ Սաֆարյանն է: Գրականության և արվեստի թանգարանում, ինչպես նաև Պետական արխիվում ու Ազգային գրադարանում պահպանվող ձեռագիր ու տպագիր նյութերից նա հավաքել է Շահմուրադյանին վերաբերող բազում և բազմաբնույթ նյութեր, որոնք խմբավորված են հետևյալ կարգով:

Կազմողի ընդարձակ առաջաբանին հետևում է Շահմուրադյանի ինքնակենսագրությունը: Վերջինիս ինքնագիրը պահպանվում է Փարիզի Նուպարյան մատենադարանում, որտեղից ժամանակին Գրականության և արվեստի թանգարանը ստացել է այդ արժեքավոր վավերագրի լուսապատճենը և ընդգրկել Շահմուրադյանի ֆոնդում (թիվ 31): Ասենք, որ ինքնակենսագրության մեկ այլ նախնական, համառոտ տարբերակ (գրված 1911 թ.) դեռևս երգչի կենդանության օրոք

տպագրվել է մամուլի էջերում: Ինչ վերաբերում է ներկայացվող ընդարձակ տարբերակին, ապա այն հրատարակվում է առաջին անգամ՝ որոշ կրճատումներով (կազմողի չվերծանած կամ հրապարակման համար ոչ նպատակահարմար համարված հատվածները): Խնդրո առարկա բնագիրն անթվակիր է. որոշ հաշվարկների հիման վրա կարելի է ասել, որ գրված է 1920-ական թվականների սկզբին:

Ինքնակենսագրությանը հաջորդում են Արմենակ Շահմուրադյանի մի տպագիր հոդվածը և մի շարք անտիպ նամակներ՝ գրված Արշակ Չոպանյանին և մի քանի այլ անձանց:

Հաջորդ բաժինն ընդգրկում է օտար (ֆրանսիական և եգիպտական ֆրանսալեզու) մամուլի գնահատականները՝ տրված հայ մեծ երգչին, ապա՝ նրա համերգների ու շրջագայությունների վերաբերյալ ժամանակի հայ մամուլի արձագանքները, երգչի մասին մի շարք հայ մտավորականների կարծիքներն ու որոշ ժամանակակիցների հիշողությունները: Այս նյութերի մի մասն էլ հրապարակվում է որոշ կրճատումներով, հիմնականում՝ կրկնություններից հնարավորին չափով խուսափելու համար:

Անհրաժեշտ է նշել, որ թեև Թանգարանի հրատարակչության որդեգրած սկզբունքն է նյութերը հրատարակել բնագրային ուղղագրությամբ, սակայն տվյալ դեպքում ընդունելով կազմողի այն նկատառումը, թե սույն հատորի հիմնական հասցեատերը Հայաստանի ընթերցողն է, բոլոր բնագրերը հրատարակում ենք, այսպես ասած, արդի հայաստանյան ուղղագրությամբ:

Նյութերի այս ժողովածուն, որ փաստորեն հայ մեծանուն երգչի կյանքին ու գործունեությանը նվիրված առաջին հրատարակությունն է, շատ կարևոր ու հետաքրքիր տվյալներ և մանրամասներ կարող է հաղորդել թե՛ մասնագետներին և թե՛ երաժշտասեր լայն հանրությանը՝ հիմք ու ազդակ հանդիսանալով դեռևս ըստ արժանվույն չգնահատված այս խոշոր արվեստագետի մասին մի առանձին մենագրություն ստեղծելու համար:

Վերջում մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում բոլոր նրանց, ովքեր այս կամ այն չափով նպաստել են սույն հատորի հրատարակչական ու տպագրական աշխատանքներին:

ԿՈՄԻՏԱՍԻ ԱՐԺԱՆԱՎՈՐ ՍԱՆԸ

Կոմիտասը իր բազմամյա բեղմնավոր մանկավարժական գործունեության ընթացքում հասցրեց աճեցնել սաների և սանուհիների մի փայլուն համաստեղություն. արվեստագետներ, որոնք իրենց հրաշալի կատարումներով ապահովեցին կոմիտասյան հայաշունչ երաժշտության հաղթարշավը աշխարհի տարբեր բեմերում, ինչպես իրենց մեծ ուսուցչի կենդանության օրոք, այնպես էլ նրա ողբերգական մահից հետո: Այդ փայլուն համաստեղության ամենավառ աստղը հայ ժողովրդական ու հոգևոր երգերի անզուգական կատարող Արմենակ Շահմուրադյանն էր: Թեև շատ քիչ, բայց բարեբախտաբար պահպանվել են հայ ժողովրդական երգերի շահմուրադյանական կատարումների հին ձայնագրություններ: Ինչպիսի՛ ձայն և ինչպիսի՛ կատարում: Ինչպիսի՛ կարոտով ու թախիծով է լցվում Հայրենիքից հեռու ապրող հայ մարդու սիրտը, երբ Շահմուրադյանը իր թավշյա տենորով ներկայացնում է «Կռունկ» և «Կանչե, կռունկ» երգերը, ինչպիսի՛ հուզմունք է ապրում հայ մարդը, երբ երգչի քնքուշ ու քաղցր ձայնով հնչում են «Հով արեք», «Արորս ու Տատրակը» երգերը, ինչպիսի՛ վիշտ է պատում հայ մարդուն, երբ երգչի արցունքախառը ելևէջումներով հնչում են «Անտունի» և «Գարուն ա» հոգեցունց ու մորմոքուն երգերը, ինչպիսի՛ հպարտություն և սքանչացում է ապրում հայ մարդը, երբ երգչի հզոր ու առնական ձայնով հնչում են «Հայաստան» և «Բամբ որոտան» խրոխտ երգերը: Եվ ինչ էլ որ հնչում է Շահմուրադյանի կախարդող շուրթերից՝ ներծծված ու ներշնչված է Կոմիտասով, նրա անմար շնչի ու հոգու արտահայտությամբ:

Սիրելի ընթերցո՛ղ, շուտով մենք ազգովի նշելու ենք մեծն Կոմիտասի ծննդյան 130 ամյակը: Ներկայացնել նրա արժանավոր սանի, անզուգական երգչի, կոմիտասյան երգերի անթերի կատարողի կյանքն ու գործը՝ հիշատակի տուրք է ոչ

միայն մեծ երգչի, այլև նրա մեծ ուսուցչի՝ Կոմիտասի սխրանքի հանդեպ:

Արմենակ Շահմուրադյանը ծնվել է Տարոնի Մուշ քաղաքում, 1878 թվականին (հայտնի չեն նրա ծննդյան օրն ու ամիսը), «ամբողջ Մշո աշխարհի բոլոր ազգաբնակչության ծանոթ» դարբին Սըրգոյի (Սարգսի) հարկի տակ: Դեռ ութ տարին չբոլորած փոքրիկ Արմենակը հայտնի էր որպես քաղցրաձայն երգիչ: Նա այդ հասակում արդեն երգում էր տեղի եկեղեցում՝ միաժամանակ ուսանելով վարժարանում: Բայց ոոր մահով ամեն ինչ ընդհատվում է: Մայրը անհրաժեշտ միջոցներ չի գըտնում Արմենակի ուսման համար: Սակայն Արմենակի բնատուր արտակարգ ձայնական շնորհը հաշվի առնելով՝ Մշո հոգևոր թեմի առաջնորդ Ներսես եպիսկոպոս Խարախանյանը որդեգրում է նրան և ուղարկում սովորելու Մշո նշանավոր Սուրբ Կարապետ վանքի ժառանգավորաց դպրոցում: Եկեղեցու անձուկ միջավայրը դուր չի գալիս Արմենակին, և նա շատ չանցած վերադառնում է Մուշ: Այս անգամ Խարախանյանի ծախսով ու հանձնարարական նամակով նա գալիս է Էջմիածին և ընդունվում Գևորգյան ճեմարան: Այստեղ պատահի Արմենակը դառնում է երաժշտության ուսուցչի՝ համբավավոր երգահան Կարա-Մուրզայի երգչախմբի մեներգիչը: Արմենակի արտակարգ ձայնը և բարձրորակ կատարումը գրավում են Կարա-Մուրզային փոխարինած երիտասարդ Կոմիտասի ուշադրությունը: Եվ նա առանձնահատուկ հոգատարություն է ցուցաբերում պատանու հանդեպ: Կոմիտասը պաշտոնական պարապմունքներից դուրս հաճախ է հանդիպում Արմենակին, լսում նրա կատարմամբ Մշո դյուշտի ժողովրդական երգերն ու գրի առնում: Շուրջ տարի ու կես Արմենակը որպես երգիչ-երաժիշտ ձևավորվում է Կոմիտասի անմիջական հսկողությամբ և կատարելագործվում նրա մասնագիտական խորհուրդներով: Դա 1890 թվականն էր: Ճեմարանում Շահմուրադյանի դասընկերներն էին Ավետիք Իսահակյանը, Գրիգոր Սյունին, Դերենիկ Դեմիրճյանը և ուրիշներ:

Այստեղ էլ, սակայն, բախտը երկար չժպտաց շնորհալի պատանուն: Մշեցու իր արյամբ նա ժառանգել էր արևմտա-

հայի ազատաբաղձ ոգին և բուռն ու տաքարյուն բնավորությունն ունենալով՝ չէր կարող չմասնակցել ուսանողության արդարացի խռովությանը՝ ուղղված ճեմարանի այդ ժամանակվա պահպանողական-հետադիմական ղեկավարության գործելակերպի դեմ: Այդ պատճառով էլ նրան ութսուն այլ ուսանողների հետ հեռացնում են ճեմարանից: Այնուամենայնիվ, երջանկահիշատակ Խրիմյան Հայրիկի միջնորդությամբ, հատկապես արևմտահայ ուսանողներին, ընդունում են Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը՝ ուսումը շարունակելու: Ժամանակի հայ մշակույթի կենտրոնում աննկատ չի մնում շնորհաշատ պատանին: Նախ՝ նրան արտոնվում է ապրել դպրոցի գիշերօթիկից դուրս: Շուտով նա ծանոթանում է Ղազարոս Աղայանի և վերջինիս միջոցով նաև՝ Հովհաննես Թումանյանի ու Գևորգ Բաշինջաղյանի հետ՝ դառնալով նրանց ընտանիքների ցանկալի հյուրը: Արմենակն իր քաղցրահունչ ձայնով հմայում է հայոց մեծերին: Նրա երգչական արտակարգ ընդունակությունները գրավում են նաև դպրոցի երաժշտական ուսուցիչ մեծանուն Մակար Եկմալյանին: Մեծ երգահանի մոտ, իր դասընկեր երգիչ Տիգրան Նալբանդյանի հետ, Արմենակը մշակում է իր ձայնը:

Թիֆլիսը նոր աշխարհ էր երիտասարդ երգչի համար: Նա այստեղ ճարավորություն ունեցավ հաճախել թատերական ներկայացումների, լինել օպերայի գրեթե մշտական այցելու: Արվեստի այդ օջախներում տեսածն ու լսածը միանգամայն նորություն էին նրա համար և մեծապես նպաստեցին նրա բարձր գեղագիտական ճաշակի ձևավորմանը:

1896 թվականին Շահմուրադյանն ավարտում է Ներսիսյան դպրոցը: Եկմալյանը նրան դարձնում է երգչախմբի իր օգնականը, որից հետո նա նշանակվում է հայոց եկեղեցու երգչախմբի ղեկավար: Եկմալյանն Արմենակին վստահում է խումբը պատրաստել Պետերբուրգ մեկնելու՝ իր ղեկավարությամբ, բայց երգիչը հրաժարվում է, քանզի երազում էր անցնել Եվրոպա՝ ուսումը շարունակելու: Այս անգամ էլ, սակայն, չի իրականանում նրա երազանքը: Արևմտյան Հայաստանում, ընդամին նաև հայրենի Մուշում, սկսվել էին համիդյան ջարդերը: Սուլթանական վայրագությունների դեմ բողոքի ալիք էր

բարձրացրել նաև թիֆլիսահայությունը: Արմենակն, ինչ խոսք, չէր կարող անտարբեր մնալ և դարձավ բողոքի եռանդուն մասնակիցներից մեկը: Ցարական ոստիկանությունը ձերբակալում է նրան, ետում Մետեխի բանտը և ապա, որպես թուրքահպատակի, հանձնում է թուրքական կառավարության ձեռքը: Բանտից բանտ փոխադրվելով՝ նա հասնում է Կարս, ուր մնում է ութ ամիս: Այդ տխուր օրերին Արմենակի համար միակ սփոփանքը երգն էր, որով նվաճում էր հսկիչների բարյացակամությունը և բախտակիցների սերը: Նրա երգի ձայնը դուրս է գալիս բանտի պատերից և հասնում թուրք հյուպատոս Ֆուադ բեյին, որն էլ նրան ազատ աքսոր է ուղարկում հայրենի Մուշ: Այստեղ Արմենակը երկու տարի ուսուցչություն է անում Սուրբ Կարապետի ժառանգավորաց վարժարանում: Այնուհետև փոխադրվում է Կարին (Էրզրում), ուր չորս տարի տեղի երկսեռ վարժարանում դասավանդում է երաժշտություն, հայոց լեզու ու հայ ժողովրդի պատմություն, ղեկավարում իր իսկ ստեղծած երգչախումբը: Իր սանի ճակատագրով մտահոգված Կոմիտասը այդ օրերին Էջմիածնից Կարին լուր է ուղարկում. «Ասացեք Արմենակին՝ չնստի մնա Էրզրում, պետք է անպայման Իտալիա երթա՝ ձայնը մշակելու»: Արմենակն ինքը, ինչպես նշեցինք, մշտապես երազում էր Եվրոպա անցնել՝ ուսումը շարունակելու, սակայն նա ազատ աքսորական էր և առանց թույլտվության Թուրքիայի սահմանն անցնել չէր կարող: Վերջապես նա իմանում է, որ շուտով Փարիզում տեղի է ունենալու հայ մեծահարուստ Մանթաշյանի ծախսով կառուցված հայկական եկեղեցու օծման արարողությունը, որը լավ առիթ էր փարիզահայ հասարակությանն իր ձայնով ներկայանալու: Եվ նա դպրոցի ղեկավարության միջնորդությամբ, բուժման մեկնելու նպատակով, ձեռք է բերում լիբանանյան անձնագիր և իր վաստակած գումարի մեծ մասը թողնելով մորն ու այրի քրոջը՝ ֆրանսիական նավով Լիբանանի փոխարեն մեկնում է Փարիզ:

Եկեղեցու օծման արարողությանը մասնակցող երգիչների մեջ Շահմուրադյանը ճանաչվում է առաջինը, և ատենապետ Եգնայանը նրան առաջարկում է ղեկավարել եկեղեցու երգչախումբը՝ որպես դպրապետ: Այլ ելք չունենալով՝ Արմենակը

համաձայնում է: Շնորհալի երգիչն անմիջապես գրավում է փարիզահայ գաղութի ուշադրությունը: Նրան առաջինը օգնության ձեռք է մեկնում Կոմիտասի ապագա սանուհի Մարգարիտ Բաբայանը: Վերջինս սիրով Արմենակին ֆրանսերեն լեզվի և երաժշտության տեսության դասեր է տալիս, իսկ Արշակ Չոպանյանը նրան մասնակից է դարձնում իր կազմակերպած գրական երեկույթներին, որտեղ նա հանդես է գալիս հայ ժողովրդական երգերի կատարմամբ: Ի դեպ, Չոպանյանին ուղած իր մի նամակում Կոմիտասը հայրաբար գրել է. «Խընդրում եմ լավ խնամիր Արմենակիս»...

Արդեն որոշակի ճանաչում ունեցող Շահմուրադյանը 1902 թվականին ընդունվում է Վենսան դը Էնդիի մասնավոր երգի դպրոցը: Որոշ ժամանակ անց, իր ընկերների խորհրդով, նա դիմում է աշխարհահռչակ երգչուհի Պոլին Վիարդոյին՝ իրեն լսելու և կարծիք հայտնելու խնդրանքով: Արդեն ութսունամյա երգչուհի մանկավարժը ոչ միայն լսում է, այլև սիրով հանձն է առնում երկու տարի անվճար պարապել նրա հետ: Մեծ երգչուհին Արմենակին վերաբերվում է մայրական գուրգուրանքով և այնքան է սիրում իր շնորհալի սանին, որ երկու տարի անց, մահկանացուն կնքելիս, իր հարազատների թվում ցանկանում է վերջին հրաժեշտը տալ նաև հայ երգչին:

Փարիզի կոնսերվատորիայի ավանդական մրցույթին, որին մասնակցում էին տարբեր կուրսերի ուսանողներ, հանդես է գալիս նաև առաջին կուրսեցի Արմենակ Շահմուրադյանը՝ ֆրանսիացի կոմպոզիտոր Է. Մեհյուլի «Ժոզեֆ» («Հովսեփ») օպերայի գլխավոր հերոսի մի մեներգով («Իզուր Փարավոն»): Դեռ մրցույթը չավարտված, Փարիզի օրաթերթերն իրենց մեկնաբանություններն են տալիս. «Ի՜նչ հրաշալի օրկան: Ի՜նչ հազվագյուտ «թեմպր» և ի՜նչ հրապույր՝ ոլորումներուն մեջ: Այս գնահատման մեջ ոչինչ կա չափազանցյալ», - գրում է «Կոմեդիա» թերթը Շահմուրադյանի մասին: Իսկ «Գոլուան» այսպես է արձագանքում. «Շահ-Մուրատյան եթե դեռ չունի որոշ արտասանություն մը, կ'երգե սակայն զգացմամբ. ունի կրակ, փայլ, անկեղծություն»: Ավելի բնորոշիչ է «Էկլերի» կարծիքը. «Մրցակիցներեն մին միայն ունի բավական նշանակելի ձիրքեր, որպեսզի կարելի ըլլա այժմեն իրեն խոստանալ

փայլուն ապագա մը. այն է Պ. Շահ-Մուրատյան»: Մեկ այլ թերթ՝ «Լը Մենեստրելը», եզրափակում է. «Շահ-Մուրատյան ինձի համար այս մրցման լավագույն մասնակցողն է»: Այս մրցույթն ամփոփելիս առաջին մրցանակ չի տրվում ոչ ոքի, իսկ երկու երկրորդ մրցանակներին արժանանում է Շահմուրադյանը:

Հաջորդ՝ 1909 թվականի մրցույթի ժամանակ հայ երգիչը դարձյալ երկրորդն էր: Իր սանի գործունեությանը հետևող և նրա հաջողություններով ուրախացող Կոմիտասը 1908-ին Փարիզից Սպիրիդոն Մելիքյանին գրած նամակում հրճվանքով նշել է, որ Շահմուրադյանը «Փարիզի երաժշտանոցի ծաղիկն է դարձել»:

1910 թվականին Շահմուրադյանը փայլուն ցուցանիշներով ավարտում է կոնսերվատորիան, միաժամանակ արժանանում է երգեցողության երկրորդ և օպերային երգչի առաջին մրցանակին: Փարիզի աշխարհահռչակ Մեծ օպերայի տնօրինությունը երիտասարդ, խոստումնալից երգչի հետ պայմանագիր է կնքում: Վերջապես կատարվում է նրա տարիների երազանքը. նա դառնում է նշանավոր օպերայի պաշտոնական երգիչ: Ինչպես ուսումնառության, այնպես էլ հետագա տարիներին Շահմուրադյանը անընդմեջ նյութական օգնություն է ստանում հայ մեծ բարերար Ալեքսանդր Մանթաշյանից, Փարիզի հայկական եկեղեցու հոգաբարձուների ատենապետ Եգնայանից և Ներսես Խան Ներսիսյանից:

1911 թվականի հունվարի 27-ին տեղի է ունենում Շահմուրադյանի առաջին բեմելը Գունոյի «Ֆաուստ» օպերայում, Ֆաուստի դերակատարումով: Ժամանակի ֆրանսիական մամուլից մեզ են հասել Շահմուրադյանի այդ օրերի ելույթների վերաբերյալ բազմաթիվ արձագանքներ: Ահա դրանցից երկուսը. «Երիտասարդ թենորը շատ սիրուն ձայնով մ'օժտված և արդեն իսկ ուշագրավ արվեստի մը տիրացած, հասարակության ծափերը խլեց քանի քանի անգամ» («Էքո դը Պարի»): «Իր բարեձև արտաքինը, իր համակրելի ձևերը իրեն համար կը կազմեն բեմական ձիրքեր, զոր փորձառությունը իրենց կատարելությանը պիտի հասցնե: Իր գտած հաջողությունը շատ բուռն եղավ» («Լը պըտի Պարիզիեն»):

Փարիզի մամուլի և երաժշտասեր հասարակության պահանջով, հայ երգչի մասնակցությամբ «Ֆաուստ» օպերայի ներկայացումը կրկնվում է մի ամբողջ ամիս: Ունկնդիրներից ոմանք Շահմուրադյանին կնքում են «Հայկական Կարուզո» անվամբ: Նա միաբերան համարվում է այդ օրերի Ֆրանսիայի «ամենաթովիչ տենորը»: Առաջին հաջողությունից ոգևորված՝ Շահմուրադյանը եռանդուն կերպով շարունակում է պատրաստել ևս այլ դերեր...

***

Կոմիտասը, ինչպես տեսանք, ուշի ուշով հետևում էր իր սանի հաջողություններին և Բաբայան քույրերի միջոցով կապ էր պահպանում նրա հետ, մասնակից էր դարձնում նրան իր համերգներին: Շահմուրադյանը ուսումնառության բոլոր տարիներին կատարելագործում էր հայ ժողովրդական երգերի իր կատարումները՝ ընդօրինակելով Կոմիտասին, պահպանելով նրա սկզբունքները կատարողական արվեստում:

1906 թվականին Կոմիտասը Փարիզում մեծ համերգ է տալիս. այդ համերգին Բաբայան քույրերի հետ միասին իր մասնակցությունն է բերում նաև Շահմուրադյանը: Համերգն անցնում է աննախադեպ հաջողությամբ, որի մեջ Կոմիտասից հետո իր աննուրանալի մասն ուներ Շահմուրադյանը: Համերգային այդ համագործակցությունը մեծ ուսուցչի ու նրա արժանավոր սանի միջև շարունակվում է նաև հետագայում: Կոմիտասի աշակերտուհի Աղավնի Մեսրոպյանի վկայությամբ, «1908 թվից սկսյալ՝ Լոնդոնի մեջ տրադիցիոն կերպով կազմակերպված հայկական տարեկան մեծ համերգները, մեկ կողմ դնելով կլասիկ երաժշտությունը, տվին զուտ հայկական ժողովրդական երգեր ու պարեր: Կոմիտաս դարձավ Լոնդոնի ինչպես այդ, այնպես ալ մյուս բոլոր հայկական համերգներու առանցքը: Այդ համերգներու հաջողությունը ապահովելու համար հաճախ Փարիզեն կը հրավիրվեին Կոմիտասի հայտնի սան Արմենակ Շահմուրադյանն ու սանուհիներ Բաբայան քույրերը, վիրտուոզ ջութակահար Հայկ Կյուտենյանը»: Նույն Աղավնի Մեսրոպյանն իր հուշերում գրում է, որ Հարություն Սիմաո-

յանի կազմած և Կոմիտասի հավանությանն արժանացած «Մեսրոպյան քայլերգի» առաջին անգամ երգելու պատիվը Կոմիտասը շնորհել է Շահմուրադյանին: Արդեն հանրահայտ երգչի հրաշալի կատարումների ձայնագրությունները հասնում են Կ.Պոլիս: Այդ ձայնագրություններում երգչին նվագակցում է անձամբ մեծն Կոմիտասը: Այսօր էլ այդ ձայնագրությունները հիացմունք ու խանդաղատանք են առաջացնում ամեն հայի սրտում և անսահման սեր՝ մեծ երգչի անձի և վաստակի հանդեպ:

1912-1913 թվականներին Փարիզի Մեծ օպերայի երգիչ Արմենակ Շահմուրադյանը համերգներով հանդես է գալիս Կահիրեում, Թիֆլիսում, Բաքվում, Կ.Պոլսում և այլուր: Այդ օրերին Կոմիտասն իր շնորհաշատ սանի մասին Վահան Մալեզյանին հղած նամակում, գրում է. «Այժմ եգիպտահայերու պատվական հյուրն է ընտիր երգիչ Շահմուրադյանը, որու ունեցած աննախընթաց հաջողություններն ինձ անչափ ուրախացրին և կարծեմ իրավամբ, երբ օտարները մեր մասին գիտության և գեղարվեստի միջոցով է, որ լավ գաղափար կը կազմեն, և այդպիսի գործունեությունն անչինչ և քաղաքակիրթ դեր ունի...»

Հատկապես անմոռանալի է 1913 թվականին Կ.Պոլսի «Պըտի-Շան»-ի թատրոնում տրված մեծ համերգը, որի հաջողությանը մեծապես նպաստել է Շահմուրադյանն իր փայլուն կատարումներով: Ահա թե այդ մասին ինչ է գրում Աղավնի Մեսրոպյանը. «1913 թ. նոյեմբերի 3-ին, Պոլսո «Պըտի Շան»-ի թատրոնին մեջ Արմենակ Շահմուրադյանի տված շատ հաջող համերգի առիթով Կոմիտաս թևանցուկ բեմ գալով Շահմուրադյանին հետ, քանի մը զգացված բառերե վերջ՝ հանուն իր երգչախումբին, ոսկիե նրբակերտ խորհրդանշան մը նվիրեց անոր, և սրանը թղթաց ծափահարություններու տակ: Այդ օրը, նվագահանդեսին վերջավորության, կուլիսին մեջ, հուզական պատկեր մը ստեղծվեցավ. Կոմիտաս ողջագուրեց իր անցյալ ճեմարանական սան Արմենակ Շահմուրադյանը, մինչ այնտեղ հավաքված «Գուսան» երգչախումբի սաները և երաժիշտները ծափահարելով՝ թարմ ծաղիկներ կը սփռեին անոնց վրա... Հուզվեցավ Կոմիտաս՝ մեծ ուսուցիչը և իր նախ-

կին սանի՝ օրվա հերոսի ճակատը համբուրեց և ըսավ. «Իմ միակ փափագն է քեզ լսել մեր հայրենի օպերաներուն մեջ...» Հավանաբար Կոմիտասը նկատի ուներ իր ծրագրած և մասամբ արդեն գրված «Անուշ», «Սասնա ծռեր» և «Վարդան Մամիկոնյան» օպերաները:

Հիշյալ թատրոնում նույնպիսի հաջողություն է ունենում նաև երգչի մյուս համերգը՝ նվիրված հայ գրերի գյուտի 1500 և հայ տպագրության 400 ամյակին: Դա պոլսահայության այն երջանիկ ժամանակաշրջանն էր, երբ մշակութային միջոցառումներին իր մասնակցությունն էր բերում արևմտահայ մտավորականության ընտրանին՝ հանձինս Սիամանթոյի, Դանիել Վարուժանի, Ռուբեն Սևակի, Բյուզանդ Քեչյանի, Ռուբեն Զարդարյանի, Գրիգոր Զոհրապի, բժիշկ Տաղավարյանի և այլ երևելիների: Այդ համերգին ներկա էին գրեթե բոլորը...

1914 թվականին Կոմիտասը կրկին Փարիզում է: Երաժշտական միջազգային ընկերության համագումարում փայլուն դասախոսություն կարդալուց հետո Կոմիտասը Փարիզի հայոց եկեղեցում կազմակերպում է երաժշտական մի հավաքույթ, որտեղ Արմենակ Շահմուրադյանի, Մարգարիտ Բաբայանի, վերջինիս աշակերտուհիներ Գավանոցյանի և Մանոնիկ Բերբերյանի մասնակցությամբ տրվում է հայ երաժշտության մի հոյակապ համերգ: Այդ համերգի առթիվ երաժշտագետ Թովմաս Հարթմանը գրել է. «Ընորհիվ Հայր Կոմիտասի և օր. Մ. Բաբայանի և նրա աշակերտ Շահմուրադյանի՝ հայ երաժշտությունը անասելի ընդունելություն գտավ համագումարում»:

Աշխարհակործան և հայաջինջ պատերազմի տարիներին Շահմուրադյանն անցնում է Ամերիկա: Իր մեծ ուսուցչի երգչական առաքելությունը շարունակելով՝ նա շրջում է աշխարհի գրեթե բոլոր հայ գաղթավայրերը և հայրենակարոտ սրտերին հույս ու մխիթարություն է տանում հայ երգի իր ոգեշունչ կատարումներով: Նրա վեհ ու հզոր տենորը հնչում է Բոսթոնում, Սան-Ֆրանցիսկոյում, Ֆրեզնոյում, Դեթրոյթում, Նյու Յորքում, Մանչեսթրում, Լոնդոնում, Ժնևում, Ցյուրիխում, Բրյուսելում, Անտվերպենում, Բաղդադում, Թեհրանում, Կալկաթայում և այլուր: Ահա ամենևին էլ ոչ լրիվ ցանկն այն քա-

ղաքների, որտեղ բեմերից հնչել է նրա քաղցրահունչ, ոգևորիչ ու ապրեցնող հայաշունչ ձայնը: Այդ համերգների մասին ժամանակին հիացմունքով են գրել գաղթօջախների հայ մամուլը, ինչպես նաև այլազգի քննադատները...

Աշխարհով մեկ թափառելուց հոգնած ու դադրած, արդեն խարխլված առողջությամբ, նյութապես խիստ անապահով, Շահմուրադյանը 1930 թվականին վերադառնում է Եվրոպա, գալիս է Փարիզ և ամենից առաջ շտապում է տեսնել հոգեբուժարանում տառապող իր մեծ ուսուցչին՝ Կոմիտաս վարդապետին: Հիվանդասենյակում, ուր Կոմիտասն էր պառկած, բժշկի խորհրդով Շահմուրադյանը երգում է «Հայաստան, երկիր դրախտավայր» հոգեցունց երգը, որի առաջին քառատողն իսկ մոգական ազդեցություն է ունենում Կոմիտասի մթագնած ուղեղի վրա: Նա ճանաչում է իր սիրելի աշակերտին, վեր է կենում անկողնուց, ձեռքերը տարածում գրկելու համար և բացականչում միակ բառը. «Արմենա՛կս...»: Այդքանը միայն: Կոմիտասն այլևս ո՛չ ճանաչում է, ո՛չ հիշում և ո՛չ էլ պատասխանում է Շահմուրադյանի հարցերին: Գնում է լուսամուտի մոտ, դեմքը հպում է ապակուն և խռովածի տեսք ընդունում: Շահմուրադյանը երկար ժամանակ չի կարողանում թողնել հիվանդասենյակը: Եվ վերջապես հուսահատ ու անհուն ցավով թողնում է Կոմիտասին իր չարչարանքի հետ և դուրս գնում: Փողոցում կյանքն էր իր բազում հոգսերով ու ուրախություններով, սակայն հալածական ու պանդուխտ Շահմուրադյանի սիրտը նման էր «էն փլած տներ»...

Շատ չանցած, անձնական ու համազգային վիշտը ցնցում են մեծ երգչի հոգին՝ երևան բերելով հոգեկան խանգարման և հիշողության կորստի առաջին նշանները: 1935 թվականին, շուրջ 20 տարիների հոգեմաշ տառապանքից հետո Փարիզի հոգեբուժարանում Կոմիտասը կնքում է իր մահկանացուն: Հորը կարգին չտեսած, հայր չունեցած Շահմուրադյանը որպես անձնական մեծ ողբերգություն է տանում Կոմիտասի մահը, որն էլ իսպառ խորտակում է նրան: Արամ Պետրոսյանն իր հուշերում գրում է. «Շահմուրադյանը, որ իր լույսը կը ստանար Կոմիտասի ակեն, վարպետին մահեն ետք խավարեցավ բոլորովին: Կոմիտասի հուղարկավորության առտուն միասին

էինք եկեղեցին: Չէր ուզեր բաժանվել իր մեծ գործակցին քովեն, որուն հետ այնքան թանկագին պահեր ապրած էր նախապատերազմյան երանելի օրերուն: Լուռ, մտամփոփ, աչքերը կիսափակ և ձեռքերը խաչաձևած կը խոկար ծերունին: Հետո հարեց. «Տեսնու՞մ ես վարդապետին, նրա ֆիզիկական գոյությունը վերջ գտած է, բայց ինչ որ կը մնա նրանից, դա իր կատարած գործն է»: Գործ... մի՞թե ինքն ալ մաս չէր ունեցած ատոր մեջ, մի՞թե քաղքե քաղաք, գաղութե գաղութ չէր տարածած հայ շունչը, հայ հոգին՝ իր դյութական ձայնով բազմություններ խանդավառելով»:

Շահմուրադյանին, ճակատագրի նախախնամությամբ, վիճակված էր անցնել իր ուսուցչի կյանքի ճանապարհը ոչ միայն որպես հայ երգի երախտավոր, այլև՝ կյանքի վերջում հոգեկան հիվանդ լինելու նրա դժբախտությունը ունենալ: 1939 թվականի աշնանային մի օր ընկերներն այցելում են նրան և խնդրում, որ իրենց համար երգի «Հայաստանը»: Վերջին ճիգերը թափելով, հյուծված ու պաղ աչքերով, նվաղուն ձայնով հիվանդը վերջին անգամ՝ առանց բառերը հիշելու, երգում է և... ընդմիշտ լռում: Բայց ո՛չ, ինչպե՞ս կարող է ընդմիշտ լռել երգիչը և այն էլ՝ Շահմուրադյանը... Եվ այսօր, աշխարհի այն եզերքներում, ուր թեկուզ մեկ հայ կա, հնչում է նրա հայրենակարոտ երգը:

Նա մեզ հետ է, մեր սրտերում, մեր հոգում հավերժ կենդանի՝ իրեն ծնող ժողովրդի պես...

Շահմուրադյանի տիկնոջ՝ ֆրանսուհի Մարգարիտ Սալլեի վկայությամբ, երգիչը հոգին ավանդել է հանդարտ ու առանց ցավի: Մահվանից առաջ հրավիրված է եղել մի հայ քահանա, որը կատարել է հոգեհանգստի արարողությունը հանգուցյալի բնակարանում: Երգչի մարմինը հնարավոր չի եղել տեղափոխել Փարիզի հայկական եկեղեցի, որովհետև պահանջվող 5000 ֆրանկ գումարը չի ճարվել: Հուղարկավորության հետ կապված ծախսերը, ինչպես նաև գերեզմանին հուշաքար դնելու համար անհրաժեշտ միջոցները տրամադրել են Ամերիկայում ապրող տարոնցի հայրենակիցները. նրանք են նաև հոգացել Շահմուրադյանի ընտանիքի ապրուստը երգչի կյանքի վերջին տարիներին:

Մեծ երգչի գերեզմանը գտնվում է Փարիզի Ալքեոյի արվարձանի գերեզմանատանը, բարձունքի վրա և իշխում է շրջապատին այնպես, ինչպես նրա հուժկու և քաղցրալուր ձայնը՝ բազմահազար ունկնդիրների հոգիներում: Շահմուրադյանը մի ժամանակ իր հզոր ու թովիչ ձայնով նվաճել էր քմահաճ Փարիզը, փառքի էր հասել արվեստների այդ մայրաքաղաքում, և որպես հատուցում այդ ամենի, Փարիզը նրա վաստակաշատ աճյունին մի փոքրիկ հողակտոր պարգևեց: Իսկ ե՞րբ մայր Հայրենիքը, որին այնքա՜ն ջերմորեն սիրում էր Շահմուրադյանը, պիտի փոխադրի նրա աճյունը և մի փոքրիկ տեղ հատկացնի նրան Կոմիտասի՝ իր մեծ ուսուցչի կողքին. Արմենակ Շահմուրադյանը դրան լիովին արժանի է:

ԽԱՉԻԿ ՍԱՖԱՐՅԱՆ

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Շահմուրադյան» անունին ծագման մասին որևէ տեղեկություն չկա: Սակայն ստույգ է, թե հենն ի վեր մեր ընտանիքը այդպես կոչված է ու եղած է մեծ և բազմամարդ: Ամբողջ Հայաստանի մէջ միայն երկու ընտանիք այդ անունը կը կրեն. մեկը՝ Ղարաբաղ (Շուշի), իսկ մյուսը՝ Մուշ (քաղաք): Պատերազմը ամեն ինչ սրբեց. այսօր, միայն ես և ուրիշ հոր եղբորս տղա մը (այժմ՝ Ամերիկա) մնացած ենք՝ երկրեն դուրս գտնվելուս շնորհիվ:

Հայրս՝ Սարգիս – զոր տեղացիք (հայ, թուրք, քյուրտ) Սըրգո կ'անվանեին, տաղանդավոր, աչքառու, բարի, ամենքեն հարգված դեմք մըն էր: Արհեստով դարբին, սերունդե սերունդ հասած էր իրեն այդ արհեստը: Երկու անգամ Պոլիս եղած ու աշխատած գործարանի մէջ իբրև չեֆ ... Իր անունը, համբավը ամբողջ Մշո աշխարհին բոլոր ազգաբնակչության ծանոթ էր: Վանք մըն էր մեր տունը,–սուֆրան բաց ամբողջ օրը, բոլորին առջև անպակաս, «միայն հավու կաթ կը պակսեր»...

Իր մասնագիտութենեն դուրս, հայրս չափազանց սիրահար էր աշուղական երաժշտության: Լավագույն աշուղի մը չափ գիտեր աշուղական գրականություն ու երաժշտություն, թեև լավ ձայն չուներ, սակայն գիտեր երգել և առիթ չէր փախցներ՝ հրավիրելու մեր տունը ուրիշ աչքի զարնող հայ աշուղները և նվագողները (զուռնա, դափ, տամպուրա)՝ առնվազն ամիս անգամ մը: Մեր տունը կը նմաներ Րաֆֆիի «Խենթ»-ի մէջ նկարագրված Ռես Խեչոյի տանը: Դժբախտաբար հորս վերջին քանի մը՝ տարիները աղեկ չանցան մեծ եղբորս պատճառավ, շատ երես առած, ամբարտավան, կերուխումի հետևող, ծախսող, որևէ ուխտագնացություն ձեռքե չէր փախցներ ու ամեն անգամ գրեթե կռիվներու պատճառ կը դառնար, չափազանց ու աչքի զարնող ֆիզիքական ուժի տեր լինե-

լուն՝ ուրիշների գլուխը կամ թևը, քիթն ու բերանը պատռելուն կը բանտարկվեր: Խեղճ հայրս ալ ամեն անգամն ահագին կաշառք տալով՝ հազիվ կրնար ազատել զինքը: Գրեթե անոր պատճառած վշտի մեջ մեռավ հայրս 1889 Մեծ պահքին: Հորս վերջին տարիների միակ գուրգուրանքի առարկան ես էի: Դեռ երեք-չորս տարեկան եղածատենս, երբ թաղին վարժարանի ուսուցիչը մեզ կ'այցելեր, ի միջի այլոց, քրոջս տղուն և երկրորդ եղբորս (որուն ծնողքս կը պաշտեին, այնչափ որ համեստ, ամոթխած և միակ զեղեցիկ տղան էր մեջերնիս) երգել կուտար, ես ալ առանց հրամանի կը կանգնեի անոնց քով ու որչափ կարող էի՝ կը պոռայի... Հյուրերը խնդալեն չէին դադրեր, սակայն մայրս վրա կը հասներ ու աղեկ ծեծ մը տալով՝ դուրս կը հաներ զիս սենյակեն...

Հայրս խելացի և բարի մարդ էր, արդեն այդ հասակեն ի վեր նկատած էր, որ տարօրինակ ձգտում մ'ունիմ երգելու: Ինքը լավ տավիղ կը նվագեր, զեղեցիկ, սեղեֆով զարդարված փոքրիկ պուլղատի մը ուներ: Նշմարելով, որ ես միշտ պուլղատին կը փնտրեմ, ուր որ նվագարանի ձայն մը լսեմ, հոն կը վազեմ, մորս կ'ըսեր. «Կնի՛կ, այս մեր Արմոն չափազանց սիրահար է երգի ու նվագի, պուլղատին այնպես տեղ մը պահե, որ չգտնե, շատ կը վախնամ, թե ապագային չալղըճի մը ըլլա...»: Որովհետև Մուշ այդ տարիներ նվագող մը չալղըճի կը համարվեր: Սակայն, երբ հինգ-վեց տարեկան էի արդեն, հայրս թաղին ուսուցչին խնդրեց, որ հոգ տանի ինձ եկեղեցական երգեցողություն սորվեցնելու: Կը հիշեմ, շատ հստակորեն, առաջին անգամ սոլո երգած կտորը՝ «Ամեն, հայր սուրբ» 2-րդ ձայնեղանակով: Ասկե զատ, մեր տան դրացի մեկ տղայեն (որը լավ ձայն ուներ, կ'երգեր ու կը հաճախեր Միացյալ ընկերության դպրոց) խնդրեց, որ ինձ սորվեցնե երգեր՝ ազգային, եկեղեցական:

Խրիմյան Հայրիկը Վանից աքսորված ատեն, եթե չեմ սխալեր՝ 1886-ին, Մուշ անցավ: Քաղաքիս երեք եկեղեցիներ այցելեց ու քարոզեց: Գրեթե ութ-ինը տարեկան էի (մորս ըսելով՝ ռուս-թուրք պատերազմի ծնունդ եմ), այդ ատեն արդեն լավագույն ու աչքի զարնող ձայն ունեցող և սոլո երգողն էի: Ուր որ Հայրիկը կը խոսեր, հոն զիս կը տանեին երգելու: Մեր

թաղի եկեղեցին (սուրբ Մարինե թաղ) մեջն էր, որ Հայրիկը քարոզին մեջ ըսավ. «Այս բթովը պիտի օծեմ հայ թագավորը», - և դառնալով Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանին՝ ըսավ. «Խա՛, խայոց Խայրիկին հակառակորդ, նախանձող եկեղեցականները շատ կան, տեսե՛ք, սիրելի ժողովուրդ, մեր Գաբեգինն ալ կ'ուզե խայոց Խայրիկ ըլլալ...», - ժպտախառն հեգնանքով մը:

Մշո Միացյալ ընկերության դպրոց մտնելուս թվականը կը զուգադիպի Մկրտիչ Սարյանի (ընդհանուր տեսուչ) վերջնական մեկնումի հետ... Միացյալի մեջ անցուցած դպրոցական կյանքիս լավագույն րոպեները այդ շրջանին կը պատկանեն ու կը սկսեն: Առաջին անգամ Տամատյանն եղավ միակ անձը, որ մասնավոր ուշադրություն դարձուց վրաս ու դուրգուրաց: Նկատելով, որ գլխս ամենուրեք այդ պատանի (եթե չըսեմ մանուկ) հասակիս մեջ կը տանեն երգելու հարսանիքներու, եկեղեցիներու, մեռելաճաշի, խնճույքներու, վանքերու, եկեղեցիի օծման և այլն, և այլն: Օր մը թուրքերենի ուսուցիչ՝ արզուհալճի կարապետ էֆենտիի տունը հրավիրված էին բոլոր ուսուցիչները, ինչպես և Տամատյանը (գլխս ալ կանչած էր, որ երգեմ): Բնավ չեմ մոռնար, կամացուկ մը գլխս կանչեց մեկուսի ու ըսավ. «Արմենա՛կ, կ'արգելեմ քեզ այսուհետև երթալ հոս և հոն երգելու, մեղք է ձայնդ, կրնա պատահել, որ չար մարդու մեկը թունավորե ձայնդ...», - և ասոր նման կարգ մը խրատականներ: Տամատյանը գործնական կերպով գնահատեց ձայնս մասնավորապես ու դպրոցական աշխատությունս՝ Միացյալի Պոլսո Կ. վարչությենեն բերել տալով ոսկե խաչ մը իր վկայականովը... Իր տեսչության օրովը, անգամ մը, սուլթանի տարեդարձի օրովը հրավառություն պիտի ըլլար վարժարանում, այդ առթիվ հրավիրված էին կառավարական բարձրաստիճան պաշտոնյաները՝ դպրոցի ուսուցչության, աշակերտության հետ: Ես ալ, փոխանակ դպրոցը երթալու, մութ կոխած առեն կը բարձրանամ դերեզմանատունը (որը լեռան լանջին վրա գտնվելուն՝ կ'իշխե քաղաքին) ու կը սկսեմ երգել ազգային հեղափոխական երգեր: Ի՞նչ զարմանալի զուգադիպություն մը. «Ջար սուլթանի ոսկե թախտը ջարդվեցավ, վայր իննկավ, թախտի տակից հազար ազգաց ազատու-

թյուն ծագեցավ...», – երգած պահուս, կառավարական պաշտոնյաները կանգ կ'առնեն փողոցին մէջ ու զիս կը լսեն աղեկ մը: Երբ ընդհանուր դատախազին կը թարգմանեն ըսածս, նախ կը հայհոյե... ու հետո մինչև վերջը կը կենա, զիս կը լսե ու կ'ըսե. «Ի՜նչ գեղեցիկ ձայն...», – դպրոցը հասնելուն պես կը պատմե Տամատյանին:

Միացյալի աշակերտուհյունս կը զուգադիպի ազգային վերածնութեյան և մասնավորապես հեղափոխութեյան սկզբնական շրջանին: Եթե Գամառ-Քաթիպան և ուրիշ հեղափոխական, ազգային ոգով գրողները հայ կյանքը օժտեցին հեղափոխական իրենց երգերովը, սակայն տարածողները, իբրև արդի դարու աչուղներ (տրուպատուր), ես ու ինձիպեսներ եղան այդ կյանքին ծնունդը՝ անով անած և մեծցած լինելով: Եկեղեցական երգերեն դուրս Մշո և շրջակայքին մեջ երգված երգեր էին՝ «Ձայն տուր, ով ծովակ», «Թե հայրենյաց», «Ձարթի, որդյակ», «Մեզի մոռցավ», «Աղոթարան բացվեցավ», «Ի՞նչ անենք, ամոթ այդպես ասողին», «Բամբ որոտան» «Սիփանա քաջեր», «Ի զեն, հայեր», «Զեյթունցիներ», «Տալվորիկ», «Մեր սիրուն վայելչական տեղեր», «Հիմի՞ էլ լռենք», «Ազատութեյան այս վառ սերը», «Ազատն Աստված», «Ի բյուր ձայնից», «Հայ ապրինք» և այլն, և այլն:

Իմ ձայնագրութեյան ուսուցիչս եղած է մշեցի պրն. Կարապետ Մալխասյան, որը իր լավ երաժշտական կրթութեյունը առած է Էջմիածին՝ Ժառանգավորաց վարժարանին մեջ: Ձափազանց նախանձոտ և չար մարդ մըն էր, իրապես չէր ուզեր հիմնովին սորվեցնել, որպեսզի չըլլա, թե իր հացը ձեռքեն խըլեն... Ինձմե ավելի մ'ընդունակ (եթե ըսեմ՝ արտագա կարգի, համեստութեյան դեմ գործած չեմ ըլլար) աշակերտ ունեցած չէր, հազիվ թե տարրական գիտելիքները սորված իրմեն, ինքն իրենս, ինքնաչխատութեյամբ այնչափ առաջ գնացի, որ իրմե շատ ավելի ազատորեն կը կարդայի նոթյան և կ'երգեի ամեն ինչ ալ՝ եկեղեցական երգեր, մեղեդի, չարական, արտասանութեյուն, առավոտյան, երեկոյան, զի թե Բերդակի հայերու երգեր...

12 տարեկան հասակիս մեջ, ինչ որ երգվեր կամ նվագվեր, կարող էի հեշտորեն ձայնագրել:

Հորս մահվանե ետքը մեծ եղբայրս հորս ունեցած առնելիքները գանձեց հետզհետե ու կերավ, զիս և փոքրիկ քույրս մորս հետ երեսի վրա ձգած՝ առանձին ապրեցավ: Վիճակնիս լավ չէր, ունեցած կալվածքները (երկու խաղողի այգիներ) մայրս չէր կարող մշակել տար: Միացանք մեծ քրոջս ու իր ամուսնու հետ. պատվական մարդ, մեզ նայեց իր հարազատ զավակներու պես՝ բարեկեցիկ կյանք մը չունենալով հանդերձ:

Խարախանյանի առաջնորդությունը կը զուգադիպի այդ թվին (1889-ին): Աբրահամ էֆ. Հախիկյան, հեռվեհեռու ազգական, քաղաքային ժողովո անդամ, Խարախանյանի ուշադրությունը կը հրավիրե վրաս ու կը խնդրե հարկ եղած պաշտպանությունը: Հաջորդ դպրոցական տարեշրջանին կը ղրկե Մշո սբ. Կարապետի ժառանգավորաց վարժարան, ուր տարի ու կես կը մնամ: Հակառակ աշակերտ վիճակիս, տղայոց երգեցողության դաս կուտամ ու եկեղեցվո զարդը կը լինեմ: Վանական կյանքը չափազանց կազդե վրաս, կը զզվեմ, երկրորդ տարեշրջանի կեսուն, հակառակ դպրոցի վարչության, վանքի փոխանորդի և Խարախանյանի կամքին, ձմեռ ատեն, քաղաքը (Մուշ) կը մեկնեմ ու անմիջապես Միացյալի վարժարանը կը մտնեմ:

Խարախանյան իրեն հատուկ բարյացկամ քնավորությամբ կը ներե ինձ: Մեկ կողմեն՝ դպրոցը կը հաճախեմ, մյուս կողմեն՝ եկեղեցին կ'երգեմ ու նյութապես կը վարձատրվեմ: Ամեն Վարդավառի և Աստվածածնա տաղավարներուն Սուրբ Կարապետի վանք կուգային ուխտավորներ՝ Տաճկաստանի, Ռուսաստանի ամեն կողմերեն, մինչև Խրիմեն, Հայ Նախիջևանեն՝ մոտ 20-30 000 բազմություն: Խարախանյան զիս հետը կը տաներ ընդհանրապես դիշեր ատեն՝ կառավարական ոստիկաններ հետերնիս: Երբ վանքի «Հավատամք»ը կը հասնեինք, գրեթե ժամ մը հեռավորության վրա, կ'ըսեր, որ երգեմ: Երգելես վերջը կը շարունակեինք ճամբանիս լեռն ի վեր: Վանքի դռան առջև հասած ատենին դուռները բաց էին արդեն ու վանական միաբանությունը, մարդիկ մեզ կը սպասեին: Սրբազանը կը հարցներ իրենց չատ անգամ. «Ինչպե՞ս գիտցաք մեր գալը»: «Արմենակի ձայնեն հասկցանք գալերնիդ», - կ'ըլլար

պատասխանը: Այդ տարիքիս մեջն իսկ, մոտավորապես 14 տարեկան, ճանչցված երգիչ մ'էի Մուշեն դուրսն իսկ՝ ուխտավորներուն շնորհիվ:

Մուշը, փողոցներեն անցած ատենիս՝ մեծ, պզտիկ, կին, աղջիկ մատով կը ցուցանեին զիս՝ մեկզմեկու ըսելով.. «Սըրգոի Արմոն»: Միայն Խարախանյանը չէր, որ մասնավոր ուշադրություն կ'ընծայեր ինձ, այլ ամբողջ քաղաքի հայրենակիցներս, որովհետև դպրոցիս մեջ՝ կարող, աչքառու աշակերտներեն էի և հրապարակին վրա, էն լավագույն և հազվադյուտ ձայնով ու երգելու կարողությամբ օժտված և տարօրինակ ընդունակություն ունեի ձայնական երաժշտության մեջ:

Խարախանյանը նյութական որևէ զոհողություն մը ըրած չէ ինձ, հակառակ իմ ընտանեկան գրեթե աղքատ վիճակիս, մինչդեռ ամենուրեք, ուր որ պատարագ կ'ըներ, իր փառքին համար կ'երգեի, հետևաբար դժվար չէր իմ այս արժանիքներովս գրավել հայրենակիցներուս հետ նաև Խարախանյանի ուշադրությունը: 1892-ին, երբ էջմիածնո ճեմարանի վարչությունը Տաճկահայ առաջնորդությանց կը դիմեր՝ որոշ թվով աշակերտներ ղրկել Գևորգյան ճեմարանին համար, Խարախանյանի առաջին ընտրելին ես եղա և Խնուսեն՝ Զաքարյան Հրաչյան՝ իմ սբ. Կարապետի Աստվածածնա վարժարանի ընկերներես... Ուխտագնացութենեն ետքը էրզրումցի Զաքյան և Սանթուրճյան ընտանիքներուն հանձնարարեց զիս, որ կոչելին ընեն՝ ապահով միջոցով մը ճամբու դնել զիս էրզրումեն մինչև էջմիածին: Էրզրումի ուխտավորներուն անծանոթ չէի, անոնք զիս լսած էին սբ. Կարապետի եկեղեցին, ամենքն ալ մասնավոր խնամք և գուրգուրանք կը տածեին վրաս: Նստած ձիս աղեկ չէր, կը կաղար, ամեն ատեն ետ կը մնայի ուխտավորներեն, որպեսզի կարավանեն ետ չմնամ, կը սկսեի երգել: Բոլոր ուխտավորներ, հարյուրե ավելի, կը կենային, մինչև որ զիրենք անցնեի, և այս կատակերգությունը կը կրկնվեր հաճախ:

Էրզրումեն անկարելի եղավ ինձ անմիջապես մեկնել: Փոլերան սկսված էր քաղաքին մեջ, քարանթինա կար, այնպես որ ստիպվեցա երկու ամիս մնալ:

Էրզրումի առաջնորդն էր, նույն ատեն, Ղևոնդ եպիսկոպոս Շիշմանյան՝ շատ հարգված ու սիրված... Ղևոնդ եպիսկոպոս ուժեղ ձայնով և խոսելու ընդունակությամբ օժտված եկեղեցական մըն էր՝ վերհիշված արժանիքներուց զատ: Ուխտավորներեն հասկցած էր իմ մասին, ամեն չաբաթ երեկոյան կամ կիրակի առավոտյան կը ստիպեր զիս եկեղեցի երթալ: Ավելորդ է ըսել՝ կարճ ժամանակի մեջ, ամենքեն ճանչցած, սիրված և ժողովրդական դեմքը դարձած էի Էրզրումին մեջ, այնպես որ եկեղեցվո թաղականությունը որոշեց զիս դնել եկեղեցվո իբր դպրապետ: Անշուշտ, կարելի բան չէր այդ: Երբ քարանթինեն վերցվեցավ, ռուսական չափառին ընկերակցությամբ (սուրհանդակ, որ հայ մըն էր) մեկնեցա Էջմիածին: Այսպես Խարախանյանի այս վերջին geste կուգար զիս ազատելու Տաճկաստան կոչված դժոխքեն, ուր պիտի մնայի գամված, շատ-շատ իբր տիրացու... Եթե որոշ դիրքի մը հասած եմ, շնորհիվ Խարախանյանին է, որուն կապված եմ հավիտենական երախտագիտական զգացումով մը: Համբույր իր հիշատակին:

Սահակ և Մեսրոպը, ինչ որ ըրին, չը պիտի կրնային ընել, թերևս, եթե Վռամշապուհ թագավորն չլիներ ու չտրամադրեր ամեն միջոց իրենց նպատակին հասնելու: Այդպես ալ Տամատյան և Մուրադ այնքան չպիտի կրնային իրենց հեղափոխական գործունեության (Տարոնո աշխարհի) մեջ դիմանալ և հաջողիլ, եթե Խարախանյանի պես մաքուր հոգի մը՝ ազգասեր, անշահախնդիր, անճնվեր եկեղեցական, իրենց տրամադրության զորավիգ չհանդիսանար նյութապես և բարոյապես...

Ամբողջ Պիթլիսի նահանգը հեղաշրջողը այդ երեքը եղան իբր հնչակյաններ: Վերջիններուն քայքայումեն ետեն՝ միայն 1896-ին դաշնակցականները եկան, պատրաստի հող գտան ինչպես Տարոնո, այնպես էլ ամբողջ Տաճկահայաստանի մեջ, ամենուրեք:

Ճեմարան ընդունված ատենս, տեսուչը Արիստակես եպիսկոպոս Սեդրակյանն էր՝ մշակական, հետևաբար ազատամիտ, Ռուսահայաստանի ամենեն աչքառու, լուրջ և պատկառելի եկեղեցաններեն մեկը: Ճիշտ է, որ կաթողիկոսական տեղակալը

Երեմիա եպիսկոպոսն էր, սակայն իրականին մեջ Արիստակեսի ազդեցութեան տակ, անոր տված հրահանգներու համաձայն կը կառավարեր վանքը:

Թեև ճեմարանի ուսուցչական կազմը կազմված էր ամեն հոսանքի տարրերե (մշակական, արձագանքական և նոր-դարական), իրականին մեջ մեծագույն մասը մշակականներ էին:

Տարի մը անընդհատ ազատամիտ աշակերտութիւնը ապրեցավ խաղաղ, մեղվաջան ու անխռով կյանքը՝ Սեդրակյանի ազատամիտ և գաղափարական վարչութեան տակ: Աշակերտութիւնը և ուսուցչութիւնը չափազանց սիրալիր ու մտերիմ միութիւն մը կը կազմեին իրար հետ: Երաժշտութեան ուսուցիչը Կարա-Մուրզան էր: Կյանքիս մեջ առաջին անգամ իր օրովը լսեցի քառաձայն երգեցողութիւնը: Հայկական ո՛չ ձայնագրութենե և ո՛չ ալ եկեղեցական երաժշտութենե կը հասկնար, բացի պատարագեն, զոր քառաձայն սովրեցուց մեզ և կ'երգեինք Մայր տաճարին մեջ՝ պատարագի ատեն: Ջափազանց տարօրինակ թվեցավ ինձ, կը կարծեի, թե «էչեր են որ կը պոռան այլանդակ ու աններդաշնակ...»: Սոլիստներն էին Գրիգոր Միրզայանը ու ես: Միրզայանը ուներ չատ քաղցր, երազուն, քնքուշ արևելյան ձայն մը: Դժբախտաբար այդ երազուն ձայնը դատապարտված էր ապագային կորսվելու, իր ըսածին նայելով՝ դիֆթերիտե:

Հայկական ձայնագրութեան տեսակետով ճեմարանը (Ռուսաստանին մեջ) զիս չէր գոհացներ, որովհետև ինքնակատարելագործումիս տիրացած էի անոր և արդեն դասապետ էի եկեղեցիին մեջ ու հետո ալ ընդհանուր դասապետ:

1893-ի աշնան էր, որ Հայրիկը – տարի մը առաջ ընտրված կաթողիկոս- եկավ խանդավառ ընդունելութեամբ մը: Օծումին բախտ ունեցա լսելու հայ նշանավոր թենոր Ն. Շահլումյանը՝ լավագույն դրամատիկ թենորներեն մեկը, զոր լսած եմ կյանքիս մեջ ամենուրեք: Բարձր, ուժեղ, գեղեցիկ թեմպրով մը օժտված, բայց ի՜նչ դժբախտութիւն, երբ Եվրոպային վերադարձին առաջին անգամ իր դեպյուն ըրավ Պետրոկրատի Մարինսկի Արքայական թատրոնում, orchestre-ին հետ չկըրցավ ընթանալ, լսողութեան պատճառավ, բնականաբար դուրս հանվեցավ թատրոնեն: Հետո ստիպվեցավ Պետրոկրատի հայ եկեղեցիին մեջ երգել...

Հայրիկը... օծումեն ետքը, երբ առաջին անգամ ճեմարանը այցելեց, բոլոր պաշտոնութիւնը, աշակերտութիւնը, ճեմարանի քառաձայն երգչախումբը՝ Կարա-Մուրզայի առաջնորդութիւնեմբ պաշտոնական հուզիչ ընդունելութիւն մը տվավ իր վեհափառին:

Իբրև մշեցի, Հայրիկի հոգիին խոսել տալու համար «Կռունկ» երգել տվին ինձ: Հայրիկը հուզված ըսավ. «Խա՛, ձագու՛կս, խաբրիկ Վանեն կ՚ուզես, Մուշեն կ՚ուզես...» և այլն: Բոլոր իր հետ եղողները հուզեց: Հետո հարցուց ինձմեն որ տեղացի ըլլալս, մշեցի ըլլալս դիտնալուն պես ըսավ. «Ա-սա՛ տեսնեմ, մշեցի լա՛ճ, այստեղի խաղողն լավ է, թե՞ Մշո»: Պատասխանեցի իրեն, թե Մշո լավ է, որովհետև կաչին շատ բարակ լինելու ու քաղցր, ուտելու համար մեկ հատիկ է: «Շատ աղեկ ըսիր, այստեղի խաղողի կաչիին պես մարդոց ալ կաչին հաստ է...»:

Այսպես, գրեթե երկու վայրկենի մեջ թե՛ այդչափ բազմութիւնը լացուց և թե՛ խնդացուց: Հետո ավելցուց. «Ահավասիկ Արիստակես եպիսկոպոս Սեդրակյան ամպոտ, խտացած քողով ծածկված դեմք մ՚ունի, բնավ անկարելի է կարդալ զինքը»: Այս հանդեսի հետևյալ օրը իմացանք, որ մեր սիրելի տեսուչը՝ Սեդրակյան սրբազանը, իր՝ առանց պատճառաբանյալ հրաժարականը տված է...

Հայրիկը կարապետ Կոստանյանն հրավիրեց՝ պահպանողական քլիքի խորհրդովը, որ երկու անգամ պաշտոնավարած էր ճեմարանում... Իրեն աչառու, խիստ (despotisme) regime-ի պատճառավ երկու անգամ խայտառակութիւնեմբ դուրս հանած են ճեմարանից աշակերտութեյան ըմբոստացումովը: Այս անգամ ալ Կոստանյանը նույն regime-ին հետևեցավ: Նախ՝ որ դպրոցի ուսուցիչներ, վերակացուներ, գրեթե սակավ բացառութեյամբ, կը կազմեին նոր-դարականներ, իրեն գաղափարակիցներ ու հլու հպատակներ: Աշակերտութեյան հետ (մեծագույն մասը՝ մշակական և նույնիսկ հեղափոխական չարժումներով հետաքրքրվող ու հետևող) սկսան խտրական ոգի գործածել, այնպես որ մշակականները կ՚անվանեին Այծեր, իսկ իրենց գաղափարակիցները (արժագանքականները, նոր-դարականները)՝ Ոչխարներ: Առաջիններու նամակները կը բացվեր,

կարդալէ եւ քը միայն տիրոջը կը հանձնվեր, իսկ Ոչխարնեբունը՝ ոչ: Եթե մշակական աշակերտ մը բարեկամ մը տեսնելու համար կ'երակի օրը հրաման ուզեր, կը մերժվեր, իսկ՝ par hasard արտոնվեր, դպրոցի ծառաներեն մեկը կը հետեւեր իրեն լրտեսելու:

Այսպես կարգ մը չտեսնված ու չլսված խստութիւններն ու աչառութիւնները կամաց-կամաց աշակերտներու դրդռութեան պատճառ դարձան ու կամաց-կամաց երթալով, ուռչելով վերջապես 1894-ի աշունին աննախընթաց պոռթկում մ'ունեցան:

150 աշակերտներեն 100-են ավելին մշակական անվանված Այծեր էին: Խոսք մեկ ըրած՝ դասադուլ ըրինք ու հարձակվեցանք, տեսուչեն սկսյալ, բոլոր պաշտոնյաներուն վրա... Մեր խռովութիւնը արձագանքվել էր վանքն ու վաղարշապատը: Հաջորդող կ'երակին (որոշած էինք) եկեղեցիեն եւ քը ուղղակի վեհարան երթալ ու Հայրիկին խնդրել, որ Կոստանյանն ու իր վարչութիւնը փոխել՝ պատմելով իրեն անճամբ վերջիններուս մեր հանդեպ ունեցած հակամանկավարժական արարքներն ու խստութիւնները: Իրոք, եկեղեցիեն եւ քը բոլոր խռովարարներս, 80-100 հոգի, դիմեցինք վեհարան: Նախապես կոահած ըլլալուն մեր մտադրութիւնը՝ 40-ի չափ թֆենկճիները... վեհարանի դռան առջեւ մեր հառաջ կտրեցին ու չթողուցին ներս մտնել: Այդչափ բազմութեան մը կրնայի՞ն դիմադրել, անշուշտ՝ ո՛չ... Հետեւյալ առավոտյան ճեմարանը ոստիկան զինվորներով շրջապատվեցավ, մեզ՝ բողոքող աշակերտներս շրջապատած դեպի բանտը առաջնորդեցին, ուր մնացինք քանի մը օր: Ցյունախառն անձրեւով ու կծու ցուրտ օր մը, հսկողութեան տակ, ճանապարհ դրվեցանք մինչեւ Երեւան: Առաջնորդարանին հանձնվեցանք, ուրկե պարտավոր էինք ցրվել տեղերնիս: Հայրիկը տաճկահայ ուսանողներուս կարգադրութիւն ըրած էր ուղղակի Ներսիսյան թեմական վարժարանը մտնելու ու այդտեղի տաճկահայերը՝ ճեմարան:

Մեր մեկնումեն առաջ, Ներսիսյանի հոգաբարձութիւնը որոշած էր եղել, որ ոչ մի տղա ներս առնուլ... ըլլա տաճկահայ կամ ռուսահայ, բայց որովհետեւ կաթողիկոսը հրամայած էր ու պնդած իր ըրած կարգադրութեան անպայման գործադ-

րութիւնը, լինելով վերին տեսուչ թեմական բոլոր դպրոցներու, ստիպված մեզ՝ տաճկահայերուս ներս առին, այդպիսով պատճառ դառնալով հոգեբարձութեան որոշումը փոխել տալ ու ռուսահայերու մուտքն ալ դիւրացնել...

Ներսիսյան վարժարան մտնելուս պես պրն. Եկմալյան տղաներեն հարցրած էր իմ մասին: Հակառակ որ սկզբեն ուզեցի խուսյս տալ, որովհետև վերջին դեպքերը իմ վրաս ազդած էին բավականին: Ներսիսյան վարժարան ընդունող (ճեմարանեն եկած) տաճկահայերեն ոմանք նախընտրեցին պիչերօֆիկ ըլլալ: Ոմանք ալ՝ ցերեկօֆիկ, ես վերջինը ընտրեցի: Վարժարանի հոգաբարձութիւնը վերջիններուս որոշ գումար մը կը վճարեր ապրուստի համար: Ես ալ վերջիններուս կարգին կը պատկանեի: Խորեն եպիսկոպոս Ստեփանեն Աստրախան մեկնելէ առաջ, իբր առաջնորդ, հոգաբարձութեան հետ խոսած էր, որ ինքը կը ստանձնե ինձ ապրուստի միջոց, ծախքերս հոգալ՝ ներկայացնելով իր գնդապետ եղբորը, որ ամեն ամիս կանոնավորապես տա նշանակված գումարը:

Մինչև չրջանավարտ ըլլալս, կանոնավորապես ստացա պետք եղած գումարը...

Իբրև աշակերտ միշտ աչքի զարնող եղած եմ և իբր երգիչ՝ ամենուն ծանոթ, ուր որ եղած եմ գտնվել: Եկմալյանի խումբին մեջ լավագույն սոլիստներ (մեներգող) էինք Տիգրան Նալբանտյան ու ես: Թեև Եկմալյանի խումբի ամեն մեկ աշակերտ այնչափ կլորթ ճաշակ ուներ, գեղեցիկ կամ միջին ձայնով գիտեր երգել:

Հայութիւնը իր բովանդակ կյանքին մեջ Եկմալյանի Ներսիսյան վարժարանի խումբի պես նմանը ունեցած չէ: Ռուս կրիթիկները գրած են, թե «Եկմալյանի խումբը ամբողջ մայր կայսրութեան եկեղեցական խումբերեն է՛ն աղեկներեն է»: Ամեն կիրակի Թիֆլիս վանքի եկեղեցին ու բակը խռնված էր ամեն ազգի երկսեռ բազմութեամբ, իր՝ Եկմալյանի քառաձայն խումբը կ'երգեր. հպարտ եմ ըսելու՝ վերջին տարին ու կեսը ես էի խումբին կառավարողը (dirigeur) և քանի քանի օտար ու հայ երաժիշտներ Եկմալյանի ընկերակցութեամբ եկած ու պատարագե ետքը չնորհավորած են զիս:

Երբ վարժարանը ավարտեցի, իմ տեղս հաջորդ տարվան չրջանի համար պաշտոնի կանչված էր հոգաբարձութիւնը

Խորէն Մուրադբեկյան... առաջնորդ Երևանի, սակայն Եկմալյանը գոհ չըլլալով իրմեն, զիս հեռագրով կանչեց, որ ստանձնեմ օգնական ուսուցչի պաշտոնը: Միջանկյալ ըսեմ, որ Եկմալյան չէր կառավարեր խումբը, թեև ինքն էր սորվեցնողը: Խումբի քանակը բնավ 50 հոգիեն անդին չէր անցներ: Այսպես օգնական ուսուցիչ եղա Ներսիսյան վարժարանում: Աչակերտ եղած ատեն իսկ Եկմալյանը չատ կը սիրեր զիս, հաճախ իր տունը կը տաներ զիս, ինքը միայնակ էր, կ'ուտեինք, կը խմեինք (թեյ, կոֆե, ոչ թե ոգելից ըմպելիքներ):

Ինքը ժառանգավորաց վարժարանի (էջմիածնի) աչակերտ եղած լինելուն, չատ համեստ դպրոցական կրթություն մ'ուներ, զարմանալի չէր, որ իր բոլոր պաշտոնական թղթակցությունները ես կը գրեի: Սակայն 5-րդ դասարան եղած պարագային Պետրոկրատի եկեղեցական հոգաբարձության դիմումի վրա երգչական խումբ մը կը պատրաստեր ու կը սորվեցներ հայ եկեղեցիին համար ու ինձի առաջարկեց, որ ստանձնեմ խմբապետության պաշտոնը ու խումբին հետ մեկնիմ Պետրոկրատ: Ըընդունեցի (եթե հիմիկվան խելքը ունենայի, պետք էր երթալ, բանտարկուեինեն, աքսորե կ'ազատեի, ու ապագաս ալ ավելի աղեկ պիտի ըլլար՝ իբր երգիչ կամ երաժիշտ), որով-հետև կ'ուզեի վարժարանը ավարտելե ետքը որևէ կերպով Եվրոպա երթալ և դժվար ալ չէր բարերար գտնել:

Եկմալյանի և իր միջոցավ լավագույն դաշնակահար Հովսեփ Տեր-Դավթյանի ընտանեկան հարկին տակ այցելող հայ, ռուս գեղարվեստագետներու ծանոթությունը, քաջալերությունը վայելած եմ, հաճախ լսած զիրենք: Թիֆլիսի Արքունական թատրոն (opera-ն) իմ սովորական տունս եղած է, ուր քաղցս ու ծարավս անցուցած եմ, ուրիշ ի՞նչ բան զիս կարող էր ավելի հետաքրքրել ու գոհացում տալ ատկե զատ: Ֆրանսական, իտալական և ռուսական օպերաները լսած եմ, ինչպես «Ֆաուստ», «Կարմեն», «Ռոմեո Ջուլիեթ», «Աֆրիկեն», «Օթելլո», «Տրավիատա», «Աիտա», «Ժիզն զա ցարյա», «Եվկենի Անեկին», « Փրենս Իգոր», « Դեմոն» և այլն, և այլն, որոնք այսօր իսկ ռեպերտուարը կը կազմեն աչխարհիս օփերաներուն:

Ամենեն չատ երգի հետևելու ու արտասահման մեկնելու այդ առթիվ խորհուրդ տվողն եղած է Եկմալյան և Կոմիտաս

վարդապետ: Առաջինը ձայնս մշակելու, իսկ երկրորդը՝ ավելի composition-ը, սակայն բախտը ինձ անմիջապես ուրիշ բան վերապահած էր: Ներսիսյանի 5-րդ դասարանին եղած պահուն (1895-ին), երբ ռուս կառավարությունը հնչակյան չեֆերը և ուրիշ աչքի զարնող հայ հեղափոխականներ բանտարկեց, ես ալ զոհ գնացի այդ չարժման՝ բոլորովին իզուր տեղ: «Արճաճանքի» խմբագիրներեն մշեցի Եզնիկը ծանոթ էր կառավարության իր Տաճկահայաստանի կյանքեն, մասնավորապես Մշո կյանքեն գրած գրգռիչ թղթակցություններովը: Կառավարությունը չկրնալով զինք ձեռք ձգել, իբր անոր մտերիմ հայրենակից ու միշտ իրար հետ սերտ հարաբերության մեջ ըլլալնուս պատճառավ տունս խուզարկեց, կարգ մը հեղափոխական, սոցիալիստական բրոշյուրներու հետ Եզնիկի քանի մը նամակներն ալ ձեռք բերեց՝ գրված ինձի, թաքցյածը տեղից, որը մականվանված էր ի վերին երուսաղեմ: Ջիս ուղղակի ժանդարմներով ծածկված ֆայտոնով ուղղակի բանտ առաջնորդեցին, ու քանիցս անգամ, զանազան ժամանակներու մեջ զինվորական ատյանին առջև հարցաքննության ենթարկվեցա ու հակառակ ամեն անգամ կրած ապտակներուս՝ բնավ Եզնիկի ուրտեղ ըլլալը չըսի:

Ինձի հետ բանտակից էր Շիրվանզադեն, ախալքալաքցի Վարդանյան, Թիֆլիսի Հանրածանոթ Սև Սանդրոն և ուրիշներ: Երկու ամիս տևեց բանտարկությունս, հսկողության տակ արձակեցին զիս բարեբախտաբար և այդպիսով կարողացա վարժարանս ավարտել 1897-ին ու օգնական կարգվեցա վարժարանումս:

Ըլլա ճեմարանում, ըլլա Ներսիսյան վարժարանում, մշակական աշակերտներեն չատերը կը հետևեին հեղափոխական չարժումներուն.... Թիֆլիսում մենք՝ տաճկահայ ներսիսյանականները, առանձին groupe մը կը կազմեինք, սակայն, բացի հրապարակային (ընդհանուր) ժողովներեն, actif կերպով չէինք մասնակցեր՝ աշակերտական վիճակին մեջ լինելու համար, արդեն կենտրոնական մարմինը չէր ալ ուզեր:

Օգնական ուսուցչական պաշտոնս հազիվ թե մի քանի ամիս տևեց, օրեն մեկը ոստիկանական պաշտոնյա մը վարժարանեն զիս առաջնորդեց ոստիկանատուն, իբր թե ոստիկանապետը խնդրո մը առթիվ զիս տեսնել: Մինչդեռ ներքին դո-

ծերու նախարարութենեն իմ և ինձ հետ եղող բանտարկյալներու մասին հրաման եկած է, որ տաճկահայերը՝ Տաճկաստան և ռուսահայերը Ռուսաստանի զանազան քաղաքները աքսորել: Ոստիկանապետը անմիջապես և շըփ-չիտակ բանտ ղրկեց, ուր մնացի ամսվա մը չափ, մինչև որ պատրաստություն տեսա, խիստ ճմեռ առեն ուրիշներու հետ էթապով ճամբա ինկա դեպի Ալեքսանդրապոլ, կարս:

Ջպիտի մոռնամ երբեք հետևյալ հուզիչ դեպքը. առավոտ կանուխ, երբ դեպի կայարանը (երկաթուղու) տարին մեզ, եկմալյանը, ուրիշ քանի մը բարեկամ ընտանիքներ, ընկերներ, Խարախանյան, Միսաք և այլն, եկած էին վերջին անգամ զիս տեսնելու:

Եկմալյանը տղու մը պես կուլար, իրականին մեջ զիս չատ կը սիրեր ու կը գնահատեր՝ լինելով իր աջ բազուկը դպրոցին և եկեղեցիին մեջ, քառաձայն խումբին առաջնորդելուս տեսակետով, այլապես, այսինքն ուղղակի Եկմալյանեն դաս առած չեմ, ո՛չ հայկական և ո՛չ ալ եվրոպական:

Եկմալյան իր երաժշտական կրթությունը առած էր Պետրոկրատի conservatoir-ին մեջ. գրեթե տաս տարի հետևած անոր ու փայլուն կերպով շրջանավարտ եղած: Իրեն ուսուցիչ եղած են Զայկովսկին և Ռուբենշտայն աշխարհհռչակ մեծություններ:

Կովկաս վերադարձին, տարի մը, Թիֆլիսի կայսերական conservatoir-ի directeur եղած է: Conservatoir-ի բացման առեն, երբ հարց եղած է directeur-ի մասին ի Պետրոկրատ, Զայկովսկին խորհուրդ տված է եղեր Եկմալյան կանչել այդ պաշտոնին...

Դժբախտաբար, Եկմալյան ոչ մեկ լեզու գիտեր հիմնովին, այդպես ալ ռուսերեն, հակառակ 10 տարի Պետրոկրատ ռուս շրջանակին մեջ մնալուն: Իր ուսումնական կարողությունը բոլորովին հակապատկեր կը ներկայացներ երաժշտականին: Շատ նուրբ, զգայուն երաժիշտ էր՝ դասական իմաստով: Կոմիտասեն ալ ավելի հառաջ ներդաշնակած է հայ ազգային, կրոնական և ժողովրդական երգեր, իսկ պատարագը արական և իգական խառն խումբերու համար իր գլուխգործոցն է:

Այսպես, 1897-ի ճմռան սկզբներուն էթապով աքսորվեցա Թիֆլիսեն: Ճանապարհի վրա գտնված բանտերը գիշերելով՝ այսպես Ախստաֆա եղավ առաջին բանտը (Թիֆլիսեն հետո),

ուր անցուցի գիշերը ուրիշ բանտարկյալներու հետ, հոդ հանդիպեցա խումբ մը Ալեքսանդրապոլի և Կարսի շրջաններեն շղթայակիր հայերու, ոմանք Սիպիրիա և ոմանք ալ Սախալին պիտի երթային: Ասոնք, իրենց գործած ոճիրներու բերումով, դատապարտված էին տաժանակիր աշխատանքներու:

Գիշեր ատեն սկսան խումար խաղալ խմորե չինված զառերով. զիս ալ ստիպեցին իրենց ընկերանալ: Շիտակ ըսելով՝ վախես համակերպեցա իրենց, առաջին անգամ ըլլալով՝ չահեցա, սակայն խաղին վերջը տարածս իրենց վերադարձուցի նույնութեամբ, նախ՝ որ հավիտենական դատապարտվածներ էին ու խեղճ, երկրորդ՝ կը վախնայի քնած ատեն գողնային իրենց դրամին հետ քովս պահված դրամներս ալ:

Հետևյալ առավոտ կանուխքին, ցուրտին ու ձյունին չարունակեցինք մեր ճամբան, այսպես հետզհետե անցնելով գիշերներ Քարվանսարա, Խարաքիլիսե և այլն, եկանք Ալեքսանդրապոլ, ուր մնացի երկու շաբաթ: Այդ կարճ ժամանակին մեջ ալ ընտելացած էի... գրեթե բանտի կյանքին: Այստեղ կային, ի միջի այլոց, ուրիշ ալեքսանդրապոլցի քաղաքական (հեղափոխականներ) հանցավորներ՝ երիտասարդ, խանդավառ հայեր, որոնք լավագույն վերաբերում մ'ունեցան հետս ու հյուրասիրեցին զիս մինչև մեկնելս:

Ալեքսանդրապոլեն դեպի Կարս ճամփորդությունս չատ նեղեց մեզ՝ ցուրտի, բուքի, ճանապարհը ձյունով ծածկված ըլլալուն պատճառավ: Շատ անգամ ձյունը պատռելով, ճամբա բանալով՝ կ'առաջանայինք, այսպես հասանք վերջապես Կարս: Առաջնորդվեցա բանտ, ուր հանդիպեցա վանեցի մի քանի հայրենակիցներու, Մ'իքայել Նաթանյանին և իր ընկերներուն:

Տաճիկ կառավարությունը զիրենց ներս չընդունելու պատճառավ, եթե չեմ սխալեր, ղրկեց Պարսկաստանի սահման ու ազատ թողուց, որ անցնեն Պարսկաստան: Սակայն ես այդ բարեբախտությունը չունեցա, որովհետև փոքրիկ ատենս Տաճկաստանեն կանոնավոր անձնագրով և ուսանելու համար եկած էի Ռուսաստան, հետևաբար որևէ հանցանքի մեջ գտնված չլինելուս համար առժամապես վար դրավ կառավարությունը՝ տաճիկ հյուպատոսի խնդրանո վրա, մինչև Մշո կառավարութենեն որոշ հրահանգները գային: Ռուս կառավարությունը

զիս փոխադրեց զինվորական բանտ, բերդին մէջ, ուր մնացի 6 ամիսեն ավելի: Տաճկահայ քաղաքական (Հեղափոխական) հանցավորները մեծ թիվ մը կը կազմեին, գրեթե բոլորն ալ գավառացիներ էին: Մշեցիներ և խնուսցիներ մեծ թիվը կը կազմեին հոս, ինքզինքս միայնակ չէի զգար: Ջայնս միշտ մեծ դեր կատարած է ամենուրեք, ուր որ եղած եմ: Բանտի մէջ միակ մխիթարութիւնն էին հայրենակիցներս, որոնցմէ չատերը ընտանիքի, զավակի տեր, ազգային սրբազան նպատակի մը համար, զրկված իրենց սիրելիներեն: Իմ Հեղափոխական, ազգային երգերը զիրենք կը սրտապնդեր ու կը թեթևացներ իրենց վիշտն ու կյանքի միօրինակութիւնը... Զինվորական բանտ լինելուն, զինվոր պահակներով շրջապատված էի: Եկող զինվորներեն սկսյալ մինչև chef-ը կը ճանչնային զիս...

Երբ Կարսեն մեկնելուս հրամանագիրը եկավ Մուշի տեղական կառավարութենեն, ռուսական կառավարութիւնը զիս հանձնեց հյուպատոսարանին. մեկնելու պատրաստութիւնը տեսնելու չափ մնացի հոն: Հյուպատոսը՝ Ծուատ պեյ, չափազանց լուրջ, կրթված, լայնամիտ jeune turc մըն էր, ինձի նուիրնիակ հայ ազգային երգեր երգել կուտար ամեն երեկոյան: Իր չատ մը հայ, թուրք տեղացի բարեկամները ձայնս լսելուն պես կուգային հյուպատոսարան:

Եթե 95-96-ի դեպքերը պատահած չլինեին, այդպես ալ հայ-թուրք հարաբերութիւններու խզումը, կ'ուզեր զիս ղրկել Պոլիս, որովհետև կ'ափսոսար, որ երիտասարդ, ապագա խոստացող տաճկահայ մը կորստի մատնվեր գավառի մեկ տգետ անկյունը... Դարձյալ իր շնորհիվն էր, որ ճանապարհին վտանգ մը չհասավ ինձ: Իմ մասին գրած հանճնարարական եղավ պատճառը, որ ինձ ուղեկցող ոստիկան (Հեծյալ) զինվորը, որը կը փոխեին տեղ տեղ, խիստ քաղաքավար ու լավ կը վարվեին ինձ հետ ու երբեք չէին հսկեր զիս: Արդարութիւնը ըրած ըլլալու համար ըսեմ, որ երբ ռուսական սահմանապահ պաշտոնյան զիս հանձնեց տաճկականին, ուշ լինելուն գործանոց զիս առաջնորդեցին, ուր անցուցի գիշերը: Զինվորները, որոնք փոքրասիացիներ էին, այնչափ քաղաքավարորեն թեյ ու սուրճ հրամցնելով՝ վարվեցան հետս իբրև հայրենակցի...

Հետևյալ առավոտ ճամբա ինկա դեպի Հասան-կալե, ուր մնացի չաբաթ մը, հետո էրզրում – ճիշտ 17 օր մնացի: Ծանո-

թացա բանտարկված հայերեն, դաշնակցական՝ Նարիմանին, ձիթողցի (Երզրումցի) հայերու, զենքի, սպանութեան պատրաստակով բանտարկված, ինչպես Արամ Արամյանին (դաշնակցական շրջանային գործիչ, chef-ը) և ուրիշներ: Միջանկյալ ըսեմ, որ հնչակյան կուսակցութեան 95-96-ի պառակտումները եռքը (վերակազմյալ հին հնչակյան) դաշնակցականները արդեն բռնել էին ամենուրեք Տաճկահայաստանը:

Բանտի մեջ Արամ Արամյան չատ չուտ մտերմացավ հետս ու ամեն նյութի, անցուդարձի մասին (կը խոսեինք): Ի միջի այլոց, ըսավ, թե ինչպես բանտեն չարունակ թղթակցութեան մեջ է դաշնակցական կեդրոնական Մարմնի՝ վարչութեան հետ (ժնև) ընդհանուր ապստամբութեան վրա ծրագիրը մը պարզելով, այսինքն՝ զինյալ խումբերը մտցնել Տաճկահայաստան, արդեն ժողովուրդը պատրաստ է ապստամբութեան, զենքը կը պակսի, խումբերը մտնելով սահմանեն, հետո բաժնեն ժողովրդին ու կռվի բռնվեն ամենուրեք և այլն, և այլն... Իմ պատասխանը եղավ իրեն, թե Տաճկաստան այնչափ ինկած չէ, որ չկրնա պաշտպանել ինքզինքը բուռ մը հայերու դեմ: Եկող խումբերը սահմանեն ներս, քալլ մը անգամ չպիտի հաջողեն ընել, իզուր տեղ, իզուր տեղ նոր ջարդի մը պատճառ պիտի ըլլա:

Մոտ ապագան, չորս տարի եռքը, 1902-ին էր, որ դաշնակցական զինյալ խումբերը ուզեցին արշավել սահմանեն ներս: Առաջին խումբը միայն ձիավոր Թումանի առաջնորդությամբ կարողացավ Սասուն հասնել, այն ալ, բարեբախտաբար, իրենց անցնելեն եռքը, անմիջապես տեղացող ձյունը ծածկած էր ձիերու ոտքերուն հետքը, իսկ մյուսները բոլորն ալ սպանվեցան... Ապագային, երբ Արամյանի բանտի և կուսակցական ընկերներեն Փիլոսյանին հանդիպեցա Փարիզ, որը ներկա եղած էր բանտում Արամ Արամյանի և իմ խոսակցությանս, հիշեցնել տվի իրենց իմ վերև գրածներուս ճշմարտությունը:

Էրզրումեն եռքը դարձյալ ոստիկան զինվորի մը հսկողության տակ մեկնեցա Մուշ: Հասնելուս պես՝ զափթիեներու օֆիսը իշեցուցին զիս. հարյուրապետը, իմ տանս դրացին, լավ ընդունելություն մը ըրավ ինձ, արդեն բոլորն ալ կը ճանչնային հայրս ու պարագաներս: Առաջին կոմիսարն ալ եկավ, քանի մը անտեղի խոսքեր ըսավ. միշտ միևնույնը պատասխանե-

ցի, թե պաշտոնական հանձնարարագրիս մեջ հայրենիքս ղըրկելուն պատճառը գրված է: Քիչ ետքը մայրս եկավ, աչքերես անմիջապես ճանչցավ զիս (ինչպես միշտ) ու տղամարդու մը հատուկ քաջութեամբ նեռվեցավ դիրկս...

Նույն օրն իսկ բարեկամի մը երաշխավորության և հսկողության տակ արձակեցին զիս, և ամեն շաբաթ պարտական էի ներկայանալ ոստիկանատուն:

1898 թվականին հրավիրվեցա ուսուցչության Մշո սբ. Կարապետ, Վարդան վարդապետի տեղապահության օրով: Մշո առաջնորդը միշտ մնաց Խարախանյան, հակառակ իր աքսորական կյանքին (Երուսաղեմ՝ Իզմիրլյանին հետ)...

Մասնավորապես հայ եկեղեցական ճայնագրությունն ու երաժշտությունը շատ ամուր հիմքերու վրա դրի, ոչ միայն դպրոցի աշակերտներուն, այլև վանքի միաբաններեն և ուրիշ տեղերե եկող քանի մը ուշիմ երիտասարդներու առանձին պարապեցա: Հաջողեցա իրենց սորվեցնել հայ եկեղեցական ճայնագրության արվեստը և 1899-ի Բաբկեն սրբազանին ներկայության շատ հաջող քննություն անցուցին. սրբազանի և իմ ստորագրությամբ վկայականներով պսակվեցան:

Մշո մեջ ապրիլ ինձ համար բանտարկություն մըն էր:

Հեղափոխությունը կյանքը անտանելի դարձուցած էր: մարդասպանություն, ավերում, թալան, հրդեհ, ասոնք բոլորն ալ սովորական բաներ էին: Զկար գյուղ մը, որ հեղափոխական տղայք հյուրընկալելուն կամ գյուղի մեջ գտնվելուն, զորքերու, քյուրտերու հետ կռվելեն ու գյուղեն հեռանալեն ետքը ավերումին չենթարկվեր...

Այդ թվականին էր, որ Սերովբ փաշան սպանվեցավ, որուն գլուխը ցցի վրա բարձրացրած քաղաքի միջեն կառավարությանը տարին իբրև ավար՝ զորքերով ու պատվո մյուզիքով (orchestre): Առաջիկա saison-ի համար չորս տեղերե ուսուցչության հրավիրվեցա՝ Վանեն, Տրապիզոնեն, Էրզրումեն և Բաբերդեն: Էրզրումը նախընտրեցի՝ ռուսական սահմանին մոտիկ լինելուն:

Հոկտեմբերի սկիզբներուն մեկնող կարավանին հետ, անճայն-անճուն Էրզրում եկա, ուր չորս տարի մնացի, նույն աշխատությունն հոս ևս: Արծնյաց (տղոց) և Հռիփսիմյան (աղջկանց) վարժարաններու բարձրագույն դասարաններու (մանա-

վանդ աղջկանց Դ-րդեն Է-րդ) աշխարհագրութիւն, պատմութիւն, եկեղեցական պատմութիւն, տիեզերագիտութիւն, մանչերուն՝ նաև հայերեն և հայկական ձայնագրութիւն (կ'ուսուցանեի): Վերջինիս մէջ այնչափ առաջ գնացին, որ կարող էին ամեն ինչ նոթայով երգել, ձայնագրել: Ունեի քառաձայն երգչախումբ մը, Պոլիսն անգամ (ինչպես և Իզմիր) չուներ այդ ատեն: Էրզրումի եկեղեցին ամեն կիրակի կը խռնվեր, լուսավորչականներե զատ կաթողիկներ, բողոքականներ, հուլներ՝ լսելու Եկմալեանի քառաձայն պատարագը:

Առաջին անգամ լինելով՝ համերգ մը տվի, որուն մասնակցեցան Սանասարեան վարժարանի մի քանի աշակերտներ ջութակով և տեսուչ Ս. Սողիկեանը դաշնակի accompagniment-ով...

Ջորս տարի մնացի Էրզրում: Ամեն տարի զիս Տրապիզոն կը հրավիրեին պաշտոնի՝ վեց օսմանեան ոսկի ամսականով, կը մնայի Էրզրում երեք օսմանեան ոսկիով: Որովհետև գործ մը սկսած էի, չվերջացած չէի ուզեր հեռանալ:

Վերջին տարին Փարիզ մեկնած ատենս, եկեղեցվո սնտուկը լինճ պարտ էր մեկ ամբողջ տարվա ամսականներս: Ջեմ կարծեր, որևէ օտար քաղաքացի ուսուցիչ մը այնչափ սիրված ըլլա էրզրումցիներեն լինճի չափ: Դեռ այսօր իսկ, երբ էրզրումցի մը, ըլլա ընտանիք կամ անհատ, խանդավառ ընդունելութիւն կուտան լինճ, իրենց հանդիպած ատենս:

Էրզրում միշտ դաշնակցական կալված մը եղած է, նույնիսկ հնչականութեան ատեն, այնպես որ, երբ 1902-ի գինյալ խումբերը կը պատրաստվեին գալ մեկ մյուսի ետևեն, դաշնակցական չրջանային գործիչ խարատախցի Գևորգ անունով երիտասարդ մը, օրեն մեկը լինճի կը ներկայանա ծպտյալ ու կը խնդրե պահվելու տեղ մը քաղաքին մեջ: Երբ իրեն կը հարցնեմ, թե ո՞րու կողմեն կուգա, կը պատասխանե, թե Կարսա դաշնակցական Կեդրոնական Կոմիտեի անդամներեն Երվանդ Համամճյանը (իմ ճեմարանի ընկերներես) զիս Զեզ հանձնարարեց: Անմիջապես կ'առաջնորդեմ զինք դաշնակցական բարեկամիս՝ Միհրան Սապոնճյանին, որը իր տունը կը պահե...

Օրեն մեկը Զատիկական տոնի ատեն Զավեն առաջնորդ զիս կը կանչե այն ատեն, որ երգչախումբս պատրաստ եկեղե-

ցի պիտին երթան Զատկի ճրագալույցին երգելու ու կը խընդրեր, թե անմիջապես քանի մը խանութներ այցելել, ինձի ծանոթ հայրենակիցներե քանի մը ղրուշ հավաքել ու հանձնել այսինչ քահանային, որ բանտ պիտի երթա, հայ բանտարկյալներուն հաղորդություն տալու պատրվակին տակ անոնց տա:

Որպեսզի չմերժվիմ, ցուցակ մը կը կազմեմ, նախ իմ անունս կը գրեմ՝ մեկ մեճիտ, որպեսզի հարուստ հայրենակիցներս տեսնեն ու ամոթեն ավելին գրվեն: Կես ժամ չանցած արդեն հաջողած էի 300 ղրուշի գումար մը հավաքել: Կարնո մեջ, մանավանդ վտանգավոր ժամանակ, կես ժամվա մեջ այդչափ գումար մը հավաքել մեծ բան է... Այսպես 6 տարիներ անցուցի հայ կրթական հարկերուն տակը, իմ համեստ աշխատություններս ընծայելու կրթական գործին: Ամեն անգամ, երբ իմ բարեկամ պրն. Ապուլյանին (Սանասարյանի տեսուչ) կը հանդիպեի իրենց տան կամ այլուր, միշտ կը հանդիմաներ զիս՝ ժամանակը պարապ անցնելու Տաճկաստան կոչված դժոխք երկրում: Մինչդեռ անդին մեծ ապագա մը կը նախատեսեր ինձ համար: 1904-ի ամռան կը կարդամ հայ թերթերուն մեջ, թե հայ ազգի բարերար Ալեքսանդր Մանթաշյան հայ եկեղեցի մը կը կառուցանե Փարիզին մեջ, որու օծումը պիտի կատարվի սեպտեմբերին մեջ: Կարդալուս պես կը վազեմ պրն. Ապուլյանին ու կը հայտնեմ իրեն որոշումս՝ ըսելով իրեն՝ ճիշտ է, որ իմ նպատակս եղած էր միշտ չմնալ այս դժոխք երկրում, սակայն անոր գործադրությունը կը հետաձգեի ընտանեկան պարագաներուս պատճառավ:

Ռուսաստանեն Մուշ եկած պարագային, մայրս կ'ապրեր քրոջս քովը, փեսան հազիվ ապրուստ մը կը ճարեր, այն ալ շատ դժվարությամբ: Գալես տարի մը ետքը մեռավ փեսաս՝ թողնելով երեք աղջիկ զավակներ՝ քրոջս հետ: Իմ պարտականությունս էր գոնե ժամանակավորապես ապահովելու իրենց ապրուստը, ժամանակ մը մնալ Տաճկաստան: Էրզրումի չորս տարվա պաշտոնավարությենես կարցի խնայել մոտ 150 օսմանյան ոսկի: Ըսի պրն. Ապուլյանին այս բոլորը ու խնդրեցի իրմեն, որ քաղաքային բժիշկ Շերիֆ էֆենտին (Սանասարյան վարժարանին ալ պաշտոնական բժիշկն էր) բժշկական վկայական մը տա ինձ, իբր թե կոկորդի հիվանդության համար ստիպված էի Պեյրութ երթալ՝ տեղացի ճայնի մասնագետին

ցուցանելու ու դարմանելու զայն: Պրն. Ապուլյան սիրով կատարեց խնդիրս, որ այնչափ կը գնահատեր ձայնս ու ապագաս: Հաջողեցա անճնագիր հանել Պէյրութին վրա: Ունեցած դրամներես 100 ոսկին մորս և քրոջս հատկացուցի, մնացյալ դրամով ճամբա ինկա դեպի Տրապիզոն, ուր մնացի չաբաթ մը: Ֆրանսական Պաքե ընկերութեան նավով մեկնեցա փոխանակ Պէյրութի... որ ֆարա մըն էր, դեպի Ֆրանսա. ամեն հայ չէր կարող ֆրանսական նավերով մեկնել: Իմ մեկնումիս նըպաստեց Տրապիզոնի հայտնի վաճառականներեն տիար Օնիկ Մախոխյանը, որուն հանձնարարված էի էրզրումցի Հանեմյան եղբայրներեն:

Եթե որոշեցի Ֆրանսա երթալ, որովհետև նյութական կարողութիւն և ուրիշ օգնող ձեռք մը չունեի, վստահ էի, թե Փարիզի եկեղեցիի օծման երգելու ըլլամ նե, անպատճառ զիս վար պիտի դնեն եկեղեցիին համար, նախ՝ որ ձայնիս գեղեցկութեան վրա հավատք ունեի, երկրորդ՝ եկեղեցական երաժըշտութիւնը իր ամբողջութեամբ ինե ավելի լավ գիտցող մը չպիտի գտնվեր, հետո՝ ամուսնացած չլինելուս, ուսանելու պատճառավ քչով գոհ պիտի ըլլայի:

Ոմանք թերևս միամիտ համարեն զիս կամ չափազանց հավակնոտ, սակայն վերևի բոլոր ենթադրութիւններս իրականացան: Մասնակցեցա օծման. եկեղեցին լիքն էր հայ և օտար բազմութեամբ մը, ինչպես և Մանթաշյան, Կ. Եզյանց, Եկնայան և այլն, և այլն:

Որովհետև արարողութեանց մասնակցյալ բավական թվով հայ երաժիշտներ կային ու կը փափագեին եկեղեցվո դպրապետ ըլլալ, և որպեսզի ամեն մարդ իր ուզած կտորը երգելու փափագով անհամաձայնութիւններ չըլլան, տեր Վռամշապուհ հայրը օր մը առաջ ժողովի հրավիրեց երգիչներս և փոխադարձ համաձայնութեամբ մեր մեջ բաժնեցինք մեներգերը: Ինձի տվին «Խորհուրդ խորին»: Խորանին միջեն քաղցր ձայնով երգած ատենս, ուրիշներուն ըսելով, ամեն մարդ զարմացած ու հիացած իրարու երես կը նայեն՝ գիտնալու համար, թե ով է երգողը... Մյուս երգիչները այլևս գիտցան, թե որու հետ գործ ունեն, ինձի ձգեցին երգել լավագույն կտորները:

Պատարագեն վերջ պարոն Եկնայանը ինձի մոտեցավ, հարցուց իմ ով ըլլալս, ինչ նպատակով Փարիզ գալս ու ինչ գոր-

ծով զբաղվելս, արդյոք չէի ուզեր եկեղեցվո դպրապետ ըլլալ: Երբ իրեն պատասխանեցի, որ երաժշտությունն ուսանելու ու ձայնս կրթելու եկած եմ, ըսավ. «Զավա՛կս, գիտեք, որ եկեղեցին նոր է ու եկամուտ մը չունի, չենք կարող ձեզ ձեր արժանիքին չափով վարձատրել, եթե կը գոհանաք ամսական 70 ֆրանքով ու միայն կիրակի օրեր եկեղեցին երգել՝ ուրախ կըլլանք: Ատկե զատ կը խոստանամ ձեզի օգնել, եթե որևէ երաժշտական դպրոց հաշողեք մտնելու»: Ընդունեցի իր առաջարկությունները չնորհակալությամբ: Առաջին տարին չաբաչար կերպով աշխատեցա քիչ մը ֆրանսերեն սորվիլ, գիտցածս avoir, etre բայերեն անդին չէր անցներ: Երկրորդ տարին՝ 1905-ին մտա, Scola contorium, երգի ու թեորի մյուզիքի հետևեցա, ուր մնացի միայն մեկ տարի: Այդ տարիեն սկսյալ պըն. եկնայան ինձ օգնեց ամսական 40 ֆրանքով և չարունակեց մինչև Օփերա engager ըլլալս, ուրեմն հինգ տարի անընդհատ: Scola contorium-ով չբավականացա: Մյուս կողմեն բոլորովին որոշած չէի ավելի ուժ տալ, իբր մասնագիտություն, ձայնիս թե composition-ին, ատոր համար պետք էր շատ հեղինակավոր մեկը մը կարծիքը գիտնալ: Ճիշտ է, ձայնս գիտեի և վստահ էի, թե սովորական ձայն չէր, սակայն կարելի՞ էր ամբողջ-ապագա մը անոր վրա հիմնել: Այդ մտքով Սերտլյանին (թոքթոր) ֆրանսերեն նամակ մը գրել տվի նշանավոր տիկին Փոլին Վիարտոյին (83-ամյա)՝ խնդրելու իրմեն ժամադրության մը մեջ, իր հեղինակավոր կարծիքը հայտներ ձայնիս մասին: Սերտլյանին հետ տված ժամադրությանը կը դիմեինք, քանի մը էքզեռսիոններ ընել տվավ և եղանակ մը երգել իմ այն ժամանակվա չարդուփշուր ֆրանսերեն արտասանությամբ... Շատ գուրգուրոտ վերաբերումով մը և խանդավառությամբ ըսավ. «Ապրե՛ս, ոչ միայն աղեկ է ձայնդ, այլ եթե աշխարհիս մեջ կա երեք հազվագյուտ ձայներ, մեկը ձերն է»: Ու խնդրեց ուրիշ անգամ մըն ալ երթամ իրեն՝ հաջորդող շաբթու նույն օրը: Ուր գտա ռուսահայ երգիչ, որ ձայնը խըզվացուցած էր գրեթե operation-ի մը առթիվ, և Մատամ Վիարտոն մասնավոր գուրգուրանք մը ուներ վրան և օգնած էր իրեն երաժշտական խանութ մը բանալուն և որուն տված էր իր բոլոր գործերը-վաճառելու արտոնությունը:

Նորեն ինձի երգել տվավ ֆրանսերենի հետ քանի մը հայե-

րեն երգեր ևս, այս վերջիններեն չատ խանդավառվեցավ... ու ետքը ինձի առաջարկեց, թե արդյո՞ք կուզեմ իրմե դասեր առնել: Անշուշտ, չնորհակալություն հայտնեցի իրեն այդ մասին (Սերոլյանը միշտ թարգմանս էր) ու միամտաբար ըսի իրեն, թե միջոցներս չեն ներեր իրեն վճարելու: Խնդալով ըսավ, որ «Ձեզմե ոչ ոք դրամ կը պահանջե, ընդհակառակը, հաճույք մը պիտի ըլլա ինձ ձեզ դաս տալս»: Մատամ Վիարտոյի հեղինակավոր վկայութենեն ետքը որոշեցի ձայնովս զբաղվիլ վերջնականապես: Հետզհետե Մատամ Վիարտոյի հարաբերությունը իմ նկատմամբ ճիշտ հարազատ մոր պես եղավ, ամեն դասե ետքը կը խոսակցեր հետս, պատմություններ կը պատմեր, ծանոթ ամեն մեկ վանկ արտասանելով և առոգանելով, որպեսզի կարելի եղածին չափ ընտելանայի Ֆրանսերեն լեզվին: Որ ատեն ուզեի, իր դռները բաց էր իմ առջևը , իր զավակներն ալ (բոլորն ալ ամուսնացած) համակրանքով կը վերաբերվեին հետս:

Քանի քանի անգամ Մատամ Վիարտոն առաջարկած է ինձ նույնիսկ նյութապես օգնել. միշտ ալ մերժած եմ զինքը, ըսելով, որ չնորհիվ հայրենակիցներուս՝ դրամի պետք չունիմ... Փարիզեն հեռացած պարագային թղթակցած էր հետս մոր մը խանդաղատանքով... Իր նախկին աշակերտուհիներուն (ամուսնացած, դիրքի տեր) ծանոթացուցած էր հետս և անոնք ալ հարգանքով կը վերաբերվեին հետս:

Կատարախտի պատճառավ, երբ այլևս աչքերը տկարացան, խորհուրդ տվավ Conservatoire-ը մտնիմ հառաջիկա saison-ին: 1906-ի տարեշրջանին մասնակցեցա Conservatoire-ի concurs-ին, ընդունվեցա, Schola contorium-ի երգի ուսուցիչ պրն. E. Cazeneuve-ը այդ saison-ին փոխադրված ըլլալով Conservatoire, իր դասարանը մտա: Schola contorium-ի մեկ տարվա աշխատությունս ինձ չատ օգտակար եղավ, լինելով սոսկ կլասիկ , հաստատություն մը վենսան դ'Էնտիի direction-ի տակ: Այստեղ էր, որ իրապես դարբնվեցավ սրտիս, հոգիիս մեջ դասական երաժշտության (16, 17, 18-րդ դարերու) խորհրդավորությունն ու վեհությունը:

Օր մը ուսուցիչս Faust-ի air-ը ինձ երգել տված պարագային, դասարանին մեջ, դ'Էնտին ներս մտավ ու արգելեց չարունակել՝ ըսելով. «Իմ հաստատությանս մեջ դասական երաժշտութենեն զատ ուրիշ բան չեմ ուզեր»:

Երբ Schola contorium-ը ձգեցի՝ Conservatoire երթալու համար, դ'Էնտին չատ ցավ զգաց, միևնույն ժամանակ ըսած էր եղեր, թե՝ «Ձեր ձայնին համար Conservatoire-ը միակ հաստատությունն է»:

Conservatoire մտնելես ետքն ալ կ'այցելեի մադամ Վիարտոյին. երբ ուզենայի՝ կանչել կուտար, ամեն անգամ կ'ուզեր գիտնալ առաջադիմությունս, կ'երգեի իրեն ու միշտ ալ մասնավոր գուրգուրանքով խորհուրդներ կուտար...

Մատամ Վիարտոն այնչափ կը սիրեր զիս, որ հոգեվարքին մեջ, ուրիշ սիրելիներուն հետ զիս ևս հարցուցած ու փնտրած է, դժբախտաբար մինչև հասնելուս մեռած գտա զինքը, այդ 19-րդ դարու ամենեն զարգացած, ամենեն նշանավոր երգչուհին, նաև compositeur, pianist, որուն bust-ը իր կենդանության Օփերայի musee-ի մեջ դրվեցավ. որչափ հպարտ եմ, որ աշակերտ ու հոգեզավակ ըլլալուն բախտը, գուրգուրանքն ունեցած եմ:

Conservatoire-ի մեջ մնացի չորս տարի, եթե ֆրանսերեն գիտնայի՝ այդչափ ժամանակ կորսնցնելու պետք չպիտի ունենայի, ինչու՞, որովհետև ձայնիս գեղեցկությամբ և երգելու բնական ընդունակությամբ միշտ լավագույն tenor-ն էի, սիրված ոչ միայն իմ ուսուցիչներեն, այլև directeur-են, մյուս բոլոր ուսուցիչներեն ու պաշտոնյաներեն: Երբ իտալական Օփերայի խումբը իր ամբողջ կազմովը, մասնակցությամբ Caruso-ի և ուրիշ նշանավոր արթիստներու, կարգ մը ներկայացումներ տվավ Chatele-ի թատրոն Aida-ի ներկայացման, հրավիրեցին մեր Conservatoire-ի ուսուցչությունը՝ աշակերտական կազմին հետ: Ուսուցիչներեն մի քանին աշակերտներու ներկայությանը այսպես արտահայտվեցան. «Caruso-ի ձայնը գեղեցկության և charme-ի տեսակետով ոչ մի առավելություն ունի Շահ-Մուրատյանի ձայնեն. ավելի զորավոր է, այո՛, սակայն վերջինիս ձայնն ալ ավելի քնքուշ, տաք և հրապուրիչ է»...

Առաջին concours-ին (1908-ին) Temps-ի և մյուս գրեթե բոլոր presse-ի ըսելով, միակ աչքառու դեմքն էի այդ տարվան քննության մասնակցողներուն մեջ: Եղան թերթեր, որոնք բողոքեցին գեթ երկրորդ մրցանակ ինձ չտալուն համար...

1909-ի concours-ին ունեցա օփերայի Բ-րդ մրցանակ. այդ տարի ոչ ոքի տրվեցավ Ա-ին մրցանակ... թեև ոմանց (քննադատներու) կարծիքով՝ արժանի էի առաջին մրցանակի:

Իսկ 1910-ի concours-ին ունեցա առաջին մրցանակ՝ opera-ի, երկրորդ մրցանակ՝ opera-comigue-ի, երկրորդ մրցանակ chant-ի և երկրորդ մեռալ՝ թեորի մյուզիքի և սոլֆեժի...

Օփերայի վարչութենեն հրավիրվեցա առաջին debut-ս ըրի 1911-ի հունվարին «Faust»-ին մեջ: Օփերան ծայրեիծայր լիքն էր. եղան մարդիկ, որոնք ետ դնացին՝ տեղ չլինելուն պատճառավ...

Կյանքիս ամենեն երազուն, խանդավառ, անհոգ և գաղափարական շրջանս ուսանողականն եղած է: Շնորհիվ Մանթաշյանին (մանավանդ), Եկնայանին և Ներսես Խանին, նյութական ոչ մի նեղություն կրեցի այդ շրջանին... Մանթաշյանը մասնավորապես շատ կը սիրեր զիս, զավկին պես. առանց կանչելու չէի երթար, որպեսզի մտքեն չանցներ ուրիշ բան մը, որու համար ալ պատվիրած էր Սիմոնյանին (իր անձնական դրագիրը), որ ամսականներս երթամ իրեն տուն առնիմ...

Conservatoire-ի և concours-ներու մեջ ունեցած հաջողությունները, այդ առթիվ Փարիզի բոլոր մամուլի շռայլ գնահատությունները զիս կը խանդավառեին, ու սրտատրոփ կը սպասեի Օփերայի կամ Օփերա Քոմիքի planche-ի վրա երևալ անգամ մը:

Երբ առաջին concours-ին մասնավոր հուզում չունեցա, վստահ լինելով, որ ֆրանսերեն ո՛չ արտասանությունս և ո՛չ ալ առոգանությունս աղեկ էր (վայրենի ըլլալու չափ), անկե ետք արդեն աստիճանաբար այդ պակասությունները մեղմացած ու գրեթե անհայտացած էին, նույնիսկ «Comedia»-ի վկայությամբ՝ ռուսական թեթև հնչյուն ունեի, որ մասնավոր charme մը կուտար ֆրանսերենի: Գիտեի, թե լավ ու չափազանց մոգող ձայն մ'ունեի ու դիտեի երգել, իսկ բազմության առջև երգելու ոչ մի վախ ունեցած եմ տղայությենես ի վեր: Ճիշտ է, որ Օփերայի առաջին debut-իս Սենայի վրա եկած ատենս ըսի. «Ցա՛ Սուրբ Կարապի, յա՛ Սուրբ Կարապետ...»: Ջկա որևէ մչեցի մը՝ գործի ձեռնարկելե առաջ Սուրբ Կարապետ չկանչե օգնության: Debut ընող երգչի մը լավագույն գնահատությունը՝ հանդիսականներեն ավելի orchester-ի

միահնչուն, ոտքի կանգնած խանդավառ ծափահարությունն է, և ես արժանի եղա այդպիսի անկաշառ գնահատության...

Opera-ն երգելես ետքը եղած եմ Կովկաս, Եգիպտոս, Պոլիս, Իզմիր, Անգլիա, Պելճիքա: Պատերազմի (պատճառավ) սկզբնավորությանը մեկնած եմ Ամերիկա, ուր մնացած ամբողջ տևողությանը և քաղաքացի դարձած եմ: Երեք տարիե ի վեր Ֆրանսա կ'ապրիմ:

ԱՐՄԵՆԱԿ ՇԱՀՄՈՒՐԱԴՅԱՆ

Ինքնագիրը՝ Նուպարյան մատենադարան
Հ.Բ.Ը. Միության - Փարիզ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԸ

Հայ ժողովրդական երգը Հայ հովվական երաժշտության կենդանի պատմությունն է, որ այնչափ պարզ, անմեղ և անման կերպով ցոլացուցած է Հայուն հոգին ու սիրտը:

Անոր ծագումը շատ հին է, ա՛յնչափ հին, որքան հայ լեզուն: Թե հեթանոսական շատ հին ժամանակներե ի վեր Հայերն ալ ունեին մասնավորապես իրենց երաժշտությունը, ատոր ապացույց են հետևյալ պատմական իրողությունները. հերոսներու հիշատակներուն փառաբանությունները, հերոսներու հիշատակներուն ուղղված գովքերը, հարսանիքը, խընջույքները, հուղարկավորությունները կը կատարվեին երգերով, պարերով ու նվագներով:

Նույնը կը հաստատեն պատմությունեն մեզի իբր մնացորդ գողթան երգերը, գուսաներգությունները: Ո՛վ չգիտեր Վահագնի նվիրված զմայլելի «Երկնէր երկին և երկիր»ը, Արտաշես Երկրորդի և Սաթենիկի նշանախոսության, հարսանիքի և մահվան վերագրված դրվագները:

Գուսան բառը հին Հայոց մեջ գործածված է երեք իմաստներով՝ երաժիշտ, երգիչ և դերասան:

Վարձակ անունով կը կոչվեին երգչուհիները և պարուհիները, որոնք իրենց արվեստը ի գործ կը դնեին հրապարակային տեղերու և ապարանքներու մեջ:

Հայ հեթանոսական շրջանի գողթան երգերեն հետո, հայ գուսանին քնարը լռած էր, երկար տարիներ, գոնե ըստ երևույթին: Ատոր գորավոր պատճառն էր Քրիստոնեության մուտքը Հայոց մեջ: Նոր կրոնի հիմնադիրները ջնջեցին, ոչընչացուցին անմտորեն այն բոլորը, ինչ որ հայ նախապատմական շրջանի քաղաքակրթության կենդանի և փառավոր կյանքին կը վերաբերեր: Հետևաբար պետք չէ զարմանալ, թե ինչո՞ւ ընդհանուր հալածանք մը սկսած է ժողովրդական խաղե-

րու, պարերու, աշխարհիկ երգերու և բանահյուսութեան դեմ: Մեր եկեղեցական մատենագիրները կ'որակեն զանոնք տգեղ ածականներով, որպես «հեթանոսական, դիվական, ամոթալի, մորոսական, գարշաբանական» և այլն, և այլն: Դարձյալ Խորենացին կը հանդիմանե Արշակ թագավորը՝ իր ժամանակը «ի գինարբուս և յերգս վարձակաց» անցընելուն համար: Փավստոս Բյուզանդ կը կշտամբե ազնվականները, որ գինի կը խըմեն. «Բոզօք, վարձակօք, գուսանօք և կատակօք»:

Հայ գինվորականները, վանքեր իջևանելու պարագային, կ'ուրախանան եղեր, և Ներսես Շինող կաթողիկոսը կը գանգատի այդ առթիվ, «գուսանօք և վարձակօք պղծեն զնուիրեալ տեղիս Աստուծոյ»:

Հակառակ այդ խիստ վերաբերումներուն, իբր ժամանակի մոլեռանդ հասկացողութիւն, ժողովրդական տաղերգութիւնները չարունակած են ապրիլ եկեղեցիի չրջափակեն դուրս. հայ աչխարհական բանահյուսներու չնորհիվ: Ճիչտ է, որ այդ մասին չունենք գրավոր ապացույցներ, ատոր պատճառն ալ այն է, որ ոչ ոք ուզած է զանոնք գրի առնելու գայթակղութիւնը հանձն առնուլ և եկեղեցական բանադրանքի ենթարկվիլ: Այդ անորոչ ու ամուլ չրջանը կը տևե մինչև ԺԹ դարու վերջերը, երբ հանկարծ ծայր կուտա միջնադարյան կարգ մը տաղերգութիւններու անակնկալ երևումը, որով հիմը կը դրվի աշուղական զմայելի դպրոցին՝ տոգորված աչխարհիկ ոգիով և ըմբռնումով: Զարմանալին հոն է, որ բանաստեղծական այդ զուտ աչխարհիկ դպրոցը կ'անիծվի հայ կրոնավորներու միջոցավ:

Հայ կրոնավորը, որ իր վանական խստամբեր մթնոլորտին մեջ ապրած ու դաստիարակված, մինչև այն ատեն գրիչը չէր չարժեր աչխարհիկ պիղծ նյութերու մասին, այդ թվականեն հետո կը զգա իր մեջ բանաստեղծական անկաչկանդ հուրի սրբազան ներչնչումը, կը սկսի ազատ թափ ու թռիչ տալ իր վառ երևակայութեան, իր մարդկային զգացումներուն, խիզախորեն տաղերգելով բնութիւնը, հայրենի օջախը, պանդուխտին կարոտը, գարունը, վարդը, պլպուլը, զգացումներեն ամենեն ամբարիչտը՝ սեռային սերն ու գեղեցկութիւնը:

Ծարդ ճանչցված միջնադարյան աչուղներեն ամենեն երեցը

Կոստանդին Երզնկացին է. կրոնավոր մը, ապրած ԺԴ դարու վերջերեն մինչև ԺԴ դարու սկիզբները: Անկե ետք եկողներու մեծագույն մասը եկեղեցականներ են, քահանայե սկսյալ մինչև պատրիարք, կաթողիկոս: Կ'արժե հիշել հոս անոնցմե ամենեն կարկառուն դեմքերը – Սիսի Հովհաննես Թլկուրանցի և Գրիգորիս Աղթամարցի կաթողիկոսները, աննման Նահապետ Քուչակ, Մկրտիչ Նաղաշ, Ղազար Սեբաստացի և այլն, իբրև սիրո, գեղեցկության, տարօրինակորեն գերազանց երգիչները:

Մեր մեջ, հնագույն դարերե ի վեր, մտավորական զարգացած դասակարգը կը համարվեին կրոնավորները, ուստի զարմանալի չէ, որ ամեն գրական ու մատենագրական շարժում տեղի ունեցած ըլլա անոնց ձեռքով: Այնպես եղած է մինչև ԺԹ դարու սկիզբը, երբ առաջին անգամ ըլլալով, աշխարհական տարրը կը սկսի գերակշիռ հանդիսանալ:

Գեղարվեստը, գրականության հետ, ամենազորավոր ազդակներեն մին ըլլալով, ազգի մը ինքնապաշտպանության և չափանիշը քաղաքակրթության և մշակույթին՝ բնական է, որ չպիտի անտեսվեր, մանավանդ ԺԹ դարու վերածնության այս շրջանին: Ունեցանք ժողովրդական ինքնատիպ աշուղներ, ինչպես Սայաթ Նովա, Շիրին, Ջիվանի և ուրիշներ:

Խոսքս վերջացնելե առաջ ցավով պիտի ըսեմ, թե մեր հեղափոխական քառորդ դարու և մանավանդ սահմանադրության այս մի քանի տարիներու պատկանած հայ ժողովրդական երգերը, գրեթե առանց բացառության, անգույն, տղայական և ինքնուրույն նկարագրե զուրկ են: Եկեղեցական ժամերգություններու և հոյակապ շարականներու հետ՝ գեղջուկ երգերն են միայն, որոնք մասնավոր ուշադրության և ուսումնասիրության արժանի են ու կարոտ: Մեր նախնիքներեն մեզի հասած ամենեն թանկագին ավանդն են անոնք, գուրգուրանքի և հպարտության առարկա: Հոն կը տեսնվին ցայտուն կերպով Հայուն ստեղծագործական ոգվույն ու զգացումին հրաշալիորեն վսեմ թռիչքն ու հոյակապ սլացքը: Հոն, վճիտ կերպով կ'երևի Հայությունը իր անցյալ և ներկա բովանդակ կյանքովը:

ԱՐՄԵՆԱԿ ՇԱՀՄՈՒՐԱԴՅԱՆ

«Ոստան», Կ.Պոլիս, 1919, թիվ 4

ՆԱՄԱԿՆԵՐ

ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

1907, Հունիս 14, Փարիզ

Սիրելի պ. Ա. Չոպանյան

Առաջին անգամ չէ, որ կը վայելեմ ու կ'օգտվեմ բարձր հեղինակութենեդ և բարոյական եզական ազդեցութենեդ, առ այժմ, որ աշակերտական կապտված կյանքի մեջ, ինձի կը մնա միայն չնորհակալություններս և երախտագիտական անկեղծ զգացումներ արտահայտել սիրելիությանդ, որու ճշմարիտ բարեկամությունը վայելելու բաղդն ունեմ: Դեպի Ձեզ ունեցած պարտականություններս և հարգանացս հավաստիքը կարող եմ տալ միայն չոշափելի կերպով ապագային:

Ջրպիտի մոռնամ երբեք Ձեր անչափ բարիքը և անկեղծ վերաբերմունքը:

Ընդունիր, սիրելի բարեկա՛մ, երախտագիտական հարգանքներս՝

քո Շահ-Մուրատյան:

***

Ժնև, 1908, օգոստոս 18

Սիրելի Չոպանյան

Երկու օր է, որ Մոնդոուեն հոս կը գտնվիմ, հիանալի օրեր կ'ընեն, եթե փոխվին, մտադիր եմ ամբողջապես մնացյալ օրերը հոս անցնել, բարեկամներ շատ կան, այնպես որ օրերս պիտի անցնին հաճելիորեն:

Երկու անգամ է, որ կ'այցելեմ Մելիք-Հայկազյաններուն, միշտ քեզ կը հիշեն ու տաք համակրութեամբ կը խոսին վրադ: Ըրովհետև իրենց գրած ես եղեր Belle-Vue-էն հոս գալուդ մասին, ուստի կը սպասեն քեզ, կրնաս նե եկուր, հարմար առիթ է միմյանց հետ ավելի մտերմանալու և չփվելու:

Հիմակ քիչ մը քաշված կը պահեն ինքզինքը տեղվույս ուսանողներեն և իրավունք ունին: Ձիս ալ շատ սիրով ընդունեցին ու հորդորեցին ամեն օր իրենց այցելել, քանի որ պետք ունին անկեղծ բարեկամներու, բայց թե ի՞նչ խեր պիտի տեսնին... ոչինչ, լոկ բարեկամություն: Պատասխանիր նամակիս, դրե մտադրությունդ՝ պիտի գա՞ս, թե ոչ: Կը ենթադրեմ, թե գացած ես (...) և անշուշտ տեղվույդ հարուստ չրջանակին մեջ կը լողաս:

Ի՞նչ կընես, աղբա՛ր, չե՞ս տեսներ ինչ նոր դռներ բացվեցան գործելու համար: Արդյո՞ք աչքերդ դարձուցիր դեպի հայրենիքդ ու սիրած քաղաքդ: Ի՞նչ կ'անցնին ու կը դառնան: Տես, դաշնակցությունը ինչպիսի թափով կը գործե, հոն, արդեն բոլոր մեծ չեֆերը հոն են՝ Մալումյան, Զարդարյան, Ահարոնյան, Լեոն, Յարճանյան և այլն, և այլն, և այլն. ուրիշներ ալ կը պատրաստվեն երթալ: Էլ կա՞ գրագիրներուդ հնար ձեզ արդարացնելու ինքզինքներդ. ճնշում չկա, գրչի ու խոսքի ազատություն՝ Ցրանսայեն ավելի ու ավելի են:

Ըստ իս, ամեն հայ գործիչ երկրի մեջ ըլլալու է, ժողովըրդին մեջ աշխատելու ու զայն վերաչինելու, որուն այնքան պետք ունի: Ես ալ կ'ուզեի երթալ մայրս տեսնել 9 տարվա բացակայությենեն մը ետք: Բայց ուշ է, գործադրությունը հաջորդ տարվան հետաձգեցի: Կը նախանձեմ մեկնողներուն ի սրտե:

Եկուր այստեղ, երկար կը խոսինք ու լավ ժամանց պիտի անցուննենք Leman-ի գեղածիծաղ եզերքներու վրա:

Կը հուսամ, թե առողջությունս պիտի գտնեմ կատարելապես, լավ կուտեմ, կը խմեմ, կը զվարճանամ ցարդ, ողջ մնա բարերարը (Ա.Մանթաշյանը – Խ.Ս.):

Ինչպե՞ս է պ. Մելիքը ու իր հիվանդությունը:

Կը բարևեմ բոլորը: Հարգանոք՝

Շահ-Մուրատյան:

***

Ժնև, 28 օգոստոս, 1908

Սիրելի Զոպանյան

Նամակներդ առած եմ օրին:

Պ. Լևոն (Շանթը - Խ.Ս.), ճիշտ է, հոս է, բայց երեսը տեսնել դժվար է, այնչափ որ դաշնակիցականներեն չըրջապատված է: Երբ տեսնիմ, կը հաղորդեմ իրեն բարևներդ: Եթե կարող ես, եկ Ժնև հիմակ և ոչ թե սեպտեմբեր 20-ին. այդ ժամանակ ես կը պատրաստվիմ Փարիզ լինել, որովհետև առաջիկա տարվա, չափազանց աշխատութեյանց պատճառավ կ'ուզեմ մի քանի Մեծ և կտորներ պատրաստել Հունվարի քննութեյանց համար:

Ժնևն այնչափ հեռու չէ Փարիզեն. կարող ես այդտեղեն իսկ գրութեյուններդ ղրկել Տաղրամաճյանին: Եթե որոշած ես, Տաճկաստանի սահմանադրութեյան առթիվ, իրան ղրկել «Անահիտ»-ի մեկ համարը:

Հոս կրնաս ավելի դյուրութեյամբ և հաճույքով աշխատել: Մելիք-Հայկազյաններուն հաղորդեցի բարևներդ. փոխադարձաբար կը բարևեն քեզ: Եկուր էլի... Իրավ ճշմարիտ է, որ անգլիական (...) Մինաս Զերազ անունը կը կրե, որուն համար այնչափ խանդավառած են պոլսեցի հոսոսները... չնեղանաս այդ առթիվ: Եվ ստո՞ւյգ է իրեն Պոլիս մեկնումը: Մուրադն ու Սողոմոնն ալ Պոլիս հասած լինելու են: Հասնող հասնողի հետևեն կը վազե: Աստված բարին կատարե: Զըլլա, թե իրարու գլուխները պատռին... Տեսնենք, երկունս կա, լեառն ահագին... զի՞նչ ծնանի...

Երեկ պ. Շիրվանզադեն տեսա. ամբողջ օրն միասին էինք, Ձեր մասին պիտի գրե «Վտակին» թերթերում և կարծեմ «Զանգակում»՝ «Վտակին» հաջորդը:

Կարո՞ղ ես պ. Հովակիմյան ամառանոցի հասցեն ինձ ղըրկել:

Քեզ կը սպասեմ չուտով այստեղ: Համբույրներով՝

Քո Շահ-Մուրատյան:

***

16 նոյեմբեր, 1913

Սիրելի Զոպանյան

Երեկի concert-ես ետք, այս երեկո club-ի մեկ սրահին մեջ պ. Մարտեն Հակոբյանի հետ թեյ խմած պարագային, պ. Զոհրաբ և Սուրենյան (dentist) եկան մեզ մոտ նստեցան, աղվորիկ ձևով մը խոսք բացի քո գործունեությանդ մասին և գրեթե կես մը հանդիմանական և կես մըն ալ հորդորական ձևով չեշտեցի հոբելյանդ կատարելուն անհրաժեշտությունը, իբր երախտագիտական ցայտուն և իրական արտահայտություն մը քո քառորդ դարվա արվեստագետ ծառայության: Մասնավորապես ծանրացա Զոհրաբին վրա, որ այդ գործին գլուխը կանգնի, իբրև գրագետ և արժեք ունեցող մեծ մտավորական մը. շատ սիրով ընդունեց իմ այս առաջարկը և գյուտ ըրածի մը պես գոհ եղավ ու մարմին տալու այդ առաջարկությանս խոստացավ մասնաժողով մը կազմել. հետո ըսի, որ կարծիքդ առնե նախապես:

Մինչ Զոհրաբ դիմացի սեղանի վրա նստած քեզ կը գրե այդ մասին, ես ալ ամենամեծ գործ մը կատարելու սրտի մեծ հրճվանքով քեզ կը գրեմ այս երկտողը:

Եթե վերջերս փոքրիկ մը պաղություն մը անցավ մեր մեջ, սակայն մեկու մը, մանավանդ բարեկամի մը արժանիքն գիտեմ բարձր դասել անհմաստ նկատումներե: Ձեր առողջության, բարեկեցության հոգուս կը փափագիմ, որովհետև մեծ դեմք եք հայ իրականության մեջ և հայուն բոլոր գնահատության արժանի, որովհետև իրավամբ անոր փառքերեն մինն եք:

Այդչափ ըրածս ու քեզի գրածս ընդունեցեք սիրող ու գնահատող սրտի մը իբր ճշմարիտ արձագանգ, այդ անկեղծ զգացումներով քեզ կը համբուրեմ.

Ա. Շահ-Մուրատյան:

Հ.Գ. Եթե երբեք պետք տեսնաս այդ առթիվ ինձ գրել, ուղղե նամակս Սերթլյանին: Մարտին Հակոբյանը զիս տաքությամբ մը չնորհավորեց կարողանալու համար Զոհրաբը մեջտեղ հանելու:

***

Կ. Պոլիս, 1914, Հունվար 21

Սիրելի Զոպանյան

Զգիտեմ Իզմիրից քեզ ուղղված Նոր Տարվա առթիվ չնորհավորական քարտս ստացա՞ր, թե՝ ոչ: Զափազանց ուրախացա, երբ Մկրտչյանի նամակով իմացա քաջառողջ վիճակիդ մասին:

Ջեմ կարծեր, որ մարտի 10-են առաջ տեղդ գտնվիլ: Ինչպես կ'երևի, հոդ կան բարեկամներ, որք կաշխատեն առաջիկա saison-ին համար զիս engager ընել տալ Opera-comigue, մինչդեռ այդ անպիտան Ներսեսյանին մեկ խոսքը բավ էր, որ ես հոն մտնեի, քանի որ չատ intime կերպով նոր directeurներուն հետ բարեկամ է:

Մի՛թե ամեն հայ, հայու մը առաջադիմությունը կը բաղձա... 1000 ֆրանքնոց չեքը նեղություն կրեցեք, խնդրեմ, դանձել ու հանձնել մեր բարեկամ Մկրտչյանին... Միշտ քո՝

Շահ-Մուրատյան:

***

Նյու Յորք, 16.10.1915

Սիրելիդ իմ Զոպանյան.

Ոչնչով կարող եմ արդարացնել լռությունս... սակայն գիտցած եմ գործունեությունդ ու քո մասին քաղած տեղեկություններ այն անձնավորություններեն, որոնց հետ թղթակցության մեջ ես: Անշուշտ, ատիկա բավական չէ բարեկամի մը, եղբոր մը հանդեպ ունեցած պարտականությանց տեսակետով... Հայկական արդի դժնդակ կացությունը այսօր գամած է ամեն հայու ուշն ու ուղեղը: Բնավ չեմ ցավեր այն բանով, որ կյանքի, ապրուստի պայմանները դարձած են դժնդակ, գոնե կ'ապրեմ, կ'ապրեցնեմ ու կը չնչենք... Հայրենիքի ծովացած ցավերուն հետ մեծ, մեծկակ, բազմանդամ ընտանիք մը

կորսված, խոշտանգված թրքական բարբարոսութիւններեն գլխ կանդամալուծե... Ցավը համատարած է, մխիթարվենք ապագայի հուսով... չէ՞ որ «Մահը ընկերով հարսանիք է» ինչպես կ'ըսե հայկական առածը:

Ամերիկահայ գործերու մասին ոչինչ ունիմ ըսելու քեզ. դուն ինձմե ավելի տեղյակ ըլլալու ես՝ ունենալով հարաբերութիւններ այն տեղի աչքառու գործիչներուն հետ: Սկսած եմ concert-ներուս չրջանը, որոնց հասույթեն կեսը պիտի ղրկեմ չիփ-չիտակ կաթողիկոսին՝ գործածելու տաճկահայ փախստականներուն և կուվողներուն:

Ձափազանց ուրախ պիտի լինիմ քո մասին տեղեկութիւնները ունենալ քենե, առայժմ այսքան, տաքուկ համբույրներով՝ միշտ քո

Շահ-Մուրատյան:

***

Ֆրեզնո, 11. 12. 1915

Սիրելիդ իմ Զոպանյան

Ասկե գրեթե ամիս ու կես առաջ, կինս ու ես նամակ մը գրեցինք քեզ Troy-են, ուր գտնված էի երգելու. չգիտեմ ստացա՞ր, թե ոչ: 15 օրե ի վեր հոս եմ, ուր մտադիր եմ քանի մը concert-ներ տալ մի քանի քաղաքներու մեջ: Քանի մը օր առաջ բարեկամներես մեկը՝ էրզրումցի պ. Հաբեթ Նշկյան, շատ հետաքրքրվեցավ վիճակովդ, գուրգուրանքով ու մասնավոր հոգածութեյամբ, իրեն տվի դիտցած տեղեկութիւնները. օր մը եաք ինձ հանձնեց cheque մը 100 ֆրանքի ու խնդրեց ինձ զայն քեզ ղրկել: Անշուշտ, եթե հարուստ մը լիներ, ավելին պիտի ղրկեր, ատոր տարակուսյս չունիմ, զի չափազանց ազնիվ ու հայրենասեր անձնավորութիւն մ' է ու գիտակից ինտելիկենտ մը, ինչպես պիտի ըսեր Ռուսահայ մը:

Ես չնորհակալութիւն հայտնեցի իրեն քո կողմեն, թեև, սակայն, եթե այս նամակս ու cheque-ն ստանալու լինի սիրելիութիւնդ, լավ կ'ըլլար, որ ստացագիր մը ղրկեիր ինձ՝ իրեն

ցուլյց տալու, որ դրամն ղրկած եմ քեզ, ուղղամտութլյունս իրեն ցուլյց տալու նպատակով, ինչպես ըսի:

Այս պարագան միտս ձգեց, որ Ամերիկայում, ինչպես լսած եմ քեզմե, շատ մը հայեր «Անահիտի» բաժանորդներեն, տակավին քեզ պարտ են իրենց տասնյակ տարիներու բաժանորդագիրները. կարո՞ղ ես ու հարմար կը գտնի՞ս անոնց մեկ ցուցակը նամակով մը ինձ ղրկե, որ գանձիմ իրենցմե զանոնք: Ուրախ պիտի լինիմ այդչափ ծառայութլյուն մը քեզ ընել:

Կը հուսամ, թե այս անգամ վիճակիդ մասին կը գրես. կինս ևս շատ կը հետաքրքրվի անով ինձ հետ: Հա՛, հա՛, հա՛. Evelin-ս էլ չուտով ի վիճակի պիտի լինի քեզ գրելու:

Երեքս միասին քեզ կը ղրկենք մեր զգացումներեն լավագույնը և մաղթանքները շատ ու շատ՝ Նոր տարվա առթիվ. իցիվ թե նորութլյուն մը բերեր մեր տառապյալ հայրենիքին... Համբուլյրներով՝

քո Ա. Շահ-Մուրատյան:

Հ. Գ. Պատասխանդ ուղղե ինձ՝ Նյու Յորք, 614 135 th str., A. Chah-Mouratian:

***

Նյու Յորք, 27. 12. 1916

Սիրելի Զոպանյան

Շատոնցե վեր քեզ գրելու հաճույքը չեմ ունեցած, սակայն միշտ հետևած եմ հեռվից եղբոր մը գուրգուրանքով ու հետաքրքրութլյամբ, ազգօգուտ գործունեութլյանդ բոլոր շարժումներուն:

Կը հուսամ, թե ֆիզիքական առողջութլյունդ լավ է, հակառակ այնչափ մտազբաղ վիճակիդ: Ես ալ, այսպես թե այնպես, քարշ կուտամ կյանքս ընտանիքիս հետ, մեկ կողմեն կյանքս չահելով և մյուս կողմեն կրցածիս չափ օգտակար լինելով ազգիս: Անցյալ տաս ամիսներու մեջ ուր անգամ ձրի երգած

եմ այս ու այն ազգային բարեգործական ձեռնարկներու ի նպաստ և իմ սեպհական մի քանի համերգներուս կեսեն դոյացած 700 տոլլարի չափ գումար մը ղրկած եմ կաթողիկոսին ուղղակի: Անշուշտ պիտի չարունակեմ նորեն կրցածիս չափ օգտակար ըլլալ:

Ասկե քանի մը օր առաջ բարեկամս՝ պ. Հովսեփ Նշկյանը ինձ ղրկելով դարձյալ հարյուր ֆրանքի մը չեքը, կը խնդրեր ինձմե զայն քեզ ղրկել: Կը ցավիմ, որ այս անգամ ճիշտ Նոր Տարիի առաջին օրը ձեռքդ չպիտի հասնի անցյալ տարվան պես:

Ստանալուդ պես, սիրելի Զոպանյան, ստացական մը և կամ իմ նամակիս մեջ ակնարկութիւն մը ըրե, որ իրեն ցույց տամ նամակս:

Փոքրիկս բավականին մեծցած է ու չատ ուշիմ և հետաքրքիր եղած է. հիմիկվանե արդեն ֆրանսերեն կը խոսի, գերմաներեն կը հասկնա ու հայերեն և անգլերեն ալ...

Շիտակն ըսելով՝ ձանձրացա այս Ամերիկայեն, մանավանդ հայկական կյանքեն, որ ոչինչ ունի իրապես հուսադրող, չնորհիվ իր կուսակցական ճղճիմ հանգամանքներու:

Զգիտեմ, սիրելի՛ս, արդեն լսա՞ծ ես մեր սիրելի բարեկամ տոքթ. Սերոլյանը 1915-ին ուրիշ չատ մը բժիշկներու հետ էրզրումի ղրկված է եղեր ծառայելու, հոն բծավոր թիֆոն բռնվեր ու մեռեր է դժբախտաբար խեղճ տղան...

Ամերիկյան նախկին դեսպանի անձնական գրագիր պ. Անտոնյանեն իմացա, նաև ուրիշներե, իր մահվան մասին: Կը զգամ, թե որչափ ցավ պիտի զգա զգայուն սիրտդ այդ մեր տաղանդավոր բարեկամի մահվան առթիվ: Հանգուցյալը ինձի պարտ էր մոտավորապես 2600 ֆրանքի չափ գումար մը, առանց պարտամուրհակի, այդ գումարեն 1200 ֆրանքը իր հրահանգով քո ձեռամբ – եթե կը հիշես – տրվեցավ իր գրքի հրատարակչին. պիտի խնդրեի քենե, որ վերագիր մը տայիր այդ առթիվ՝ իր եղբայրներուն ցույց տալու, եթե պարագան գալու ըլլա: Ինքը ապահովագրված էր իմ անունիս... (1000 անգլ. ոսկիի): Պատերազմե ետք, եթե կարելի ըլլա գանձել, այն ատեն իմ դրամս առնելե ետքը, մնացածը կը հանձնեմ իր եղբայրներուն:

Նոր Տարվա առթիվ ընդունե անկեղծ չնորհավորանքներս,

երկար ու առողջ կյանք: Միշտ քո

Արմենակ Շահ-Մուրատյան:

Հ.Գ. Կինս ալ հաճախ կը հիշե քեզ ու կ'ուղղե իր չնորհավորանքները:

***

Նյու-Յորք, 2.10.1918

Սիրելի Զոպանյան

Ժամանակին առած եմ նամակդ, դժբախտաբար չկրցի անմիջապես պատասխանել սիրելուբյանդ, սակայն ճիշտ է, որ կուզեի միևնույն ժամանակ Suite մը տալ գրուբյանդ:

Հրաչի մասին դիմեցի անմիջապես հոս, Հ. Յ. Դաշնակցուբյան կետրոնական վարչուբյուն. ուրախ եմ ըսել, որ նա ի նկատի ունեցած է դիմումս և հարկ եղած կարգադրուբյուն ըրած արդեն, այսինքն հոդ գրած ըլլալու է Ա. Հանըմյանին, որ պետք եղած հոգատարուբյուն չխնայվի Հրաչին:

Սիրելի Զոպանյան, ուրախ եմ՝ դեթ այս անգամ կրցի խընդիրքդ կատարել հանձին մեր սիրելի Զարդարյանի տաղանդավոր մեկ զավկին:

Ներփակ կը ղրկեմ կետրոնական վարչուբյան ինձ գրած նամակը:

Այս այսպես:

Պողոս փաշայի պաշտոնի նկատմամբ հարուցած խնդիրը ու քննադատուբյուններդ իրավացի են ու համաձայն հայ նույնիսկ եկեղեցական տեսակետի սահմանադրական զգացումին ու սկզբունքին: Տամատյանի ու իբեն պես մտածողներու, ինչպես նաև քուռ, ազգավնաս կոչնականներու բռնած դիրքը – հայհոյողներն ու աղմկողները պնակալեզներու, կեղծավորներու հատուկ ընթացքներ են – կարևորուբյուն մի՛ տուր անոնց, շարունակե՛ քո ազգասեր գործունեուբյունդ, որուն համար կը պաշտեմ քեզ:

Սակայն չպիտի նեղանաս, սիրելիս, եթե, իբր եղբայրդ, թուլլ կուտամ քեզ հայտնել հետևյալ համեստ կարծիքս. ինձ կը թվի, թե Կովկասի վերջին հարաբերութիւններու մասին հայտնած կարծիքներդ – թուրքերու հետ ըրած հայոց հաշտութիւնը – անտեղի էին, որովհետև ոչ ոք գիտեր, թե ան ինչ պարագաներու արդիւնք է. դուն Կովկաս կը ճանչնաս կովկասցիի մը պես: Հոն կա մտավորականութիւն մը, որ չբաղդատվիր, գոնե հոս տեղիներու հետ, որոնց մեծամասնութիւնը ամեն անցուդարձի մասին կը ճառե, կը քննադատե աչ ու ահյակ: Ըստ իս հայերու Կովկասի մեջ բռնած ընթացքը սոսկ դիվանագիտական հանգամանք ունի, իբր միակ հնարք՝ ազատելու 2 միլիոն հայութիւնը, ես վստահ եմ, թե ամեն ողջամիտ մարդ չպիտի դատապարտեր այդպիսի ընթացք մը: Ես համոզված եմ, թե ապագային, խնդրույն մանրամասնութիւնները երբ հասնին, պիտի իրավունք տաս այս կերպ մտածումին:

Կը հուսամ, թե այլապես աղեկ ես, քաղաքական վերջին դեպքերը, կը կարծիմ, թե պատերազմը վերջին փազին մեջ դրավ այլևս, տարի մը չէրացած, պիտի տոնինք անոր վերջավորութիւնը դաշնակիցներու փառավոր և վերջնական հաղթութիւյամբ, որ մերն ալ է..Համբուրներով՝

քո Շահ-Մուրատյան:

Հ.Գ. Տիկինս կը բարևե, փոքրիկս կը համբուրե քեզ:

***

Նյու-Յորք, 4.1.919

Սիրելի Զոպանյան

«Հայրենիքի» խմբագրութիւնը ինձի պատասխանեցավ, որ Հրաչի խնդիրը կարգադրված է արդեն, այնպես որ այդ մտահոգութիւնն ալ վերջ մը գտավ:

«Վերածննդի» բաժանորդները – անոնք, որոնք իմ առաջարկութեյան վրա բաժանորդագրվեցան, միշտ տրտունջ հայտ-

նած են, թե թերթը կանոնավորապես իրենց ձեռքը հասած չէ կամ չէ ղրկված. օրինակ պ. Թեմուրյանը (Փիլատելֆիա) 8 ամսե ի վեր թերթի երեսը տեսած չունի, ատով հանդերձ պատրաստ է վճարելու: Տեղական սովորութեամբ մը բաժանորդները կը վճարին իրենց պարտքը այն ատեն միայն, երբ ձեր կողմե հաշվեցուցակ մը, ավելի ճիշտ ստացագիր մը ղրկվի ամեն մեկին:

Դյուրութիւն մը տալու համար այս անգամ հաջողեցա պատվական հայրենակից մը գտնել ու համոզել զինք, որ ստանձնե գործակալի պաշտոնը: Տոք. Հակոբյան (ատամնաբույժ), որուն արժեքարտը պիտի ստանաք ներփակ: Թող տոք. Համբարձումյանը հաճի անոր հասցեին ղրկել պիլ-երը, գանձելե ետքը ձեզ ղրկե: Այդպեսով լավ գործակալ մը կ'ունենանք ի Փիլատելֆիա:

Այստեղի (Նյու-Յորք) բաժանորդներեն՝ պ.պ. Վ. Տոնապետյան և Գ. Հակոբյանը չեն ուզեր շարունակել այլևս այս տարվա բաժանորդագրութիւնը, թերթի անկանոնութիւնը պատճառ բռնելով, իսկ հին պարտքերը պատրաստ եմ ես գանձել, միայն թե հաճեցեք պիլ-երը ղրկել Վարդերեսյան եղբարց...

Կլեմանսոնի կառավարութեան բռնած դիրքը, մասնավորապես հայոց նկատմամբ, զզվելի է. եթե իրենք հաջողին վեհաժողովին մեջ իրենց նպատակին հասնել, այն ատեն պիտի գտնին իրենց դեմ զինված ու (...) հայուն ողջ մնացած բեկորները: Փիշոնը առանց կարմրելու բարեկամներ գոչեց թուրքերը:

Ջեմ կարծեր, թե մասնավորապես Ամերիկան, Իտալիան, նույնիսկ Անգլիան՝ անուղղակի թույլ տան Ֆրանսայի այդչափ բռնապետական միտումներ ունենալ: Ջպիտի զարմանամ երբեք, եթե հաստատվի, թե Պողոս փաշան գաֆեր ըրած ըլլա Ֆրանսական կառավարութեյան Հայաստանի նկատմամբ... Նոր Տարվա առթիվ ընդունեք եղբայրական ջերմ համբույրներս, երկար ու երջանիկ տարիներ կը մաղթեմ քեզ՝

Շահ-Մուրատյան:

***

18. 06. 1924

Սիրելի Զոպանյան

«Պայքար»-են իմացա, որ ամսուս վերջերը պիտի մեկնիս Փարիզ: Անկարելիութեան պատճառաւ պիտի զրկվիմ մեկտեղ ճամբորդելու դերագույն հաճույքն ունենալե:

Վերջին երգահանդեսս տեղի պիտի ունենա Հուլիս 3-ին:

Կը մաղթեմ քեզ հոգովս բարի ու զվարճալի ճամբորդութիւն մը:

Համբույրներով՝ միշտ քուդդ

Շահ-Մուրատյան:

ՏԵՆՃՅԱՆԻՆ

Լոնդոն, 6. 11. 1924

Սիրելի տոքթ. Տենճյան

Ազնիվ բարեկամս, Անգլիա գալու երկու երգահանդեսներ տալու նպատակավ երեկ անգլիական հյուպատոսը առարկութիւն ըրավ փասփորթս visa ընելու, առարկելով, թե քանի որ երգելու համար պիտի երթաք Լոնդոն, պետք է որ հրավիրագիր մը ներկայացնեք ընկերութեան մը և կամ manager-ի մը կողմանե, այլապես այս տեղեն դիմեցնեք minister-ի labor-ին Լոնդոն առանձին արտոնութիւն խնդրելու... Ալ արդեն եղածն եղած է, և պիտի խնդրեի Ձեր բարեկամութեան, որ բարեհաճեիք հաստատութեան մը անունով և կամ որևէ կերպով արտոնութիւն ձեռք բերել ու ինձ ղրկել փոստով, որ կարողանայի ճամբա ելնել, որուն համար պատրաստված եմ արդեն: Այդ առթիվ գրեցի նաև դպրոցական ընկերոջս՝ Ա. Րաֆֆիին, այս թղթագրով՝ հուսալով միասին կամ առանձնապես պիտի ընեք կարելին:

Այդպիսի խնդիրներու մասին պ. Սմբատ Քեսեճյան փորձառություն ունի. ինքը բերել տված է հոդ անցյալ տարի պ. Աբելյանը (դերասան), դժբախտաբար իր հասցեն չունի, որ Ձեզ ղրկիմ: Ձեզի կարող է օգնել, եթե ժամանակ չունեք, պ. Ա. Սաֆրաստյան բարեկամս:

Կը խնդրեմ սիրելութենեդ, որ ներողամիտ լինեք Ձեր բարեկամությունը չարաչար, թերևս գործածած լինելուս համար՝ խնդրելով Ձեր ներողամտությունն, բարեկամական անկեղծ զգացումներով Ձեզ և Ձեր պատվական տիկին (...) և օրիորդներուն:

Ձերդ Ա. Շահ-Մուրատյան

Հ.Գ. Եթե կարողանամ հոդ վստահելի և ծանոթ manager-ի մը հետ համաձայնության մը գալ ու երգահանդես տալ, շատ ուրախ պիտի լինեի:

ԱՐՇԱԿ ՍԱՖՐԱՍՏՅԱՆԻՆ

Փարիզ, 17. 11. 1924

Սիրելի Սաֆրաստյան

Տոքթ. Տենճյանին գրած նամակս, հոդտեղ գալու առթիվ, ըստ իրեն՝ քեզի հանձնած ըլլալու է. ցարդ անոր մասին քենե լուր մը չառնելու համար թուլլ կուտամ ինձի գրելու քեզ այս նամակը ու հարցնել սիրելութենեդ, թե արդյոք հետամուտ ես պետք եղած թուլլտվությունը ձեռք բերել, չեմ կարծեր դժվարության բախինք, մանավանդ որ ամերիկյան քաղաքացի եմ:

Վստահ եմ, թե սիրելությունդ հարկ եղածը պիտի ընես ու արդյունքի մասին ամենաուշը այս շաբթուս ինձ հայտնես, որպեսզի գիտնամ այս սկսող saison-ի ինչ ընելիքիս մասին որոշ քայլեր առնուլ:

Սիրելի Արշակ, վստահ եմ, թե ձեռքեդ եկածը չպիտի խնայես բարեկամիդ ու հայրենակցիդ համար:

Տոքթ. Տենճյան, բարեկամս, իր ինձ գրած նամակում կ'ըսեր, թե ինքը չատ զբաղված լինելուն նամակս, ինչպես ըսի վերևում, քեզի հանձնած է ու վստահություն կը հայտնե, թե դուն ամեն ինչ կը կարգադրես չուտով: Քեզի տեսնեմ, սիրելիս, օ՜ն հառաջ... հապոն հառա՜ջ, հառա՜ջ...

Այստեղի գաղութը մեռած գաղութ մ'է, ինչպես միշտ՝ թվով չատ, որակով՝ քիչ ու իրարմե բաժան, հայը ե՞րբ հավաքական իտեալ կյանք մը ներկայացուցած է, մանավանդ գաղութներու մեջ:

«Էմ լե զէն Կիկոն, էմ լե զէն Կիկոն», - ինչպես պիտի ըսեր մչեցին...

Կը հուսամ, թե աղեկ ես, ի մոտո քեզ տեսնելու հաճույքով, քեզ միշտ անձնվեր բարեկամ-հայրենակից՝

Ա. Շահ-Մուրատյան:

Հ.Գ. Սիրալիր բարևներս Տեր և Տիկին Տենճյանին և համբույրներ քեզի:

Նույն

***

Փարիզ, 3.12.1924

Սիրելի Սաֆրաստյան

Կը հաճի՞ս ինձ երկտողով մը ըսել՝ տաս օր առաջ քեզ գրած նամակս ստացա՞ծ ես: Դիմում ըրա՞ծ եք հարկ եղած տեղը՝ արտոնություն ձեռք բերելու համար: Եթե կարելիություն կա կամ չկա, կը հաճի՞ք քարթով մը ինձ գրել, որպեսզի հակառակ պարագային՝ եթե անկարելի է հոդ գալ, ժամանակ չկորցրած, Մարսելիա ու անկից ալ Եգիպտոս մեկնիմ:

Պարապությունը թե՛ նյութապես և թե՛ բարոյապես չատ կը նեղե զիս: Համբույրներով քույդ՝

Շահ-Մուրատյան

Հ.Գ. Հարգանքներս տոքթ. Տենճյանին և իր պատվական ընտանիքին:

կը սպասիմ ակնդետ երկտողիդ և խնդրելով այդ մասին ներողամտութիւնդ:

ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

Փարիզ, 9 նոյեմբեր, 1927

Սիրելի պ. Չոպանյան

Ինչպես քեզ ըսի նախապես, քանի օր մ'այն պիտի մնամ Փարիզ՝ երգահանդեսես մնացած ապառիկները գանձելու:

Չգիտեմ քեզի գոհացում տված պիտի ըլլա՞մ, եթե ուշացնեմ մեկնումս 10-12 ավուր մը չափ: Ինչպես դիտես, Մարսէլիայեն ամեն օր մեկնող նավեր չկան: Եթե իրականին մեջ իմ ներկայութիւնս անհրաժեշտ կը նկատվի ու կրնա որոշ քանակութեամբ մարդիկ քաշել, այդչափ զոհողութիւն մը հանձ կառնիմ պայմանավ, որ իմ ծախքերս վճարվեն, քանի որ դուն ալ նամակիդ մեջ կը գրես՝ «ճանապարհիդ և ծախքերուդ համար, անշուշտ, Dedonemagement մը հանձն պիտի առնին տիկիններըը»:

Մտերմորեն քեզի կ'ըսեմ, սիրելի Չոպանյան, որպեսզի թյուրիմացություն մը չըլլա ապագային ու ըստ նախկին սովորութեան ինձ վճարվի 50-100 ֆրանք մը, ստիպված եմ որոշել այդ գումարը: Իմ պարագան, որովհետև բացառիկ հանգամանք կը կրե, եթե հոս եղած ըլլայի մշտապես, մյուս արթիստներու պես, ուրախ կ'ըլլայի բոլորովին ձրի երգել, ինչպես ըրած եմ միշտ ուրիշ անգամներ:

Համանման պարագաներու տակ Ամերիկայում, ինչպես գիտեք, ինձ վճարված է միշտ 100 տոլար և մոտ 25-40 տոլար ևս իբր ճանապարհածախս զատեն, նայած հեռավորութեանը, սակայն այստեղ Ամերիկա չէ, և ես կուզեմ միս մենակ ծախքերու անունով ինձ վճարվի (քանի որ ատոր համար պիտի հետաձգեմ մեկնումս) 500 ֆրանք:

Ինձմե կախում ունի ընտանիքի մը գոյությունը, 10-12 ավուր մեջ կարող եմ առաջին պատեհությամբ Աղեքսանդրիա երգահանդես մը կազմել և ամենաքիչը 20-40 ոսկի չահել արդեն սկսված saison-ի մը մեջ:

Այս հայտարարութիւնները չպիտի տայի ուրիշի մը, քեզ կը գրեմ, իբր հարազատ եղբոր մը որպեսզի տարբեր մեկնութիւններ չտրվին:

Ջերմ համբույրներով՝ քուդդ

Ա. Շահ-Մուրատյան:

Հ.Գ. Հարկ կա՞ ըսել, որ պետք է երկտող մը ստանալ սիրելուհիենեդ այդ առթիվ:

Նույն

***

Փարիզ, 14 նոյեմբեր, 1927

Սիրելի Զոպանյան

Կը ներես, սիրելիս, նամակիդ ուշ պատասխանելուս համար. անմիջապես անկարելի էր ինձ որոշ բան մը ըսել:

Իմ նպատակս էր այս չաբթու մեկնել, սակայն, դժբախտաբար, չաբաթ օրվանե ի վեր զորավոր հարբուխ մը բռնած եմ, տունեն դուրս չեմ ելներ, որպեսզի քանի մ'օրեն անցնի ան:

Հարկ կա՞ ըսել, որ չաբթուս չպիտի կրնամ մեկնել Եգիպտոս: Գալով նվագահանդեսին մասնակցելու խնդրույն, չգիտեմ ի՞նչ ըսել: Ուրախութեամբ կ'ուզիմ մասնակցել, գրածիդ համաձայն, եթե ի վիճակի լինիմ vocalement-ի կը վախնամ, թե խոսք տալես վերջը, մինչև այդ օրը բոլորովին աղեկ չզգամ ինքզինքս ու չկրնամ խոսքս հարգել, ու մասնախումբը զիս քարկոծն հանիրավի: Թեև ինձ այնպես կը թվի, թե պիտի կարողանամ մասնակցել: Ջեզի կը հայտնեմ վերջնական որոշումը, եթե այո ըսեք, այն ատեն accompagniment-ի (pianist) խնդիրը Ջեզի կը մնա կարգադրել և հետո, ինչպես սովորութիւն է, ինձ պիտի ընկերանան կինս ու աղջիկս, քանի որ արթիստ մը ուր որ երթա, իրավունք ունի ամենաքիչ երկու Invitation-ի... Միշտ Ջերդ անկեղծորեն՝

Ա. Շահ-Մուրատյան:

Հ.Գ. Այսօր քիչ մը աղեկ կը զգամ ինքզինքս և ամեն մի-
ջոց ձեռք առած եմ, որ քանի մ'օրեն անցնի հարբուխս:

Նույն

***

Փարիզ, 17 նոյեմբեր, 1931

Սիրելի Ա. Զոպանյան

Երեկ Հ. Պլուզյան անունով 22 տարեկան տղեկ մը ինձ
ներկայացավ, որուն տեսած, ավելի ճիշտ հանդիպած եմ տա-
րիներ առաջ, Պեյրութ գտնված պարագային: Իր ըսածին նա-
յելով, լավ պարիթոն ձայն մ'ունի՝ ապագա խոստանալու չափ:

Քանի որ օր. Մ. Բաբայան զինքը լսած է, վստահ եմ թե, ե-
թե ձայնը արժեքավոր է, ապագա կը խոստանա - չպիտի մեր-
ժե իրեն հետ պարապելու: Գոնե այնչափ մը պատրաստել
զինքը, եկող տարվա «saison»-ին Concervatoire-ի քննութեանց
մասնակցելու չափ: Օրիորդը Ձեզ շատ կը հարգե և չպիտի
մերժե Ձեզ, եթե գտնե, որ տաղանտ ապագա կը խոստանա: Իր
ըսածին նայելով՝ կյանքը հազիվ կը շահի: Ուրախ պիտի ըլլար
այլապես վճարելու օրիորդին:

Իբր թե իտալացի professeur մը շատ հավնած է իր ձայնին
և փափաքած է իրեն դաս տալ, սակայն վճարումով մը:

Եթե օրիորդը տեսնելու պատեհութիւն մ'ունենամ, կը խո-
սիմ իրեն, սակայն վստահ եմ, թե Ձեր խոսքը շատ ավելի ազ-
դեցութիւն պիտի ընե...

Հարգանոք Ձերդ անձնվեր

Ա. Շահ-Մուրատյան:

ՇԱՀԵՆԻՆ

Փարիզ, 10 փետրվար, 1933

Սիրելի և անմոռանալի Շահեն

Վեց տարիներու երկար ժամանակե մը ետքը միայն
կուգամ լռութիւնս խզել: Նամակ գրելու դատապարտելի

ծուլութիւն ունիմ: Հորեղբորս միակ զավակը կը գրե ինձ ժամանակ առ ժամանակ ու կը դատապարտե զիս աններելի ծուլութեանս համար: Կինս է իրեն պատասխանողը: Վերջինիս կինը ֆրանսերեն գիտնալով՝ կը թարգմանե իրեն:

Քո վերջին նամակը և բանաստեղծութեան հատորը ստացած եմ ժամանակին ու երբեմն-երբեմն կը կարդամ ուշիուշով ու կը գոհանամ՝ սրտով ու դլուխով: Որոշած եմ ամեն կերպով վերադառնալ նոր հայրենիքս ու հաստատվել վերջնականապես ու վերջ տալու այս չարժուն կյանքիս: «Փուխրական ծառը արմատ չի բռներ...»

Կարոտցած եմ Ամերիկան և ավելի շուտ՝ գաղափարական ընկերներս և բարեկամներս... Այստեղ կյանքը համեմատաբար աժան է, սակայն ապրուստը աննշան և անապագա: Ես, իմ վեց տարվա ճամբորդութեանս, Փարիզեն մինչև Ճավա... ամեն հանդիպած տեղ համերգներ տալով՝ լավ դրամ չահեցա, սակայն մյուս կողմե աղջկաս հիվանդութեանը՝ արյունապակասութեան արագ աճեցողութեան պատճառավ կորանցելու դըժբախտութիւնը պիտի ունենայինք: Անմիջապես, մեր տան բժշկի խորհրդով՝ Փարիզեն դուրս, լեռան մը կողի վրան չինված սանաթորիում (հիվանդանոց) փոխադրեցին, իմ բացակայութեանս ժամանակ: Կինս տուն-տեղը քանդելով, հաստատվեցանք սանաթորիումին կից դյուղաքաղաքում: Կրնաս ի նկատի ունենալ, թե ինչպիսի խոչոր ծախքերու ենթարկվեցա... Տուն մը քանդել, կարասիներով հանդերձ և նորեն նոր կահ ու կարասիքով ուրիշ տուն մը վարձել: Որպեսզի մոտ լինի սանաթորիումին՝ օրական այցելութիւնը ընելու համար... Հապա հիվանդանոցի բոլոր խնամքներու ծախքերի համար... «Զորն ասեմ և զորն խոստովանեմ...»: Մեկ խոսքով ասած, դրամներս ցնդեցան:

Էստեղ ապագա մը կարելի չէ հիմնել և դրամ աշխատել, միայն միջակ ապրուստ մը: Երկար պիտի ըլլա այստեղի մասին նամակով ձեզ պատմել, հոդ եկած առեն դլուխ-գլխի տանք սիրելի քրոջս՝ Հրանուշյի պատրաստած սուրճի կամ չայի բաժակը առջևնիս, խմենք ու խոսենք ամեն նյութերու՝ իմ ճամբորդութեան մասին:

Սիրելի Շահեն, հոդ գալու համար ստիպված եմ փոխադրվիլ գույքերով և վերջնականապես: Առայժմ կինս ու զա-

վակս կը մնան հոս և նյութապես վրաս բեռ մը չեն, բավարար կերպով իրենց կյանքը կը չահին և լիուլի: Իմ ճանապարհածախս, անհրաժեշտ իրեղեններուս, երաժշտական գրքերուս և հոդ կարենալու առ առավելն համերգ մը կազմակերպելու համար ինձի կը պակսի 60-70 տոլար. ահավասիկ պիտի խնդրեի, իբր եղբայր, առանձին կամ պ. Գազանճյանին հետ մեկտեղ այդ գումարը ինձ առաջին փոստով ղրկելու հնարավորութիւնն ունենայիք, չափազանց երախտապարտ պիտի մնամ... Այդտեղի համար գումարը մեծ չէ, առաջին երգահանդեսիս արդյունքը, նույնիսկ չատ մատչելի գներով, կը բավարարի վճարելու ձեր պարտքը:

Կը խնդրեմ պատասխանեք անմիջապես, առանց ժամանակ կորսնցնելու:

Սիրո տաքուկ համբույրները՝ Սոնիային և Սիլվիային, հարգանքները՝ տաքուկ և անկեղծ՝ պատվական տիկին Հրանույշին, իսկ քեզի... կը խնայեմ, և Գազանճյան ընտանիքի բոլոր անդամներուն ջերմ հարգանքներս և անմոռաց գաղափարական հուշեր...

Ա. Շահ-Մուրատյան

Հ.Գ.՝ Սիրելի քույրի՛կս, նամակիս պատասխանը, այո՛ կամ ո՛չ, չձգես էդ վռընչիկ Շահենը ուշացնես... Միշտ ձերդ սիրով:

***

Փարիզ, 23 մարտ, 1933

Սիրելի Շահենս

Ժամանակին առած եմ նամակդ, քանիցս կարդացած: Հոս ըլլայիր նե, համբույրներու լոգանք մը պիտի տայի քեզ... այնչափ որ կարոտած եմ քեզ...

Այս տեղի բանքերեն ոչ մեկը ընդունեց չեքը, որովհետև չեքը պետք էր տրվեր այս տեղի որևէ բանքի անունովը:

Բարեկամներես մեկը ըսավ, բարեբախտաբար, որ Հոլանդական բանքը միայն այդ կրնա ընելու, ատով կը զբաղի:

1910 р.



1912 р.

Վազեցի հոն անմիջապես: Ձեզդ առին ու անոր փոխարեն ստացագիր մը տվին ինձ, ըսելով՝ ամիս մը վերջը միայն, Ամերիկայեն գանձելեն ետքը կուգաք՝ գանձելու դրամդ:

Ես, որ հևիհև էի մեկնելու այս մի քանի օրերու մեջ, ստիպված եմ ամիս մ'ալ սպասել, անճար, ինչպես առածը կ'ըսե. «Ավելի լավ է ուշ, քան երբեք»: Քո նամակդ, այնչափ տաքուկ, եղբայրական զգացումներովդ լի, զիս չափազանց հուզեց:

Դուն միշտ նույն հայրենաբաղձ բանաստեղծ վանեցի վոըշիկն ես՝ զգացումով բանաստեղծական շաղախ և համամարդկային վերելքովդ միաժամանակ...

Գազանճյանի հիվանդությունը ինձ շատ ցավ պատճառեց... Արժեքավոր և գաղափարական տիպար ընկեր մըն է: Մի՞թե կարելի միջոցներ կը պակսին... ափսո՜ս: Իմ կողմե հատուկ հարգանքներս, հայտնե իրեն և ապաքինում մաղթե: Բարևներ նաև Սյունիին, պ. Հովսեփյանին և տոքտոր Կյուլեզյան ընտանիքներուն:

Պարտք կը դնիմ վրադ՝ իմ լավագույն եղբայրական զգացումները տիկին Հրանույշ քրոջս և բյուրավոր համբույրներ ու գգվանքներ՝ շատ սիրելի զույգ մը դստրիկներուդ՝ Սիլվիային ու Սոնիային:

Սիրելի Շահեն, հիմիկվընե սկսյալ ու առավոտ կանուխ լուսաբացին կոչնակը ձեռքդ առ ու խելառ հարվածներ իջեցուր տախտակին՝ գլխին, փորին և ուսին... կանչելով՝ օրհնյա՛լ է ժամը, հրամեցե՛ք...

Սիրելիս, հոդ խոսելու պաշար չի մնաց, բան մը չեմ ըսեր հիմիկվընե, այդ վերապահե այնտեղի համար:

Հրանույշ քույրիկիս անույշ ապուրը՝ սոխով ու սոխառածով, կ'ուտենք ու կը խոսինք...

Առայժմ, տաքուկ համբույրներով և անկեղծ ու գողտրիկ զգացումներով՝ մնամ Ձերդ միշտ

Ա. Շահ-Մուրատյան:

ՕՏԱՐ ՄԱՄՈՒԼԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ

***

Հայազգի թենոր Շահ-Մուրատյան երգեց Ժոզեֆի «Ի զուր Փարավոն» եղանակը... իր համբերատար ճիգերուն չնորհիվ, առոգանութիւնը կատարելագործված է արդեն, բայց արտասանութիւնը դեռ բավական բարբարոս կը մնա. բայց ի՜նչ հրաշալի օրկան: Ի՜նչ հազվագյուտ «թեմպը» և ի՜նչ հրապուրյր՝ ոլորումներուն մէջ: Այս գնահատման մեջ ոչինչ կա չափազանցյալ:

Քոմետիա, 2 Հուլիս, 1908

***

Շահ-Մուրատյան եթե դեռ չունի որոշ արտասանություն մը, կ'երգե՛սակայն զգացմամբ. ունի կրակ, փայլ, անկեղծություն, Ժոզեֆի դասական եղանակը հասարակության կողմե մեծ հաջողություն գտավ:

Կոլուա, Հուլիս, 1908

***

Պ. Շահ-Մուրատյան կ'երգե Կլյուքի կտորը իր շատ գեղեցիկ ձայնով, իր շատ ուշադրավ երաժշտական ճաշակով և իր վարպետին լավ արտաբերելու արվեստովը:

Քոմետիա, 1908, Հուլիս

***

Մրցակիցներեն մին միայն ունի բավական նշանակելի ձիրքեր, որպեսզի կարելի ըլլա այժմեն իրեն խոստանալ փայլուն ապագա մը. այն է Պ. Շահ-Մուրատյան, երիտասարդ Հայ մը...

Դեռ պետք ունի կատարելագործվելու և նախ՝ ազատելու օտարականի հնչումեն. լավ ըրին առաջին մրցանակ չտալով, բայց երկրորդ մրցանակ տալու էին. պարզ հիշատակություն մը, զոր տվին՝ անարդարություն մըն է, Պ. Շահ-Մուրատյան թենոր մըն է՝ իսկապես շատ գեղեցիկ, զորեղ ու ճկուն ձայնով, ուժի կտորներու մեջ՝ կարող փայլ արձակելու, կես-երանգի հատվածներուն մեջ՝ թավշայնությամբ զմայլելի: Եվ այս երիտասարդը, որուն դաստիարակությունը այնքան արագ է կատարված, կ'երգե արդեն շատ հասկացողությամբ և արտահայտությամբ. անհունապես հաճելի եղավ Ժոզեֆին կտորին մեջ: Պետք է դեռ աշխատի, բայց արդեն արվեստագետ մըն է:

Էքլեր, 1908, Հուլիս

***

Շահ-Մուրատյան, Հայ մը, որ հակառակ որոշ աստիճանով օտարական հնչումի մը՝ ոչ սակայն չափազանց, ինծի համար այս մրցման լավագույն մասնակցողն է: Ասիկա արվեստագետ մը պիտի ըլլա կարծեմ: Օժտված թենորի աղվոր ձայնով մը, շատ ազատ, և որ քաղցրությունը կը միացնե ամրության, շատ սիրուն կերպով երգեց Ժոզեֆի զմայլելի եղանակը, ջերմությամբ, հրապույրով և լավ զգացմամբ մը: Լավ արտասանություն, լավ «ֆրազե» և արդեն՝ ոճի ըմբռնում:

Լը Մենեսթրել, Հուլիս, 1908

***

...Պ. Շահ-Մուրատյանի ձայնը ծավալուն հստակություն մը ունի. Քոնսերվաթուարին ամենեն գեղեցիկ թենորի ձայնն է: Համառ աշխատանքով հաջողեր է զայն զմայլելի կերպով գործածել կարենալու, սրբագրելով՝ որքան որ կարելի էր՝ իր օտարականի հնչումը: Ահա բնական ձայն մը, լավ թեմպրով, լավ հղկված, և որ երբեմն կարող է հզոր դառնալ: Երգիչը կրակոտ է ու թրթռուն: Կարելի է փափաքիլ, որ քիչ մը նվազ թենորիզե ընե: ...Իբր դերասան, Պ. Շահ-Մուրատյան երբեք ձախավեր չէ: Իսկապես, ՊՊ. Իսնարտոն և Քազնյով կարող են պարծիլ այն վիճակով, ուր բերեր հաստւցեր են այս աշակերտը, որուն դաստիարակությունը մասնավորապես դժվար է:

Քոմետիա, 1909, Հուլիս

***

Ինչո՞ւ մրցանակ չտվին (երգեցողության համար) Պ. Շահ-Մուրատյանին, որ հմայիչ թենոր մըն է զմայլելի «թեմպրո» ունեցող ձայնով, և որ մեծ աշխատանքով բոլորովին ազատած է օտարականի հնչումեն ունէ թուլուզցիե մը ավելի մաքուր արտասանութեամբ, այդ երգիչը, որ ամբոխները հուզելու սահմանված է, արտահայտեց Ջրեյշիցի դժվար եղանակ մը: Պատի՛վ դժբաղդ քաջութեան:

Վիլլի (Քոմետիա)

***

Պ. Շահ-Մուրատյան, թենորի չատ աղվոր ձայն, կրակոտ վերթեր մը՝ պարզ ու բնական ձևերով:

Լա Լանթերն, 1909, հուլիս

***

Պ. Շահ-Մուրատյան, աշակերտ Պ. Խնարտոնի, աղվոր ձայն, չատ ճաշակով կ'երգե. արտահայտիչ ու պարզ խաղացվածք, լավ մրցում՝ Լյուսի տը Լամերմուրի քիչ մը հինցած տեսարանի մը մեջ:

Լը Սոլեյլ

***

Պ. Շահ-Մուրատյան մրցեցավ Լյուսի տը Լամերմուրի էտկարի դերին մեջ. իր հնչումը, որ անցյալ տարի վնասեց իրեն, զարմանալի կերպով բարվոքված է. իր ձայնը, զմայլելի թեմպրով, ավելի լայն ու ընտիր է դարձած:

Ֆիկարո

***

Օտարականի հնչումը դեռ չատ կը զգացվի Պ. Շահ-Մուրատյանի մոտ, որ հազվագյուտ թեմպրով թենոր մըն է՝ Լյուսի տը Լամերմուրի էտկարի դերին մեջ:

Լը Մաթեն

***

Հետզհետե ավելի կը սիրեմ Պ. Շահ-Մուրատյանի ոսկեզօծ ձայնը. ան ինծի կը հիշեցնէ հեռավոր գիշերներ Վոսփորի վրա՝ քայըքի մէջ անցված. բայց իր խաղացվածքը և հնչումը դեռ կրնան կատարելագործվիլ:

Ռեյնալտո Հան (Լը Ժուրնալ)

***

Երկրորդ մրցանակ ստացավ Պ. Շահ-Մուրատյան, որ եթե մեղմացնե իր օտարականի հնչումը, ֆրանսական թեներնեբուն ամենեն հրապուրիչը պիտի ըլլա:

Քամիլլ լը Սեն (Լա փըթիթ Ռեփյուպլիք)

«ԱՆԱՀԻՏ», Փարիզ, 1909, թիվ 3-4

***

Օփերայի տնօրենությունը երեկ իրիկուն մեզի ներկայացուց Կունոյի «Ֆաուստ»ին մեջ Պ. Շահ-Մուրատյանը, երիտասարդ թենոր մը, առաջին մրցանակով ելած Քոնսերվաթուարեն, ուր ուշադրություն գրավեց այնքան իր «տըմի-քարաքթեր» թենորի սիրուն ձայնով, որքան իր աշխատասիրությամբ և հարատևությամբ:

Երկու տարի առաջ Պ. Շահ-Մուրատյան կրնար աներկյուղ թողուլ դպրոցը և ասպարեզ իջնել: Բայց առաջին մրցանակ չէր ստացած և կ'ուզեր անպատճառ ձեռք ձգել զայն: Դպրոցին կանոնագրությունը ատոր չէր հակառակեր: Ամբողջ տարի մը ոգի ի բուին աշխատեցավ, իր վարպետներուն խորհուրդներեն արդյունավորապես օգտվեցավ: Այդ տասն ամսվան մէջոցին բավականաչափ կատարելագործված էր իր արվեստին մեջ, որպեսզի ժյուրին այլևս իրեն չզլանար մրցանակը, զոր այնքան ջերմորեն ցանկացած էր ունենալ:

Եվ այդ վարձատրության շնորհիվ է, որ Պ. Շահ-Մուրատյան, Օփերային հետ պայմանավորված, երեկ իրիկուն առաջին սկզբնավորություն մը ըլլավ, որ իր ապագային համար բարեգուշակ է: Իր մեջ կրկին գտանք նույն լուրջ արվեստագի-

տական հատկութիւնները, որոնցմով ուշադրութիւն գրաւած էր վերջին մրցումին: Ձայնը սիրուն «թեմպը» մը ունի, շատ արտահայտիչ, շատ հնչուն, և սկսնակը անսայթաք կերպով կը վարէ զայն:

Առաջին արարվածը և Պարտեզին արարվածը իրեն նպաստավոր եղան: Մենամարտի յոթնաճայնին մեջ գովելի չանքեր ըրաւ, բանտի երկանվագին և եռանվագին մեջ իր դատը շահած էր: Այս առաջին փորձը իրեն պատուաբեր եղաւ...

Լը Կոլուա

***

Պ. Շահ-Մուրատյան երեկ իրիկուն իր սկզբնավորութիւնը կ'ընէր Օփերան՝ «Ֆաուստի»ի մեջ: Ներկայացումը հոյակապ եղաւ: Սկսնակը չըշապատված էր ամենափայլուն խաղակիցներով: Պ. Շահ-Մուրատյան ախորժելի ձայն մը ունի՝ լավ թեմպրով, և շատ հաջող է «տրմիթենի»ին մեջ. վանկերը շատ լավ կը հոդէ, գրեթէ ամբողջապես թոթափած է իր արևելցիի հնչումը, և եթէ տակավին ցույց չի տար քաջավարժ բեմական ճիրքեր, գէթ կնահաճո ֆիզիքական երևույթ մ'ունի: Իր հաջողութիւնը շատ տաք եղաւ:

Փարի-Ժուրնալ

***

Երեկ իրիկուն Օփերային մեջ, լեփ-լեցուն և շատ փայլուն սրահի մը առջև «Ֆաուստ»ը տրվեցաւ՝ Պ. Շահ-Մուրատյանի սկզբնավորութեան համար: Երիտասարդ թենորը, շատ սիրուն ձայնով մ'օժտված և արդեն իսկ ուշագրավ արվեստի մը տիրացած, հասարակութեան ծափերը խլեց քանի-քանի անգամ:

Էքո տը Փարի

***

Երեկ իրիկուն Պ. Շահ-Մուրատյան կ'երևար առաջին անգամ Օփերան՝ Ֆաուստի դերին մեջ: Անշուշտ, շատ փորձառութիւն կարելի չէ պահանջել այս երիտասարդ թենորեն, որ թեպետ լուրջ ուսումնասիրութիւններ ըրած կը թվի, սկսնակ մըն է՝ բառին ամբողջ նշանակութեամբ: Սակայն հաջողեցավ

շատ պաղարյունությամբ զսպել իր հուզումը և գնահատել տալ այն շատ իրական հատկությունները, որոնց շնորհիվ Քոնսերվաթուարին մեջ առաջին մրցանակ մը ստացավ: Այդ հատկությունները պիտի ընդլայնին հետզհետե, երբ ինքնավստահությունն ու արհեստի քաջավարժությունը ստանա ավելի մեծ չափով. վարժվելով Օփերայի սրահին, հետզհետե հարկ եղած տարողությունը պիտի տա իր երանգներուն, և անշուշտ, զինքը շրջպատող պատվական խորհրդատուներուն մեջ պիտի գտնվին իրեն ըսողներ, որ նվազ թույլ գնացքով մը երգե: Բայց սա անտարակուսելի է, որ իր ձայնը շատ սիրուն թեմպր մը ունի, շատ համակրելի գույն մը. և օտարականի թեթև հնչում մը, զոր պահած է, չի վնասեր իրեն, ընդհակառակն, և թե շատ մը կտորներու մեջ ամենալավ ճաշակի ապացույցներ տվավ: Հասարակությունը զինքն ընդունեցավ շատ բարյացակամությամբ և ամենեն խրախուսիչ հաջողությունը շնորհեց իրեն:

Քոմետիա

***

Պ. Շահ-Մուրատյանի սկզբնավորության համար երեկ իրիկուն «Ծաուսթ» տվին Օփերան, առաջնակարգ խումբով մը. սկսնակը, որ շատ սիրուն ձայնով մ'օժտված է, ամբողջ սրահին կողմե, որ լեփ-լեցուն էր և շատ փայլուն, գտավ ամենաջերմ ընդունելություն մը:

Ֆիկարո

***

Հայազգի երիտասարդ թենորը՝ Շահ-Մուրատյան, որ Քոնսերվաթուարի շատ փայլուն աշակերտ մը եղավ և որ այնտեղ ունեցած իր հաջողություններով ՊՊ. Մեսաժեի և Պրուսանի ընտրության արժանի հանդիսացավ, Օփերայի բեմին վրա իր սկզբնավորությունն ըրավ «Ծաուսթ»ի մեջ:

Երիտասարդ արվեստագետը ի դերև չհանեց այն հույսերը, զոր հանրային մրցումներու մեջ իր ցույց տված հատկությունները ներշնչած էին: Իր ձայնը, որ շատ մասնավոր հրապույր մ'ունի և որ իր ոսկեզօծ «թեմպր»ին շնորհիվ բոլորովին

արևելյան համեղութիւն մը կը ստանա, շատ հաճելի եղավ հասարակութեան: Պ. Շահ-Մուրատյան գիտե արդեն զայն վարել վստահորեն և ճաշակով: Զմայլելի «տրմիթենթ»ներ ունեցավ, վանկերը կը հոդե սլատվական կերպով, և անվախութիւնը չի պակսիր իրեն:

Իր բարեձև արտաքինը, իր համակրելի ձևերը իրեն համար կը կազմեն բեմական ձիրքեր, զոր փորձառութիւնը իրենց կատարելութեանը պիտի հասցնե: Իր գտած հաջողութիւնը շատ բուռն եղավ:

Լը Փըթի Փարիզիեն

«ԱՆԱՀԻՏ», Փարիզ, 1911, թիվ 1-2

***

Հրաշալի թենորին՝ Պ. Շահ-Մուրատյանի հռչակը իր գահիրե գալեն առաջ հասած էր մեզի:

Հորմեհետե երիտասարդ արվեստագետը գոնսերվաթուարեն ելավ, փարիզյան մամուլը միահամուռ լավագույն ընդունելութիւնն ըրած էր Օքերայի նոր բանսիոնեռին:

Նշմարեցին մանավանդ, և մենք ալ մեր կարգին կրցանք դիտել, «իր ձայնին հաճելի թրթռումը, արտահայտութիւնը, հնչականութիւնը»:

Մեկ խոսքով՝ հաղթանակ մը եղավ, որուն մենք կրկնութիւնը վայելեցինք երեկ դիշեր:

...Պ. Շահ-Մուրատյանի մասին ոչինչ պիտի ըսենք. արվեստագետ մըն է բառին բոլոր նշանակութեամբը, որ մեզի ցույց տավ, այլազան, նույնիսկ պիտի ըսեմ անկապակից գործերու մեջ, իր տաղանդին չափը:

...Ներկաներուն հայրենասիրութիւնը հաճելիորեն հմայվեցավ՝ լսելով «Հայաստան»ը՝ ժողովրդական երգ մը: Ինչ հետու է քաղաքականութեան ոևէ գաղափար, բայց կը կարծեմ, որ շատ կ'անտեսեն կոր հայ ժողովրդական երգը: Անոր մեղեդին ախորժելի է, և հայ լեզվին ալ գեղեցկութիւնը թույլատու է այնպիսի նվագներու, որ երբեք զուրկ չեն հմայքե:

Ժուռնալ տյու Գեո

***

Փառավոր սրահ մը, երկուշաբթի գիշեր, ծափահարելու համար հայազգի թենոր Շահ-Մուրատյանը, որ առաջին անգամ կ'երևար Գահիրեի հասարակութեան առջև: Բարեբաղդեմ ըսելու, որ իր հաջողութիւնը եղավ անվիճելիորեն ա-հագին: Ամեն մեկ կտորեն վերջ բազմիցս բեմ հրավիրվեցավ և երկու անգամ ալ կրկնելու ստիպվեցավ: Իր կուրծքեն թռող առաջին խազերուն հետ, սրահեն տաք համակրութեան մթնո-լորտ մը բարձրացավ իրեն, և նվագահանդեսին մինչև վախ-ճանը խանդագին ծափերու չարք մը եղավ, զոր և ոչ մեկ վե-րապահում վլրդովեց:

Անճնապես ես չատ ճաշակեցի Պ. Շահ-Մուրատյանի ձայ-նը: Անոր թրթռումը չատ քաղցր է և չատ սիրուն, անոր հատ-կութիւնը հարուստ է, կատարելապես լավ աշխատված է, կես-երանգներուն մեջ չատ նուրբ և ախորժելիորեն երբեներփ-ված, ճշգրիտ, հավասար, հստակ և հնչուն: Մեծ ապագա ու-նեցող երգիչ մըն է, և լավ գործ մը պիտի ըլլար, եթե իրավ է, ինչպես կ'լսեին նրբանցքներուն մեջ, թե Մ. Պարոյր միտք ու-նի անոր հետ պայմանագրվելու հառաջիկա տարվան համար:

Շահ-Մուրատյան նվագահանդեսը, որուն Գահիրեի ամ-բողջ հայութիւնը ներկա դտնվեցավ, առավելութիւնն ունե-ցավ նաև մեզի անգամ մըն ալ ցույց տալու գեղեցիկ համե-րաշխութեան մը տեսարանը:

Բոսկրե

***

Ամենափայլուն սրահի մը առջև, երկուշաբթի գիշեր տեղի ունեցավ Պ. Շահ-Մուրատյանի նվագահանդեսը, որ եղավ ստուգիվ ճշմարիտ հաղթանակ մը: Արվեստագետը, որ օժտ-ված է ձայնական հզոր հատկութիւններով, մեծապես տոնվե-ցավ: Ցաուսթի «Տանասիոն»ին և «Սիկյուտ»ի եղանակին մեջ խիստ չատ գնահատվեցավ, նույնպես «Թոսքա»ի ռոմանսին մեջ, զոր Պ. Շահ-Մուրատյան ստիպվեցավ կրկնել: Ճշմարիտ խելահեղութիւն մը հառաջ բերավ իր «Հայաստան»ը, ժո-ղովրդական ու հայրենաբաղձիկ երգ մը, զոր հրաշալի կերպով տավավ, ներկաները ալ մեծ մասամբ հայեր, չի սակարկեցին ի-

բենց ծափերը: Մասնախումբը, որ կազմակերպած էր այս նվագահանդեսը, պատվական թենորին նվիրեց ոսկիե գեղեցիկ մետայլ մը, պատշաճ արձանագրութեամբ, ի հիշատակ այդ երեկույթին:

Իմբարցիալե

***

Փարիզի Մեծ Օբերայի թենոր և գոնսերվաթուարի առաջին մրցանակ Պ. Շահ-Մուրատյանի անձնավորութիւնը, ընտրանքով կազմված հայասպրի մը բաղադրութիւնը, ընկերներու, որ իրենց մասնակցութիւնը բերին, հատկութիւնները, ձեռք ձեռքի տված ապահովցուցին վայլուն հաջողութիւնը նվագահանդեսին, որ երկուշաբթի դիշեր Թեաթր Ապլասի մեջ տրվեցավ:

Գետնահարկեն մինչև օթյակները, որոնցմե և ոչ մին պարապ էր, անհամբերութիւնը բուռն էր, որովհետև ամենքն ալ հետաքրքիր էին դատելու Փարիզի Օբերային հայազգի թենորը, որ մեր ոստանին մեջ կը գտնվեր հյուրաբար:

Եվ հասարակութիւնը նվաճվեցավ իսկույն Ֆաուսթի «Տանասիոն»ին առաջին բառերեն սկսյալ: Պերլիոզ արտահայտվեցավ Պ. Շահ-Մուրատյանի կողմե վայելուչ դասականութիւնեմբ մը և տաք, համակրելի ու մաքուր ձայնով մը: Երկարատև ծափեր և ի բեմ հրավերներ, ոչինչ պակսեցավ խրղճմիտ արվեստագետին, որ իր խիստ այլազան տաղանդին չափը տվավ, կարգավ, Ռեյրիերի «Սիկյուռ»ին եղանակին մեջ, որ կը պահանջե երաժշտական ուժեղ գիտութիւն մը, հետո Բուչչինիի «Թոսքա»ին մեջ, զոր տվավ կիրքով: Ու երբ Պ. Շահ-Մուրատյան երգեց հետո «Հայաստան» ժողովրդական երգը, իր հայրենակիցները, որ խուռներամ եկած էին այդ երեկույթին, իրեն կրկին օվասիոն մը ըրին, և անշուշտ զգածվեցավ՝ ընդունելով իբրև հիշատակ մետայլ մը, վրան ուղերձ մը արձանագրված, զոր յուվիի մը մեջ իրեն ներկայացուցին բեմին վրա:

Նուվել-զ-Էժիբսիեն

«ՀՈՍԱՆՔ», Կահիրե, 1912, թիվ 7

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

***

...Հոկտեմբեր 8-ի իրիկունը «Յունիոն Քրեթիեն»ի սրահին մէջ Պ.Զոպանեան խոսեցաւ Մկրտիչ Պէշիկթաշլեանի հանրային ու գրական գործունեութեան մասին... Պ. Շահ-Մուրատեան երգեց «Դու զով խնդրես»ը: Ներկա էին հարիւր երեսունի չափ ազգայիններ:

...Պ. Շահ-Մուրատեանց Կոմիտաս վարդապետի աշկերտներեն է, Եկմալեանի խումբը վարած է քանի մը տարի, շատ լավ գիտե Հայոց եկեղեցական երաժշտութիւնը և օժտված է հզոր ու շատ քաղցր ձայնով մը...

«Անահիտ», Փարիզ, 1904, թիվ 9-10

ԱՐՄԵՆԱԿ ՇԱՀ-ՄՈՒՐԱՏԵԱՆ

Փարիզի Քոնսերվաթուարին այս տարվան մրցման մէջ ամենեն ավելի ուշադրութիւն գրավողներեն մին Հայ մը եղավ. Արմենակ Շահ-Մուրատեան: Ստացավ Օփերայի մրցման երկրորդ մրցանակ (ոչ մեկ մասնակցողի առաջին մրցանակ չտըրվեցավ այս տարի) և Օփերա-քոմիքի առաջին հիշատակութիւն:

Պ. Շահ-Մուրատեան, բնիկ Մշեցի, իր ուսումն ստացած է Թիֆլիս՝ Ներսիսեան վարժարանը, հետո իբր ուսուցիչ և երգիչ վեց տարի Կարին մնացած, Փարիզ հասավ չորս ու կես տարի առաջ և Հայոց եկեղեցվույն դպրապետ կարգվեցավ: Իր ցան-

կութիւնն էր ուսանիլ արեւմտեան երաժշտութիւն և եվրոպական երգիչներու հուչլին մեջ տեղ մը բռնել. մեծ էր դժվարութիւնը, որուն պետք էր հաղթեր. օժտված թենորի հոյակապ ձայնով մը, զմայլելի կերպով կ'երգեր հայ եկեղեցական եղանակները, բայց բառ մը ֆրանսերեն չէր գիտեր և չափազանց քիչ գաղափար ուներ եվրոպական երաժշտութեյան մասին: Իր նկարագրի ուժովը, մտքի ճարպկութեյամբը, լուրջ աշխատասիրութեյամբը հաջողեցավ քանի մը տարիվան մեջ հաղթել այդ դժվարութեյանց. տարի մը Սքոլա Քանթորում աշակերտելե հետո ընդունվեցավ Քոնսերվաթուար, անցյալ տարի ստացավ երգի առաջին հիշատակութիւն, օփերայի երկրորդ հիշատակութիւն. այս տարի՝ երկրորդ մրցանակ՝ օփերայի: Թե՛ անցյալ և թե՛ այս տարի մամուլը ամենամեծ ներբողներով խոսեցավ իր մասին, գոնելով իր մեջ Քոնսերվաթուարին լավագույն թենորի ձայնը և հուսալով իրմե երգչի փայլուն ապագա:

Պ. Շահ-Մուրատյան մտադիր է դեռ տարի մը ևս մնալ Քոնսերվաթուար՝ բեմ ելլելե առաջ ավելի ևս կատարելագործվելու համար:

Մեր սրտագին խնդակցութիւնները կը հայտնենք մեր պատվական և տաղանդավոր ազգակցին:

«Անահիտ», Փարիզ, 1909, թիվ 3-4

ԱՐՄԵՆԱԿ ՇԱՀ-ՄՈՒՐԱՏՅԱՆ

Մեր անցյալ շրջանի թիվերեն մեկուն մեջ կը հրատարակեինք թարգմանութիւնը այն ներբողալից էջերուն, զոր Ֆրանսական մամուլը կը նվիրեր Պ. Արմենակ Շահ-Մուրատյանին՝ Քոնսերվաթուարի տարեկան մրցմանց մեջ Օփերայի երկրորդ մրցանակ ստանալուն առթիվ: Այս տարի Պ. Շահ-Մուրատյան հասավ նպատակին, զոր առաջադրած էր, ստացավ մրցմանց մեջ երգեցողութեյան երկրորդ մրցանակ, և արդեն Փարիզի Մեծ-Օփերայի տնօրինութեյունը իրեն հետ պայմանավորված է. ի մոտո տեղի կ'ունենա իր սկզբնավորութեյունը: Այս մեծ հաջողութեյունը, որ պատիվ կը բերե մեր հայրե-

նակցին կուռ աշխատասիրութեան, մտաւոր ճկունութեան և արուեստագիտական փայլուն ձիրքերուն, պատուաբեր է նաև հայ ցեղին իբր անոր քաղաքակրթական հատկութեանց կենդանի ու փայլուն ապացոյց մը ևս: Ուրախութեամբ կը շնորհաւորենք մեր հայրենակիցը և կը մաղթենք, որ իր ուսանողական շրջանի հաջողութիւններեն ավելի մեծ ըլլան հաջողութիւնները, զոր այսուհետև պիտի ունենա իբր արուեստագետ:

«Անահիտ», Փարիզ, 1909-1910, թիվ 11-12

ՇԱՀ-ՄՈՒՐԱՏՅԱՆԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒԹԻՒՆԸ

Հունվար 27-ի իրիկունը Շահ-Մուրատյան «Ֆաուստի» մեջ իր սկզբնավորութիւնը ըրաւ հաջողութեամբ:

Առաջին անգամն է, որ Փարիզի Օպերային պես տիեզերահռչակ երաժշտական բեմի մը վրա, «Ֆաուստի»ի պես նշանավոր գործի մը գլխավոր դերին մեջ, հայազգի արուեստագետ մը կ'երևա, կը փայլի և գեղեցիկ ապագայի մը հույսերը կը ներշնչե:

Ջերմապես կը շնորհավորենք մեր տաղանդավոր և հաստատակամ հայրենակիցը, որ իր ցեղին ամենեն պատուաբեր գաւակներեն մին կը հանդիսանա:

«Անահիտ», Փարիզ, 1911, թիվ 1-2

ԱՐՄԵՆԱԿ ՇԱՀ-ՄՈՒՐԱՏՅԱՆ

Մեզի համար հաճույք մըն է արձանագրել Շահ-Մուրատյանի հաջողութիւնը, որ հունվար 27-ի իրիկունեն ի վեր ավելի կը նվիրագործվի ֆրանսական գնահատութեան ու մտմուլի շնորհիվ:

Առաջին անգամն էր, որ Բարիզի Օպերային պես տիեզերահռչակ երաժշտական բեմի մը վրա, Ֆաուստի կարևոր դերին մեջ հայ արուեստագետ մը կ'երևար:

Շահ-Մուրատյան հուսախաբ չըրաւ իր համակիրները...

Մեզի կը մնա ուրեմն գուրգուրալ այս իրական տաղանդին վրա:

«Շանթ», Կ. Պոլիս, 1911, թիվ 2

ԵՐԳԻՉ ԱՐՄԵՆԱԿ ՇԱՀՄՈՒՐԱԴՅԱՆ

Ա. Շահմուրադյանը Տաճկահայաստանցի է... 1897 թվին ա-վարտել է Ներսիսյան Դպրանոց: Դեռևս աշակերտ ժամանակ-վանից Շահմուրադյանը հայտնի էր որպես լավ ձայն ունեցող և եկմալյանի խմբի լավագույն սոլիստներից էր:

Ներսիսյան Դպրոց ավարտելուց հետո Շահմուրադյանը վերադառնում է Տաճկաստան՝ իր հայրենիք, ուր մի քանի տարի ուսուցչի պաշտոն է վարում, ապա անցնում է արտա-սահման՝ Պարիզ: Մտնում է Պարիզի հայտնի կոնսերվատո-րիան, ուր 1909 թվին հաջող քննություն է բռնում և ստա-նում է երկրորդ մրցանակը: Սակայն դժգոհ քննության հետևանքից՝ հաջորդ տարին նորից մասնակցում է կոնսերվա-տորիայի մրցանակաբաշխության և այս անգամ ստանում է առաջին մրցանակը:

Ներկայումս երիտասարդ երգիչ Արմենակ Շահմուրադյա-նը Պարիզի օպերային երգիչների մեջ իր որոշ տեղն ունի. նա իր դեբյուտը սկսեց Ֆաուստի պատասխանատու դերով: Մայ-րաքաղաքի թերթերը գովեստներով խոսեցին սկսնակ օտա-րերկրացու մասին: Ներկայումս Շահմուրադյանին մեծ ա-պագա է խոստանում՝ չնորհիվ իր ուժեղ և դուրեկան ձայնի:

«Թատրոն և երաժշտություն», Բաքու, 1910-1912, թիվ 9-10

Ա. ՇԱՀ-ՄՈՒՐԱՏՅԱՆ ՄԵՐ ՄԵՋ

Մեկ քանի օրե ի վեր ուրախությունն ունինք մեր մեջ վա-յելելու ներկայությունը հայազգի նշանավոր թենոր Տիար Ա. Շահ-Մուրատյանի, որ քաղաքս եկած է նվագահանդես մը տալու մտադրությամբ:

Շահ-Մուրատյան մեր ցեղին պատիվ բերող արվեստագի-

տական ամենեն զարմանալի հայտնութիւններեն մին է: Մշեցի երիտասարդ մը, որ կյանքի բոլոր արգելքներուն դավակցութեանը կուրծք տալով՝ կարող հանդիսացած է, իր հրաշալի ձայնին կարծես հրաշագործ ուժեն տարված, Փարիզի Քոնսերվատուառը մտնել և հոն հաղթանակելով՝ Փարիզյան Օբերայի բեմին վրա իր տեսլյուն ընել Ծաուսթի դերին մեջ: Այսքանը կը բավե, որ մարդ իր դլխարկը հարգանքով հանե տաղանդի ու կորովի այն անզուգական մարմնացումին առջև, որ Շահ-Մուրատյանն է...

Տարակուսյս չունինք, թե Գահիրեի հայութիւնը խանդավառ ընդունելութիւն մը պիտի ընե Շահ-Մուրատյանին:

«Հոսանք», Կահիրե, 1912, թիվ 4

ՇԱՀ-ՄՈՒՐԱՏՅԱՆ ՆՎԱԳԱՀԱՆԴԵՍԸ

Հառաջիկա երկուշաբթի իրիկուն, փետրվարի 19, Թեաթր Ապպասի մեջ տեղի պիտի ունենա Շահ-Մուրատյանի նվագահանդեսը՝ մասնակցութեամբ Օր. Բաքպիեի՝ Պրյուսելի Մոնե թատրոնեն, դաշնակահար Մ. Վալանթինոյի, ջութակահար Մ. Կորաքիի և թավջութակահար Մ. Պոնինիի: Շահ-Մուրատյան պիտի մեներգե Պեռլիոզի «Տանասիոն տը Ֆոսթ»-ը, Ռեյեյի «Սիկյուռ»են, Բուչչինիի «Թոսքա»են կտորներ, «Հայաստան» ֆրանսերենի վերածված հայ ժողովրդական երգ մը, Տոնիզեթթիեն կտոր մը և Կունոյեն տյուո մը Օր. Բաքպիեի հետ:

Գահիրեի հայերը, երկուշաբթի իրիկուն, Թեաթր Ապպաս պիտի դիմեն խուռներամ՝ ծափահարելու համար հայազգի թենորը, որ աքանչացուցած է արդեն հոս, ընկերական կամ ընտանեկան շրջանի մեջ, գինք լսելու բաղդն ունեցողները:

Շահ-Մուրատյան երկուշաբթի օր կարապետ պէյ Շերիտճյանի հետ այցելած է Գալուստյան վարժարանը և երկսեռ աշակերտներու փափաքին գոհացում տալով՝ մեկ քանի հայերեն երգեր երգած է:

«Հոսանք», Կահիրե, 1912, թիվ 5

1915 - 1918 pp.

առաջին նվագահանդեսը, որ տեղի ունեցավ Բըլթի-Շանի ֆեոնային թատրոնին մեջ, Նոյեմբեր 3-ին, երաժշտական կատարյալ խրախճանք մը եղավ մեզի համար: Առաջին անգամն էր, որ պոլսահայ բեմին վրայեն հայ-եվրոպական երգիչ մը իր ձայնին վրդովիչ ներդաշնակութիւնովը կը հուզեր մեր սիրտերը: Օբերա տը Բառիի թենոր և Բարիզի գոնսեռվաթուառեն առաջին մրցանակով պատված Ա. Շահ-Մուրատյան իր ճկուն, ազնվական ձայնին տիրապետութեյան տակ պահեց մեզ գրեթե ամբողջ նվագահանդեսի ընթացքին: Կոմիտաս վարդապետ իր զուտ հայկական սքանչելի երգերով հայուն նո՛ր ոգի և կենդանութիւն տվավ. Շահ-Մուրատյան եվրոպական երաժշտութեյան ամենեն ընտիր արտադրութիւններուն հաջող արտահայտութիւնովը անգամ մը ավելի մեզի ապահովցուց, թե հայը արվեստներու ու գեղեցկութեյան ընդունակ է:

«Շանթ», Կ. Պոլիս, 1913, թիվ 51 (հեղ. Շանթարգել)

ՏԱՂԱՆԴԱՎՈՐ ԵՐԳԻՉ ՇԱՀ-ՄՈՒՐԱՏՅԱՆ

Բարիզի գոնսերվաթուառեն փայլուն մրցանակով մը վկայական ստացած հայազգի երգիչը, որուն համբավը չատոնց ի վեր լսած էինք, բախտ ունինք ժամանակե մը ի վեր մեր մեջ վայելելու:

Պ. Շահ Մուրատյան Պոլիս հասած է, երկու անգամ իր հիանալի ձայնը լսելի ըրավ, նախ՝ Մայր եկեղեցիին մեջ, Մեծ Հոբելյաններուն առթիվ տեղի ունեցած եկեղեցական արարողութեյան միջոցին և երկրորդ անգամ ալ Հ՛գ Սիմոն Զավարյանի Հուշարկավորութեյան հանդեսին, Բերայի Երրորդութեյան եկեղեցիին մեջ:

Այդ երկու անգամներուն ալ Շահ-Մուրատյան հիացուց իր ունկնդիրները և արդարացուց իր համբավը: Միայն թե բուն արվեստագետը տակավին երևան չէր եկած, քանի որ համբավավոր երգիչը իր ձայնը հնչեցուցած էր միայն եկեղեցական երգեցողութեյանց մեջ:

Իսկ վաղը, Կիրակի, պիտի լսենք Շահ-Մուրատյանը Բըթի Շանի թատրոնին մեջ, բո՛ւն իր արվեստին կատարելության և բարձրության մեջ և վստահ ենք, որ իր սարքած համերգը մեծ հաղթանակ մը պիտի ըլլա իրեն համար:

Կը լսենք, թե տաղանդավոր արվեստագետը դիտավորություն ունի տակավին մեկ քանի համերգներ տալ Պոլսո մեջ, մանավանդ որ այս անգամ չատ քիչեր պիտի կրնան լսել ու ծափահարել զինքը:

«Մանանա», Կ. Պոլիս, 1913, թիվ 64

ԵՐԳԻՉ Ա. ՇԱՀ-ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հինգշաբթի, մարտի 7-ին, Արտիստական Ընկերության համերգային դահլիճում տեղի է ունենալու երգիչ Շահ-Մուրադյանի նվագահանդեսը...

Շահ-Մուրադյան 1912 թ. փետրվարին գնալով Եգիպտոս՝ կահիրե քաղաքում էս տվել է նվագահանդես՝ ունենալով նույնպես խոշոր աջողություն: Տեղական թերթերը՝ «Ժուրնալ դյու Կեռ», «Պրոգրե», «Իմպարցիալե» և «Նուվել-զ-Էժիբսիեն», միաբերան վկայում են չնորհալի երգչի խոշոր արժանիքները և բառի բուն նշանակությամբ նրա արվեստագետ լինելը: Տեղական թե՛ հայ և թե՛ այլազգի հասարակությունը գեղարվեստական մեծ բավականություն է ստացել տաղանդավոր երգչի նվագահանդեսից, որի կազմակերպող մասնախումբը, ի տրիտուր այդ հաճույքի, նվիրել է երգչին ի հիշատակ այդ երեկույթի մի ոսկե գեղեցիկ մեդալ՝ ավուր պատշաճի արժանագրությամբ:

«Մշակ», Թիֆլիս, 1913, թիվ 46

ԵՐԳԻՉ Ա. ՇԱՀ-ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԿՈՆՑԵՐՏԸ

Երգիչ Ա. Շահ-Մուրադյանը հանդես եկավ Թիֆլիսի հասարակության առաջ հատուկ կոնցերտով, որը տրվեց հինգշաբթի օր, մարտի 7-ին, Թիֆլիսի Արտիստական Ընկերության դահլիճում:

Համերգի արած տպավորությունը նպաստավոր էր երգչի համար:

Շահ-Մուրադյան ունեցավ աջողություն և շահեց ոգևորված ծափահարություններ:

Հաճությամբ արձանագրում ենք, որ Շահ-Մուրադյանը ունի ախորժելի տեմբրով, մաքուր հնչմամբ տենորային գեղեցիկ մի ձայն, որը դրավիչ է հանդիսականի համար:

Երգչի ձայնը մշակված է և եվրոպական երաժշտության ընտելացած: Շահ-Մուրադյանը երգում է ճաշակով և զգացմունքով:

Նա սկսեց իր կոնցերտը Բիզեի «Մարգարիտ որոնողներ» օպերայից վերցրած մի արիայով, որը սկզբից իսկ ստեղծեց նպաստավոր տրամադրություն երգչի համար:

Մենք չատ հավանեցինք Շահ-Մուրադյանի երգածը. թե՛ Դոնեցետտիի «Una Furtiva Lagrina» և թե՛ Բեմլերգի «Հնդկական երգ» գեղեցիկ ստեղծագործությունների կատարումները: Վերջինս երգվեց չուրթակի և դաշնամուրի ներդաշնակությամբ:

Շահ-Մուրադյանը երգեցողության ընթացքում ունի տևական չնչառություն, ընդունակ է ախորժալուր պիանոյով երգել ամբողջ տողեր և հնչեցնել ուժեղ զիլ ձայն:

Երգչի թերություններին պետք է վերագրել միօրինակ գունավորություն պահպանելը երգերի մեջ՝ ըստ մեծի մասին մելամաղձիկ, երբեմն լալկան, և պարբերությունների փոխանակության թույլ բնորոշումը: Իսկ ընդհանրապես Շահ-Մուրադյանի ձայնը մի գնահատելի գանձ է, որի հանդես գալը արձանագրում ենք իբրև ուրախալի երևույթ:

«Մշակ», Թիֆլիս, 1913, թիվ 52

ՏԵՆՈՐ ՇԱՀ-ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԿՈՆՑԵՐՏԸ

Եկմալյանի աշակերտ երգիչ Շահ-Մուրադյանը, վերադառնալով իր հայրենիքը՝ Հայաստան, պարապում է առժամանակ ուսուցչությունով և խնայելով մի աննշան գումար, իրան գցում է Պարիզ: Մտնում է կոնսերվատորին, ավարտում մըր-

ցանակներով ու ստանում դեբյուտ օպերային թատրոնում: Հեշտ բան չէ Պարիզի մեծ օպերայում ընդունվել և երգել Ֆաուստ: Բայց մեր հայրենակցին աջողում է այդ, շնորհիվ իր սքանչելի մաքուր, մշակված, կիրթ ձայնին և զգացումով, ճաշակով արտահայտության: Մարտի 7-ին Թիֆլիսի Արտիստիկ Ընկերության սրահում տված երգիչը իր առաջին կոնցերտը, հենց առաջին նոտաներից սփռելով անուշաբույր մթնոլորտ: Հիանալի են մեղմ նոտաները, լի թախիծով: Բացակա էր այս կոնցերտին Թիֆլիսի հայությունը. չէ՞ որ երգիչը հայ էր...

«Տարազ», Թիֆլիս, 1913, թիվ 3

ԵՐԳԻՉ ՇԱՀՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՀԱՄԵՐԳԸ

Երկուշաբթի, մարտի 25-ին, Հասարակական ժողովարանի դահլիճում կայացավ Պարիզի Մեծ Օպերայի երգիչ տենոր Արմենակ Շահմուրադյանի համերգը՝ մասնակցությամբ երգչուհի Լ. Յակովլևայի և թավջութակահար պ. Ֆինկելգաուզի:

Ով լսել է նրան Եկմալյանի ժամանակ, անշուշտ պիտի կաըողանար գուշակել, թե որպիսի մեծ քայլեր արած կլինի նա կարճ ժամանակում Պարիզում:

Այն ժամանակ նրա ձայնը դարձյալ գրավիչ ու քնքուշ էր, բայց լիրիկական, իսկ այժմ փորձված մանկավարժների ձեռքի տակ նա դարձել է դրամատիկական:

Երգիչը ստացել է Պարիզի Կոնսերվատորիայի առաջին մրցանակը, և նրա ձայնի մասին մասնավորապես ֆրանսիական մամուլը մեծ գովեստներով է խոսում: Դեռ նրա առաջին *debut*-ի մասին, Ֆաուստի դերի մեջ, ֆրանսիական թերթերը գրում էին, թե նա ցույց է տվել լավ ճաշակ, թե նրա տեմբրը անչափ դուրեկան է:

Համերգը բացեց Շահմուրադյանը «Իսկատելի ժեմչուգա»-ից երգելով:

Առաջին իսկ հնչյուններից նկատելի էր ֆրանսիական նուրբ շկոլան: Նրա ձայնի մեջ չկան հնչին կոկորդային հընչյուններ, ձայնը դուրս է գալիս կրծքից միանգամայն ազատ ու անսայթաք: Անչափ գրավիչ է նրա *pianissimo*-ն:

Ուշագրավ էր արիան «Պայաց» օպերայից: Ահագին տարբերություն նկատվեց նրա առաջին և երկրորդ երգածի մեջ: Առաջին անգամ արիան այնքան էլ տպավորիչ չէր, բայց երբ նույն արիան երգեց երկրորդ անգամ, նրա մեջ կյանքը խոսեց, վառվող, փոթորկվող ու հուզվող կյանքը:

Այդ արիան ամենահաջող համարներից մեկը պիտի համարել:

Շահմուրադյանի երգած բոլոր երգերը ֆրանսերեն էին, բացի մի քանի հայկական երգերից:

Գրավիչ ու ազանչելի էր ծրագրի վերջին համարը՝ Chant Violencelle, piano: Դա գեղուհի մի երգ էր, որին նվագակցում էին դաշնակն ու թավջութակը: Երկու գործիքն էլ կարծես տանում, առաջնորդում էին երգչին երազների աշխարհն ու իլյուզիա ստեղծում:

Գեղարվեստական երգի գեղեցիկ կատարումը առաջ բերեց ծափահարությունների տարափ:

Ծրագրից դուրս երգեց նաև հայերեն երգեր. հրապուրիչ ու բնորոշ էին նրա երգածներից Գալֆայանի մեներգը և «Սիրտս նման է» ժողովրդական երգը: Այդ երգերը երգեց արտիստին հատուկ մեծ ճաշակով ու իմաստալից:

Ժողովրդական երգերի մեջ նրան ամենահարազատ արտահայտիչը պիտի համարել: Նրա երգերը հնչում են confoco, խորին տաքություամբ ու համարձակությամբ:

Ժողովրդական «Սիրտս նման է» երգին նա տվեց տարբեր գունավորումներ, որով և միապաղաղ պարբերությունները դարձան ավելի գրավիչ ու հետաքրքիր:

Համերգից հետո երկար ժամանակ հասարակությունը չէր հեռանում դահլիճից, բուռն ծափերի տակ ստիպելով կրկնել էլի մի քանի երգեր հայերեն և ֆրանսերեն:

Շնորհալի երգիչը ունեցավ խոշոր հաջողություն:

Ցանկալի էր, որ պ. Շահմուրադյանը մի համերգ ևս տար մատչելի գներով:

Հասարակություն շատ կար:

«Բաքվի ձայն», 1913, թիվ 66
(Հեղ. Անտոն Մալխյան)

«ՊԱՏԱՆԻ» ԱԼՄԱՆԱԽԻ ԵՐԵԿՈՒԹԸ

Մայիսի 5-ին երաժշտական Ընկերութեան դահլիճում տեղի ունեցավ «Պատանի» ալմանախի նախաձեռնած երեկոյթը...

Երեկոյթի երկրորդ բաժնում... հիացմունքով և ոգևորութեամբ ընդունվեց երգիչ Շահմուրադյանը, որ երգեց Ֆրանսիացի կլասիկ հեղինակներից 2 բարդ հատվածներ և «Հայաստան, երկիր դրախտավայր». ապա միահամուռ ծափերից ստիպված երգեց Ռ. Մելիքյանի «Վարդը» և «Աչունը»: Երգիչն օժտված է մաքուր, ուժեղ և բոլոր նոտաներում միակերպ հաջողութեամբ հնչող թովիչ ձայնով: Դահլիճի հասարակութիւնը, որը, պետք է խոստովանած, բավական անկարգ էր, լսում էր պ. Շահմուրադյանին հափշտակութեամբ:

«Հորիզոն», Թիֆլիս, 1913, թիվ 98

ՇԱՀ-ՄՈՒՐԱՏՅԱՆՆ Ի ՏՐԵԶՆՈ

Արմենակ Շահ-Մուրատյան, հանրածանոթ հայ թենորը, մեզի հյուր է: Անոր մասին, անոր քաշած նեղութեանց ու գտած հաջողութեանց մասին, անոր անճիճ և ճայնական անսպառ գանձին նկատմամբ չատ կարդացած ու լսած էինք 1910-ին ի վեր, երբ նա Փարիզի Քոնսերվաթուառեն դուրս եկավ մրցանակներու և մեծ հույսերու հետ ընկերացած. բայց զայն տեսնելու բաղդը կը մնար անցյալ Զորեքշաբթի օրվան: Նա եկավ ու տեսանք զինքը. Շահ-Մուրատենց դարբին Սըրդոյի տղուն մեջ ողջագուրեցինք մշակված և նրբացած վարպետը գեղարվեստին և հիմա կը սպասենք անհամբեր, Դեկտեմբեր 15ի երեկոյին, լսել անոր ճայնը, զմայլիլ անոր տաղանդին առջև, երկրպագել ու վերանալ անոր խաղերու Թրթռումներու խորանին առջև: Սիրեցինք մեր Շահմուրատյանը, բայց կ'սպասենք պաշտել իր գեղարվեստը, որ թեև հայբենիք մը չունի, բայց կարծես հայացած ըլլալ կը թվի հայ երգչին մեջ՝ մեր ազգային զգացումները արթնցնելու ու հպարտութիւնը փայփայելու համար:

Շահ-Մուրատյան համակրելի երիտասարդ մըն է, Տարոնցիի տիպար մը: Իր ամուր կազմին, հաղթ հասակին ու զորավոր դիմագծին մեջ մարմնացած գտանք Մշեցիին պարզությունը, անկեղծությունը ու թռչլատու հոգին: Իր գտած հաջողությունները, արևմտյան քաղաքակրթության նրբությունը, զարգացումի կնիքը ոչինչ կրցած են գողնալ անկե իր ազգային զգացումներեն: Շահ-Մուրատյան Հայ մըն է և Հայ մնացած է բառին ընդարձակ նշանակությամբ: Անոր առջև բացված հաջողության ընդարձակ ասպարեզը, անունը, պատիվն ու հարստությունը կրցած չեն հրապուրել զայն՝ դուրս ելնելու այն սրբագործված գծեն, որուն մեջ Հայությունը պահպանված է՝ անհիշատակ դարերե ի վեր, այլ ընդհակառակը, անոնք Հայությունը ազնվացուցած, քաղցրացուցած և վսեմացուցած են իր գեղարվեստին մեջ: Նա սահմանված է պատիվ բերել իր ցեղին ու անոր անունը իր անվան հետ աշխարհիս բոլոր անկյունները հասցնել: Մենք իբրև Հայ չատ բան կը պարտինք անոր, և ինք իր ձայնը, իր անձը՝ բուն Շահ-Մուրատյանը իր ազգին կը պարտի: Մերն է անիկա. կը սիրենք զայն ու պիտի սիրենք միշտ, կը սիրենք իր գեղարվեստը իր անձին մեջ, կը սիրենք իր անձը իր գեղարվեստին մեջ:

Շահ-Մուրատյան երբ Փարիզի Քոնսերվաթուառեն ելավ հինգ տարի առաջ ու Օփերային մեջ երևցավ առաջին անգամ Ֆաուսթի գլխավոր մեկ դերով, իր անունն ու ապագան չինած էր արդեն: Փարիզյան մեծ թերթեր, որոնք չատ ժլատ են գովեստներ չռայլելու սկսնակներու համար, մեր Շահ-Մուրատյանին առջև լայն բացին իրենց սյունակները...

Ամեն Հայ Դեկտեմբեր 15-ի երեկոյին գալ լսելու է այս Հայ արվեստագետը, որուն մեջ Արևելքն ու Արևմուտքը, Տարոնն ու Ֆրանսան, Մուշն ու Փարիզը ներդաշնակցված պիտի գտնենք:

Անոր Հայերեն երգերը, վստահ ենք, որ պիտի գան արթնցնել այս գաղութը իր նյութապաշտ երազներեն՝ սիրելու համար երգը, գեղարվեստը, մանավանդ Հայ երգը, Հայ գեղարվեստը, որոնք պաշտոն ունին ազնվացնել մարդս ու բարձրացնել զայն հասարակ կյանքի գռեհիկ մթնոլորտեն վեր:

Եկե՛ք Շահ-Մուրատյանը լսելու:

«Նոր կյանք», Ֆրեզնո, 1915, թիվ 40

ՇԱՀ-ՄՈՒՐԱՏՅԱՆ ՆՎԱԳԱՀԱՆԴԵՍ

Շահ-Մուրատյանը չի լսել, երբ մանավանդ ան հոս մեր մեջն է արդեն, կը նշանակե ոչ միայն չի գնահատել գեղարվեստը, այլև չի գնահատել զայն Հայ հուչակավոր երգիչի մը մեջ, որուն ձայնի գեղգեղումները գնահատված են գեղարվեստի աչխարհին մեջ ամեն կողմե:

Ջարերը երգ չունին արտահայտությունը սխալ կերպիվ բացատրված է: Ջարերը անոնք են, որ թեև երգ ունին, բայց զայն գնահատել չեն գիտեր, անկե չեն ազդվիր ու ազնվանար: Մենք՝ Հայերս, երգ ունինք և կը հավատանք, թե կը գնահատենք զայն ու կրնանք ազնվանալ անով: Մեր երգերը, սակայն, մենք չատ քիչ անգամ, եթե երբեք, լսած ենք արվեստագետի մը բերնեն և բնականաբար դեռ չենք կրցած անոր գեղեցկությունը ըմբռնել, անոր վսեմության մեջ արբենալ:

Շահ-Մուրատյան այն Հայ երգիչն է, որ կրցած է Հայ երգը իր ճչմարիտ վսեմության մեջ արտահայտել՝ թափանցելու ունկնդրի սրտին ու անոր հոգվո ազնվության: Հայերեն լեզուն աղոթքի լեզուն է, հայերեն երգը բարության երգն է: Բարիները միայն հայերեն երգ ունին:

Ամեն Հայ գալ մտիկ ընելու է Շահ-Մուրատյանը, իր հայերեն երգերուն մեջ մանավանդ: Այս առիթը ուրիշ անգամ չենք կրնար ձեռք ձգել աչխարհի այս հեռավոր անկյունին մեջ: Անոր անուչ ձայնին մեջեն պիտի լսենք Մայր Հայաստանի այն ձայնը, որ ցարդ խռպոտ կոկորդներեն խոսած էր մեզի: Հայերեն երգը դիտնալու առիթ չենք ունեցած տակավին: Եկե՛ք, որ ամենքս միասին վայելենք զայն պահ մը...

«Նոր կյանք», Ֆրեզնո, 1915, թիվ 41

ՆՎԱԳԱՀԱՆԴԵՍԸ

Թատրոնը լեցուն էր: Մոտերեն և հեռուներեն Հայք եկեր էին անցյալ Զորեքչաբթի գիչեր Հայ թենորը մտիկ ընելու հոն: Հայ գեղարվեստը եկած էր, հանձին Շահ-Մուրատյանի, Ֆրեզնոյի Հայությունը ցնցելու, ոգևորելու և գոտեպնդելու համար:

Հաջող եղավ նվագահանդեսը՝ բառին լեցուն նշանակութեամբ: Անոնք, որ եկած էին լոկ Հայ երգիչ մը քաջալերած ըլլալու պարզ ու բարի նպատակավ, խոստովանեցան, թե վայելած էին բան մը, զոր դրամով կարելի չէր գնել, զի իրապես գին չուներ այն: անդին էր անիկա՝ մանավանդ իր Հայացած տարազին մեջ: Շահ-Մուրատյան դյուրեց մեզ այդ իրիկուն, հուզեց ու լացուց, լացուց և զմայլեցուց: Անոր ձայնին մեջ Իտալական բոցավառութիւնը կար, Սպանիականին քնքշութիւնը, Ֆրանսականին խրոխտութիւնը և Հայկականին դեռ անբացատրելի քաղցրութիւնը, որ կարծես թե բոլորին մեկ միութիւնը ներդաշնակորեն կը ներկայացնէր: Շահ-Մուրատյանի «Հայաստան»ը յուր գլուխգործոցներեն մին եղած ըլլալ կը թվէր: Անով էր, որ երգիչը ժողովրդյան սրտի անդունդները փոթորկեց. լացուց մեզ ու պահ մը Դրախտավայր Հայաստանի մը ստվերովը օրորեց: Երբ վերջի վարագույրը իջավ «Հայաստան»ի վերջի հուզիչ նոթերուն վրա ու լույսերը ողողեցին թատերասրահը, ժողովուրդը արձանացած գտանք պահ մը իր աթոռին վրա: Վերացած, մագնիսացած էր ան: Անոր դեմքը նոր արտահայտութիւն մը ուներ: Շատերուն թարթիչներուն մեջեն արտասուքի կաթիլները կը փայլեին արդեն: «Հայաստանը»ը... լացուցած էր մեզ: Անոր վերջի խազերը դեռ կը հնչեն մեր ականջներուն ու պիտի հնչեն երկար ժամանակ:

Դաշնակահար Փրոֆեսորը՝ Թեո. Ըրվին, որ Սան Ուոգին Վելլիի մեջ ամենեն նշանավոր դաշնակահար վարպետն է, վկայեց անվերապահ կերպիվ, թե Շահ-Մուրատյան ամենահաջող երգիչն էր, որուն լսած և ընկերացած ըլլար ցարդ թատերաբեմին վրա: Նույն վկայութիւնը տվին զարմացմամբ այն քանի մը Ամերիկացիները, որոնք հաճած էին պատվել Հայ արվեստագետին նվագահանդեսը:

Հայտագիրը կը բաղկանար երկու մասերե: Առաջին մասին մեջ երգեց Շահ-Մուրատյան «Բամբ Որոտան»ը և Իտալական կտոր մը, իսկ երկրորդ մասին մեջ էին «Օրոր»ն ու «Հայաստան»ը:

Ըսել, թե ժողովուրդը ծափահարեց զայն՝ սովորական բացատրութիւն մը կրկնել կը նշանակե: Թատերասրահը թնդաց

իր հիմերեն, երգիչը կրկին և կրկին անգամ բեմ գալ ստիպվեցավ և «Օրոր»ն վերջ Մշեցիք փառավոր ծաղկեփունջ մը ներկայացուցին անոր, զոր գնահատեց մեծապես:

Սակայն դեռ շատ Հայեր բացակա կը մնային. շատեր զբրկված էին երգիչը լսելու պատեհութենեն: Հետևյալ օրն իսկ ամեն կողմերե պահանջ եղավ երգիչը լսելու նոր առիթի մը ևս: Գոհացում տալու համար անոնց, որոշվեցավ երկրորդ նվագահանդես մը ևս տալ: Ինչպես որ կը տեսնվի այսօրվան հայտարարութենեն, Շահ-Մուրատյան այս անգամ պիտի երգե քաղաքիս մեծագույն թատրոնին մեջ ու եկամուտին կեսը պիտի հատկացնե Կովկասահայ կարոտելոց: Այս երկրորդ նվագահանդեսը տեղի պիտի ունենա Հունվար 2-ին, Կիրակի օր, կեսօրե հետո: Տոմսերը ի վաճառ հանված են արդեն, և վստահ ենք, որ շատեր պիտի օգտվին այս առիթեն և միևնույն ատեն սատարած պիտի ըլլան Հայ կարոտելոց:

Ա. Շահ-Մուրատյան երկու օրեն Լոս Անճելըս կը մեկնի՝ հոն նվագահանդես մը կազմակերպելու նպատակավ նախնական կարգադրություններ ընելու և ժամանակին Ֆրեզնո դառնալու համար:

«Նոր կյանք», Ֆրեզնո, 1915, թիվ 43

ՇԱՀ-ՄՈՒՐԱՏՅԱՆ ՊԻՏԻ ԵՐԳԵ

Պոսթընի և չրջանի հասարակության դարճյալ հոգեկան վերացումի վայրկյաններ վայելելու հաճոյալի առիթը կ'ընծայվի:

Հառաջիկա կիրակի, Մայիս 18, Jordan Hall-ի բեմեն Տարոնի Սոխակը պիտի դայլայլե:

Եվ մտածել, որ դժբախտաբար հայ ժողովուրդը միայն մեկ Շահ-Մուրատյան ունի...

Եվ մտածել, որ այս չրջանի տարագիր հայությունը՝ մեծ սուգի և մեծ հույսի այս օրերուն, բարեբաղդությունը ունի իր մեծ երգիչը լսելու. ան, որ գուցե, ինչպես կը հաստատվի, կարճ ատենեն մը հետո այլևս մեզի՝ ամերիկահայության հետ չըլլա:

Դարերու բռնապետութիւնները՝ մշտնջենական տառապանքի չղթաներով կաշկանդել չանացած էին հայ հոգին, պղպատե պարիսպ ու պատնէշներ քաշած ցեղին արյունոտ ճամբուն վրա՝ կասեցնելու համար անոր մշակութային առաջխաղացքը: Այդ իսկ պատճառով է որ բնատուր ձիրքերով, տաղանդներով օժտված այս ցեղը՝ չէ ունեցած Կոմիտասներու և Շահ-Մուրատներու երամ մը, որոնցմով կարենայինք օլիմպական դափնիներ խլել արվեստի ընդարձակ տոպաշներու մեջ: Բայց այդ բոլորի մեջեն, մենք դարձյալ հպարտ ու հաղթական ենք դարերէ ի վեր մեր բնաջնջումին ձգտող մեր բոլոր թշնամիներուն դեմ...

«Հայրենիք», Բոսթոն, 1919, մայիսի 17

ՇԱՀ-ՄՈՒՐԱՏՅԱՆԻ ԵՐԳԱՀԱՆԴԵՍԸ

Անցյալ հինգշաբթի դիշեր «Ժուռնալի»ի սրահին մեջ, մասնակցութեամբ օտար ծանոթ արվեստագետներու, տեղի ունեցավ տաղանդավոր երգիչ Ա. Շահ-Մուրատյանի երգահանդեսը:

Բարիզահայ գաղութը իր բոլոր խավերով ներկա էր այդ երեկո: Հարուստ դասին քով ակնհայտնի կը տեսնվեր նույնպես աշխատավոր դասը, որ հետևյալ առտու կանուխ ելլելու տաժանելի մտավախութիւնը արհամարհելով՝ եկած էր լսելու ժողովրդին երգիչը, ապացույցը տալով այդպեսով իր գեղարվեստասեր ճաշակին:

Շահ-Մուրատյան երգեց չատ մը կտորներ՝ եվրոպական և առհասարակ հայկական:

Ի մեջ այլոց երգեց իտալերեն («Caro Mio Ben» G. Giordaniի), ֆրանսերեն («Arioso» Leo Delibesի և «Chant Hindou» H. Bembergի), որոնց մեջ Շահ-Մուրատյան ի հայտ եկավ իր արվեստի բովանդակ նրբութեամբ:

Հայերեն երգերը զմայլելի էին:

Շահ-Մուրատյան ծնած է հայ երգին համար:

Եկմալյանի, Կոմիտասի, Ռ. Մելիքյանի և Գ. Սյունիի գործերը Շահ-Մուրատյան երգեց ինքնահատուկ և հարազատ ռիթմով:

Տարոնի Պլպուլը ներկանները փոխադրեց մերթ Ալագյազի լանջերը, մերթ այդ լանջերեն վար իջեցնելով՝ տարաւ նետեց զանոնք աչնան եղանակէն զարնված դաշտին մէջ:

Դյութիչ, հմայիչ էր Կանաչյանի «Օրոր»ը, որ Շահ-Մուրատյան երգեց ջութակի և դաշնակի ընկերակցությամբ: Յուրաքանչյուր բառ, յուրաքանչյուր ձայնանիշ Շահ-Մուրատյանի բերնեն դուրս կ'ելլէին այնքան նուրբ ու այնքան քընքոյշ, որ այդ երգը վայրկյան մը չաղախվեցավ ժողովրդի հոգիին հետ: Այդ երգեն չուզեց բաժնվիլ ունկնդիրը, ու բուռն ծափերու տարափին տակ Շահ-Մուրատյան կրկնեց զայն:

Կոմիտասի «Մոկաց-Միրզա» երգին մեջ Շահ-Մուրատյան գլեց անցավ ամեն ինչ: Տարաբախտ վարդապետին չունչը Շահ-Մուրատյանի միջոցավ վայրկյան մը սավառնեցավ սրահին մեջ: Կոմիտաս վարդապետի այդ դյուցազներգական և արհավիրալից երգը Շահ-Մուրատյան երգեց այնքան հոգիով և այնքան արվեստով, որ ներկանները վայրկյան մը մոռցած ամեն ինչ, կտրված արտաքին աշխարհեն՝ ապրեցան հուզումի գեղարվեստական պահեր:

Հակառակ տարիներու բեռին, Շահ-Մուրատյան կը պահէ միշտ նույն հզոր և դոռ ձայնը, որ տարիներէ ի վեր հնչեց ու պիտի հնչէ տակավին՝ ապրեցնելով հայ երգը:

Յանկալի է, որ Շահ-Մուրատյան կրկնե իր երգահանդեսը, որուն հուսով եմ, որ բարիզահայ գաղութը հաճույքով պիտի դիմե երկրորդ անգամ:

«Երևան», Փարիզ, 1927, թիվ 306 (հեղ. Սեչատրա)

ԱՐՄԵՆԱԿ ՇԱՀ-ՄՈՒՐԱՏՅԱՆ

Սեպտեմբեր 14-ին, առավոտյան ժամը 9-ին, Փարիզի արվարձան Արքեույի մեջ, 61 տարեկան հասակին, իր վերջին չունչը փչած է Արմենակ Շահ-Մուրատյանը և սեպտեմբեր 16-ին հողին հանձնված է նույն արվարձանի գերեզմանատունը:

Պատերազմի պատճառով թաղումը կատարված է անշուք: Միայն մեկ քահանա ներկա գտնված է և իր մոտիկ բարեկամները, համակիրներն ու հայրենակիցները:

Հանգուցյալի կնոջ նամակներեն՝ գրված ընկ. Հ. Պարույրյանին, կը քաղենք հետևյալ տեղեկությունները մեր անգուդական երգիչի վերջին օրերու, մահվան և հուղարկավորության մասին:

Շահ-Մուրատյանը ժամանակ մը ի վեր կը տառապեր մոպային հիվանդութենն, բայց իր կյանքի վերջին վայրկյանները ցավագին չեն եղած: Ան մեռած է հարազատներու շրջապատին մեջ և պիտակցությունը տեղը:

«Մահվընե երկու օր առաջ, - կը գրե Տիկին Շահ-Մուրատյան, - Արմենակը կ'երգեր անկողնին մեջ ձայնով մը, որ դըժվարությամբ դուրս կուգար կոկորդեն. կը բարձրացներ գլուխը, կը դիտեր շուրջը և կը հանգստանար՝ տեսնելով մեզ: Իմ մեծ վշտի մեջ ես երջանիկ եմ, որ կարողացա գոհունակություն պատճառել հանգուցյալին իր կյանքին վերջին վայրկյաններուն և երբեք չեմ մոռնար, որ ատիկա կարելի եղավ միայն չնորհիվ ձեր՝ իր բարեկամներու և իրմով հիացողներու աջակցությամբ»:

Մահը եկած է առանց տանջանք պատճառելու: Շահ-Մուրատյանը մեռած է հանդարտ, առանց ցավի:

Մահվընե առաջ հրավիրված է հայ քահանա մը, որ կատարած է նաև թաղման արարողությունը հանգուցյալի բնակարանին մեջ: Փարիզի եկեղեցին կարելի չէ եղած տանիլ, որովհետև արվարձաններն եկեղեցի տանելու համար պահանջված է 5 000 ֆրանք, ինչ որ հնարավոր չէ եղած հոգալ:

Տիկին Շահ-Մուրատյան չանք չէ խնայած պատշաճ չուքով կատարելու հուղարկավորությունը, և այդ կարելի դարձած է բացառապես Ամերիկայի տարոնցի հայրենակիցներու նյութական հոգացությամբ: Եվ արդեն իր կյանքի վերջին օրերն ալ Շահ-Մուրատյան պաշրած է գլխավորապես Ամերիկայեն ստացած օժանդակությամբ:

Տիկինը կը հաղորդե, որ Շահ-Մուրատյանի գերեզմանի վրա պիտի դրվի տապանաքար մը և ատոր համար պետք ունի հայրենակիցներու նյութական աջակցության:

Շահ-Մուրատյանի գերեզմանը կը գտնվի Արքեոյի բարձունքին վրա և կ'իշխե չրջապատին, ինչպես կ'իշխեր իր ձայնը բազմահազար ունկնդիրներու զգացմունքներուն վրա:

«Հայրենիք», Բոսթոն, 1939, թիվ 8331

ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՐԾԻՔՆԵՐ

***

Շահմուրատը, որ հայ հողի սերմն է, հայ ջրովը սնված ու հայ արևովը կիզված, ունի ընտիր, պայծառ և եռանդուն ձայն: Հայերուս համար որքա՜ն պարծենալիքներ պիտի առթնե տակավին նա, որ իր գործունեության գարնան չեմին վրա է կանգնած...

ԿՈՄԻՏԱՍ, 1913

(Վ.Մալեզյանին գրած նամակից)

ԱՐՄԵՆԱԿ ՇԱՀ-ՄՈՒՐԱՏՅԱՆ

Ամեն անգամ, որ զիրար տեսնեինք, Շահ-Մուրատյան տակավին Conservatoire-ի ուսանող, ինծի կը պատմեր իր հաջողությունները. ես իրեն կը խոսեի ազգային կյանքին վրա՝ ենթադրելով, որ իբր արվեստագետ՝ ան ստիպված էր հայ կյանքեն հեռու ապրիլ:

Ու ամեն անգամու ալ, հազիվ իմ հավիտենական խոսակցությանս թելը քակած, գոհունակությամբ կը դիտեի, որ ան ինձմե շատ ավելի թարմ լուրեր ուներ Մուշեն կամ Կովկասեն:

Եվ կը խոսեինք ժամերով՝ փողոցներու անկյունը կանգ առած:

Երբեմն կը պատահեր, որ հուժկու հոգված մը կարդայի իրեն, ինչպես Վահեի կրակոտ ու կուռ «Volte-Face»ը, և երկուքս ալ հուզվեինք ու զայրանայինք, ես՝ իմ արագ, անհամ-

բեր ու լայն չարժումներովս, Շահ-Մուրատյան՝ իր սրտնեղ ըղգրգռուբյամբը, իր շարունակ հրահրվող եբենոսե բիբերուն արձակած նշուլյներովը, որ նիհար ու ղռապինդ լույս մը կը նետեին երկար ու նուրբ երեսին վրա: Այդ երեսը բնավ չէր խնդար, այլ կը ժպտեր կարծես ակամա, ծաղրալիր, ու ժպիտը կը փոխարկվեր իսկույն անմեկնելի, անորոշ ու տարտամ խոհականության մը, ուր կարծես զայրույթներու և գաղտնիքներու ամբողջ տիեզերք մը կը նիրհե:

Ու կը բաժնվեինք իրարմե: Հանդարտ կալվածատերի չափավոր քայլվածքով ան կը հեռանար, երկայնկեկ ու կոկիկ: Եվ գննող հետաքրքրությամբ մը տոգորված իր պզտիկ, սև չամիչ աչքերը, որ կարծես հավերժական մտահոգությունը կը պատմեն իր ցեղին, իրենց խաղաղ երևությին տակ, կրկին կը գտնեին մենակյացի իրենց վճիտ, այլ լռիկ ու մութ առանձնությունը:

Օբերա մտնելեն ի վեր ան բնավ չէ մոռցած իր ազգասիրությունը:

«Ինչպե՞ս կարելի է որ ես ազգս մոռնամ» - կ'ըսեր ինծի դեռ երեկ, երբ երգիչներու սրճարանին, Wetel-ի մեջ, զիրար գտնելով՝ կը խոսեինք իր առաջին տպավորություններու մասին:

Ու կը հիշեր Բարիզյան Echo de Paris-ին կատակը, «Ջ'ըլա՛ որ Շահ-Մուրատյանի թուրք ես՝ ըսե՛ք - ան կը բարկանա»:

Ջէ՞ որ ինքն ալ երբեմն հեղափոխական է եղած, և կը հավատամ, թե անոր սիրտը հիմակ ալ հեռի չէ նախկին ձգտումներեն: Ջէ՞ որ իր հայրենասիրության համար հալածված, բանտարկված է Ռուս կառավարության կողմե և ետքը թուրքիա աքսորված: Եվ վերջապես, չէ՞ որ իր ամբողջ բարոյական և իմացական դաստիարակությունը մշակված է նույն ազգայնական ոգիով:

Նախ՝ ուսանող Մշո Միացյալի նախակրթարանին մեջ, Խաբախանյան եպիսկոպոսի անձնական ծախքովը ան կը ղրկվի Գևորգյան ճեմարան: Միայն մեկ տարի կ'աշակերտի հոն Կոմիտաս վարդապետի, որուն քով կը կատարելագործե հայկական ձայնագրությունը:

Ճեմարանի խռովությունը վրա հասնելով՝ Խրիմյան Հայրիկ ի մեջ այլոց զինք ալ կը փոխադրե Թիֆլիսի Ներսեսյանը:

Հոն՝ Շահ-Մուրատյան ուսանող՝ խմբապետ կը կարգվի Եկմալյանի քառաձայն խումբին ու կը մնա այդ պաշտոնին մեջ չրջանավարտ ըլլալէ ետքն ալ:

«Թիֆլիս եղած է, – կ'ըսե Շահ-Մուրատյան, – այն միջավայրը, ուր իմ երաժշտական հակումներս սկսած են լայն համեմատութիւններ առնել, չնորհիվ տեղական Օպերային, Թատրոններու և երաժշտական չրջանակներու»:

Ի՛նչ հուզումներու չմատնվիր ան՝ նորեն Թիֆլիսեն Մուշ աքսորվելով. Եվրոպա երթալու ծրագիրը չուրը կ'իյնա, միջավայրը կը փոխվի, սիրտը չփոխվիր սակայն – ընդհակառակը: Մուշ դառնալով՝ Շահ-Մուրատյան կրկին վարժապետ կ'ըլլա, այդ պաշտոնով կ'երթա նաև այլուր, ավելի դիտակից աչքով կը տեսնե մանկութեան հայրենիքը ու մի անգամ ընդմիշտ կը համոզվի անոր փառքին համար տառապելու, տոկալու, լավագույն հայ մը և գերազանց արվեստագետ մը դառնալու անհրաժեշտութեան:

Այդ չրջանեն խիստ ցայտուն կերպով ի հայտ կուգան իր նկարագրին մեջ երեք ազդակներ. կամքի կորովով և համառ չանքերով իր ճամբան հարթելու ձեռներեցութիւն մը, հավատք իր տաղանդին վրա և հոգեկան անդիմադրելի թռիչք ու բաղձանք դեպի իր կոչումը:

Շահ-Մուրատյան կտրիճ չեչտով մը կը պատմե, սակայն, որ այդ իտեալի անդուլ հետապնդումը զինք վայրկյան մը իսկ չէ կասեցուցած իր նվիրական պարտականութիւններեն, և այն օրն, որ ուզած է ոտքը Մուշեն դուրս նետել, արդեն կըրցած է ապահովել իր ընտանիքին հանգստութիւնը:

«Խնդրեմ, հասկցուր մանավանդ, – կը կրկնե ինծի, – թե ես բնավ լքված չեմ, թե միայն իմ սեփհական միջոցներովս է, որ հաջողած եմ Բարիզ գալ: Եթե մարդիկ ուզած են օգնել ինծի, Conservatoire-ի հաջողութիւններես ետքն է միայն, ո՛չ, այն ատեն ամեն ոք ուզած է բաժին մը ունենալ իմ հաջողութեանս մեջ, մինչդեռ նույն այդ անձերը այսօր անոթի անօգնական կը թողուն չատ մը աղքատ ու տաղանդավոր ուսանողներ, որ – ի՛նչ ճղճիմութիւն – Օպերայի երգիչ ըլլալու էթիքեթը չեն կրեր»:

Եթե նկարագրի տեսակետով Շահ-Մուրատյան կը պարծենա իր հայկական դաստիարակութեամբ, արվեստի տեսակե-

տեն ան կ'ողբա – ըստ իս՝ անիրավաբար – հայ երաժշտութեան խորունկ ազդեցութիւնը՝ իր վրա:

Այդ ազդեցութիւնը մեղմացնելու համար իսկ Արմենակ Շահ-Մուրատեան բնականեն ունեցած է մեծ արժանիքը անհողդողդ ճիգերով փնտռելու «արտահայտիչ ճշմարտութիւնը, ճշգրիտ և մեկին իմացողութիւնը» երգված խոսքերու իմաստին և գործած ազդեցութեան:

Առանց այս ներքին չարունակական ճիգին Շահ-Մուրատեան չպիտի կրնար մաքրել ձայնը, որ իր բնական ճկունութեան, պարզ ու խաղաղ, բարձր ու նվաղկոտ, թրթռուն, անկեղծ, հրապուրիչ չեչտերուն տալով մտավոր մարզանքը՝ Conservatoire-ին առաջին շրջանեն իսկ ահագին հաճելի անակնկալ մը պատճառելով, անոր հաջողութիւնը ապահոված է իբր երգիչ:

Իբր երգիչ՝ հմայքը, որ Շահ-Մուրատեան ունի, հավետ գեղեցիկ ու տևական պիտի ընծայվի չնորհիվ իր անհատական ինքնաբուղխ կորովին, արվեստագետի initiative-ին և բնատուր չնորհներուն, որոնցմով ան մտած է հառաջադիմութեան ճամբան – վախով և հուզումով թեև – բայց՝ Մշո Սուրբ Կարապետի հաղթական նժույգը հեծած:

«Իրա՛վ, վախս մեծ էր, – կ'ըսե ան, պատմելով իր առաջին տպավորութիւնները: – Բեմ ելլելես տասնևհինգ օր առաջ քունս փախած էր. գիշերը հանկարծ կ'արթննայի սոսկումես ղպազրվիս: Այս վախը շատ բնական էր. նախ՝ բնավ լման կտոր չէի երգած, բեմական զարդերն ու հագուստը վրաս կը ճնշեին. վարժված չէի երգելու օրքեսթրի ընկերակցութեամբ և տեքորներու մեջ: Արդեն փիզիքապես ընկճված էի և անուժ, ավելցուցե՛ք ասոր վրա առաջին հուզումներուս, անձկութիւններուս անմիջապես հաջորդող հափշտակութիւնը, զըմայլանքը՝ լույսերու, նվագներու և պարերու չողշողուն ու հանկարծական երևումին՝ բեմ ելլելուս, և չա՛տ լավ կը բացատրեք առաջին անհամարձակութիւնս»:

Արդարև, Օքերայի վարչութիւնը զինք դրած էր դժվար կացութեան մը մեջ՝ անոր հանձնելով Ֆաուստի գլխավոր դերը. հարկ էր ֆրանսական ազգային արժանապատուվութիւնը չվիրավորել և առաջին անգամեն գրավել ու գերել չնորհնե-

րու և ճաճանչավետ հրապուրներու նրբաճաշակ և զգայացունց ամբողջ Բարիզը:

Շահ-Մուրատյանի համար կար նաև պատվո խնդիր մը, զոր առաջին հայ երգիչն ըլլալու զգացումը ավելի՛ զորավոր դարձուցած էր իր մեջ: Կարելի՞ էր պարտութեյան մտածումին և հուսահատութեյանը հանդուրժել՝ այնքան ատեն իր անհատ հաջողութեյան փառքովը հայկական կորովը պանծացնել երազելե ետք, – մանավանդ Բարիզի Օպերային մեջ, ուր մտնող երգիչը ինքզինքը կը կարծե տեսակ մը դրախտի մեջ. արվեստագետին սիրտը չկրնար կրավորական ու անգործ հանդիսատես մը գտնվիլ այդ վայրին մեջ, ուր երգը կը թռչի ցոլքերու, ոսկի ճաճանչներու, փառքերու, ակնապարար տեսիլքներու, գունագեղ ծաղիկներու ընդմեջեն և ճեղքելով հևքոտ մթնոլորտը թարմ շնորհներու՝ կը խառնվի գեղուհիներու շաչուն, գաղտագողի ու ճերմակ ծափերու հուլլին, որ վերջալույսի բորբոս հրավառութեյան տակ հուզված ու խորհրդավոր լճակի մը վերև պարեր կապող աղավնիներու թեթև թռիչքներու պես կը փալփլա:

Այս աստիճան չքեղ ըլլալով հանդերձ՝ անհամեմատորեն հյուրընկալ է Օպերայի մթնոլորտը և սփոփիչ. ան կը նմանի խանդակաթ մոր մը ակնարկին, որ կ'ուզե խոժոռիլ, այլ կը ժպտի ու կը հանճնվի սրտաբաց: Եթե այսպես չըլլար, դժվարավ պիտի մեկնվեր այն արագ համակրութեյունը, զոր Շահ-Մուրատյան գտավ հոն իր աստիճանաբար ջերմոտ ու սառն վայրկյաններեն և սրտմաշուքներեն ետք: Օպերայի երգիչ ըլլալը մեծ արժանիք մըն էր ինքնին: Բարիզի սիրտը գրավելը Շահ-Մուրատյանի հայ առնականութեյունը հուչակեցուց ու պանծացուց՝ շնորհներու ետևը վազող օտար անթիվ թեկնածուներու և մրցակիցներու վրա:

Ենթադրել, սակայն, թե Շահ-Մուրատյան չփացած ըլլա այդ նախապատվութենեն և իր երևակայութեյունը հառած անհնար ու հպարտ բարձունքներու և հորիզոններու՝ անիրավել պիտի ըլլար տաղանդավոր երգիչ մը, որ միշտ համեստ կ'ուզե մնալ, միշտ մոտիկ իր հայ բարեկամներուն, որ տեսակ մը սիրուն, զմայլելի ու մանկական միամտութեյամբ, անկեղծութեյունով կը կրկնե ինծի.

«Իմ երազս է, երբ երգիչի կոչմանս վախճանին հասնիմ, երթալ գավառ և անկյուն մը վարժապետ ըլլալ՝ ինչպես էի ե-րիտասարդ տարիքիս»:

Ու թող գտնվին ասոր վրա մարդիկ, որ ուրանան տոհմա-յին դաստիարակութիւնը, ազգայնական ոգին, որու ազդե-ցութեան տակ անհատ տաղանդը բնական ճգտումով մը կը մղվի իր փառքը մոռնալու ազգային մեծութեան ի նպաստ, և որու ներշնչումով արվեստագետին զգացումները կը պահ-պանվին իրենց տոհմային հատկանիշներով, կը գտնվին, կ'ազնվանան, երգիչի հոգին կը թոթափե օտար միջավայրը շրջապատող ձևական կեղծիքները, և անոր մարմինը շարու-նակական չանքին տակ այնքան կը նիհարնա, որ բանաստեղ-ծութեան և նվագի ազդեցութեամբ թրթռացող իր չիղերը կ'այ-լափոխվին և իրենց դաշն մեղեդին փոխադրելով՝ կը տարածեն ամենուրեք իբր կնդրուկ, իբր աղոթք, իբր խայտանք, խնծեղ և հրապույր:

Թող գտնվին նաև մարդիկ, որ հավակնին, թե արվես-տագետ մը անհրաժեշտորեն ստիպված է օտարանալ, ուրանալ իր հայութիւնը: Ո՛չ, Արմենակ Շահ-Մուրատյան հուժկու ապտակ մը կուտա այդ նորամոլներուն, այդ սալոնի hlouc-hec-ներուն՝ իր օրինակելի բարքով և հարազատորեն ազգայ-նական ոգիով, ապացուցանելով, որ հայ տաղանդը կրնա ար-վեստի ամենագեղեցիկ ու ազնիվ արտահայտութիւններուն մեջ անգամ դնել ինքնուրույն շեշտ մը ու երանգ մը, որմե զրկված ըլլան ուրիշներ:

Այն հրապույրը, որ իր ձայնին մեղմ ու սահուն, վճիտ ու նուրբ, տխուր ու կայտառ թրթռացումներեն կը բղխի, կը մատնե ազդեցութիւնը մեր ժողովրդային երգերուն ու չարա-կաններուն, առանց վնասելու եվրոպական ոճին, ընդհակա-ռակը, զայն ավելի զգայացունց և ավելի մարդկային ընծայե-լով:

Շահ-Մուրատյան այսպես իր արվեստին մեջ կը միացնե գողթան երգերու շողարձակ ու նախշուն արտասանութիւնը՝ Ղարիպի երգերուն անհունորեն հոգեհույզ մեղմութեանց:

Ա՛ս տարրերն են թերևս, որ իր ստացական գիտութենեն ա-վելի հյուսած են իր շեշտերը, կազմած իր ձայնը: Ինչի՞ մեջ

կը կայանա ձայնի մը գեղեցկութիւնն արդէն, եթէ ոչ՝ ներքին հոգեկան հույզերուն, երևակայութեան վերասլաց դալա-նումներուն և սրտին համակ բանաստեղծութեան մեկ չանքով արտադրած ներդաշնակութեան մեջ, զոր հայրենի անցյալը իր երգերով և ավանդութիւններով կը հորինե: Ու անցյալին այս ազդեցութիւնները կարելի չէ մտքին չարունակ ներգործող արտաքին առարկաներ նկատել, այլ մեկ մասը արվեստագետի էութեան, մեկ արձագանգը հեռավոր այն ամեն հուզումնե-րուն, ուրախութեանց, սերերուն, որ հայրենի դարավոր կյան-քեն մեզի կը հասնի ու մեր գոյութեան խորքերուն մեջ կ'եր-թա մարմրիլ...

Երգը իր իշխանութիւնը կը տարածե նաև իրմով մեր մըտ-քերուն մեջ ստեղծված հանդարտ ու խաղաղ մթնոլորտին մեջ, ուրկե մեր երևակայութիւնը կը փոխադրվի մեղմորեն կար-կաչող առվակներու, նիրհող թուփերու, գեղածիծաղ հովիտ-ներու, խոռվված ծովերու և հայելիացած լճակներու եզերքը... ան կանգ կ'առնե վերջապես տարակուսաներով և փիլիսոփա-յութեամբ չարչրկվող Համլեթի մը առջև և լրջորեն կը նայի Շաուսթի մը գիտութիւններե հոգնած, պարտասած, զղված կյանքին՝ որ իր հաճույքի ցանկութեան մեջ երես երեսի հանե հավիտենական հակառակ ուժերը չարին և բարիին, ու Շահ-Մուրատյանը կը նետե Մեֆիստոփելեսի ճանկեն հրեշտակնե-րու գիրկը:

Ու կը կազմվին այսպես սիրո երգեր, որ անձկութեան, իղձի և հուսահատութեան մեջ տառապանքը կը ներքողեն, կ'անմա-հացնեն. մահվան երգեր՝ որ թեև հոգիներու վրա կը ճնշեն, այլ սակայն, լավագույնին ու գեղեցկագույն կյանքի մը լույ-սը կը դնեն սրտին մեջ: Արդեն հոս է, որ երևան կուգա Շահ-Մուրատյանի արևելյան միսթիք, եկեղեցական երգերու և աշուղի մեղեդիներու ազդեցութեան տակ մարզված երաժշտա-կան հատկութիւններուն առավելութիւնը. Շաուսթի մեջ ան կը գտնե Եկեղեցին ու Թատրոնը հաշտեցնելու միջոցը, և իր հայկական տաղանդը ավելի ցայտուն կ'ընծայվի տխուր օրհ-նենքներուն հետ երևան եկող պարերու, խմբերգերու, նվագ-ներու, գոհարներու, ոսկեշող զարդերու և խիզախ սուրերու արագ, թրթռուն, հանկարծական, խաղաղ ու գոռացող, մեղմ ու զայրալիր քլիքըթիին հակազդեցութեանը մեջ:

Եվ ո՛չ միայն Շահ-Մուրատյանի հայկական երաժշտության դաստիարակությունը իր արժեքը աչքառու կ՚ընծայե հոս, այլ՝ այս հուզումներու և նվագներու բարդության, երգերու այս այլազան ու գունագեղ շեշտերուն մեջ, ուր Արևելքի արևուտ ու կայտառ կյանքն ու խանդավառ երևակայությունը կը խառնվին Արևմուտքի քաղաքակրթված կյանքի մտածումներուն, նրբություններուն և բազմազան զվարթ ու տխուր զգացողությանց, Շահ-Մուրատյան կը գտնե իր իմացականության ու ճաշակին գոհացումը: Ինչպես բոլոր գեղարվեստներու մեջ, հոս ալ՝ նման բոլոր ճշմարիտ արվեստագետներուն, ան ալ կը ճգնի երգի ուժով հարուցանել ներքին կյանքը իր բոլոր երևույթներով, հոգին ու իմացականությունը ապրեցնել մարդկային կյանքին ու կոչումին տեսակ մը գերբնական դիտակցությանը մեջ, որուն, ավա՛ղ, չենք կրնար հասնիլ մեր մտավոր սահմանափակ կարողությամբն ու զգայարանքներովը: Ասոնք պետք է կատարելագործվին, նրբանան, սրբվին, բացվին, զտվին մեկ կողմեն մարդկության անցյալ կյանքին ու փառքին վերհիշումովը, և մյուս կողմեն՝ անոր եսին ընդարձակումովը, այլափոխումովը՝ տեսակ մը վերապրումի մեջ, որ մարդկության առջև բանա անծանոթ հորիզոններ, թագուն մնացած ներքին ու արտաքին աշխարհներ և մարդկային եսը չարունակե անոնց մեջ ապրիլ իր անդրաշխարհային կյանքը:

Մեր կարողությանց այս ընդարձակումը դիտութենե ավելի գեղարվեստի միջոցով պիտի իրագործվի, և անոնցմե ամենամարդկայինին՝ երաժշտության միջոցով, որ մեր սեփհականությունը և մեր ստեղծագործությունը ըլլալով, պիտի ըլլա մեր ալ առաջնորդը դեպի ոսկեզօծ երազներու և անմահական կատարելության տենչալի ափունքը:

Երգիչը այսպես դիտակից ու ապրող գործիք մըն է պարզապես, որ երգի վերածված բանաստեղծական ներշնչումը կը հաղորդե մարդկության: Ան այն ատեն դերասան մըն է, որ կյանքը կը ներկայացնե իր վիշտերուն և ժպիտներուն մեջ:

Միտքը, որ արտաքին առարկա մը ու դեղեցիկ տեսարան մը նկարելու համար կը ճգնի նկարիչի մը մեջ, երգիչին համար գոյություն չունի բնավ. անոր համար մտածումը կը փոխարկվի չարժումի և խորհուրդը կը հալի զգացումներու և

հույզերու բնական ու միանվագ պոռթկումին մեջ:

Սակայն Շահ-Մուրատյան կ'ըսե. «Երգիչ մը հաջողելու համար անհրաժեշտորեն ըլլալու է musicien, անկե իբր դերասան՝ կատարելություն չի պահանջվիր»:

Վան Տիք լավ դերասան է առանց առաջնակարգ երգիչ ըլլալու – իսկ Նոթե՝ ի՛նչքան հրաշալի երգիչ, նու՛յնքան մըն ալ անվարժ է իբր դերակատար:

Շահ-Մուրատյան, ինքն ալ առաջին անգամ դեռ անփորձ ու անվարժ, սկսած է հետզհետե բացվիլ:

«Շարժումի դյուրությունը ժամանակի խնդիր է, – կ'ըսե ան, – աշխատության առջև ամեն դժվարություն կը վերանա: Դժվարին քայլը առած եմ, հիմա ինծի կը մնա պատրաստել repertoire-ս, Ֆաուսթեն վերջ՝ Ռիկոլեթթո, բոլոր օպերաները առանց մասնավոր նախասիրության պետք է մշակել: Ինչ որ պիտի կրնամ ընել՝ բացարձակապես պիտի բղխի իմ անձնական նախաճեռնությենե, իմ համառ ճիգերես»:

Ու ավելի տաքնալով Շահ-Մուրատյան կը հարե.

«Թատրոնը ինծի համար պաշտամունքի տաճար մըն է հիմա, ան հոմանիշ դարձած է եկեղեցիին. երգելը նույն նվիրական գործն է, որու ներշնչումին տակ դերասանը կը մոռնա իր ներքին զբաղումները, իր ամբողջ կյանքը, զինք չրջապատող բոլոր չքեղություններն ու գեղեցկությունները»:

Եվ երբ այսպես խանդավառված կը խոսի ան, ես կը հիշեմ մեր առաջին հայրենասիրական տեսակցությունները, ուր բառը կրակե չունչ կ'առներ անոր լեզվին վրա, անոր աչքերը կը փայլեին արտասովոր ճառագայթներու նշույլներովը:

Եվ մինչ այն առեն տարակուսով մը կը հարցնեի իրեն, թե արդյոք ինք կը հետաքրքրվե՞ր հայ կյանքով, հիմա ավելի չարաճճի դիտումով մը իրեն կը հարցնեմ, թե արդյոք սիրտը չուզե՞ր ճաչակել հրապույրը այն հրաշալի գեղուհիներուն, բեմի աստղիկներուն, որոնց փառքը հեռվե հեռու տեսնել տատապարտված են հասարակ մահկանացուները: Շահ-Մուրատյան իր հափշտակության մեջ առեն կը գտնե լայն ու անկեղծ շարժումի մը մեջ գոչելու. – «Ո՛չ, բարեկամ, զանոնք համբուրել իսկ մտքես չեմ անցներ»:

ԵՐՎԱՆԴ ՄԵՍԻԱՑԱՆ

«Արագած», Նյու Ցորք, 1911, թիվ 4

Ա. ՇԱՀ-ՄՈՒՐԱՏՅԱՆ

Այս անունը բազմաթիվ անգամներ ամեն Հայ ականջի հաճելիորեն հնչած է արդեն ու ամեն անգամ ալ՝ Հայ անվան ու արվեստին ի պատիվ տարված հաղթանակի մը բերումով: Երբ մեր հայրենակիցը Բարիզի Քոնսեռվաթուառի Ա. մրցանակը չահեցավ ու երբ ան օտարներու համար աննախընթաց հաղթանակեն հետո ֆրանսական ազգային Մեծ Օբերան կոչվեցավ, իրեն հետ Հայ անունն ալ Արվեստի այդ վեհաշուք կամարներուն տակ հնչեց՝ պայքարի մեջ վաստակված արդար իրավունքի մը համարձակութիւյամբ: Ամեն անոնք մեր դժբախտ սերունդեն, որ մայր երկրին մեջ մեր նյութական մարտիրոսության համընթաց՝ Եվրոպայի մեջ ալ հայ անվան բարոյական մարտիրոսացումին անզոր հանդիսատեսներն եղան, խանդակաթ երախտագիտութեյան զգացումով մը ողջունեցին այն բոլոր երևույթները – ու Շահ-Մուրատյանինն ամենեն փայլուններեն մին եղավ անոնցմե – որոնք մեր անունը պատվավոր ու պանծալի հանգամանքներու մեջ ճանչցուցին օտարին...

Շահ-Մուրատյանի կյանքը տոկունութեյան, հարատևութեյան, չանադիր ու համառ աշխատանքի, ուշիմ ու գիտակից կյանքի մը դասերը կը պարունակե: Տարոնի և ֆրանսական երաժշտական տաճարին միջև գտնվող անհուն անջրպետը կարենալ կտրելու համար այս հատկութիւններն անհրաժեշտ էին: Սրտակից բարեկամի հանգամանքս կ'արդիլե ինձ գովեստի խոսքեր ուղղել իրեն: Հառաջիկա կիրակիի իր համերգը լավագույն ներբողը պիտի ըլլա իր աստվածատուր ձայնին ու երաժշտական արվեստին մեջ ունեցած իր խորունկ ու կուռ հմտութեյան...

Շահ-Մուրատյանին տաղանդը կրկնակ պարտականութեյուն մը ստանձնեց իր ասպարեզին սկիզբեն իսկ. այն է՝ մեկ կողմե ապացուցանել Հայ ճաշակին նրբութեյունն ու ճկունութեյունն եվրոպական ամենեն բարձր ու բարդ երաժշտութեյունն ըմբռնելու, յուրացնելու և կատարելութեյամբ արտահայտելու, ու մյուս կողմե՝ ամեն առթիվ իր տաղանդն ի սպաս դնել Հայ մասնավոր երաժշտութեյունն արվեստին կատարելութեյունովը օտարին ներկայացնելու, այդ երաժշտութեյան

գերիվեր հմայքը պարտավորիչ կերպով գրեթե ընդունել տալով օտարին: Տոնական օրերուն Բարիզի Հայ եկեղեցին կը լեցվեր օտարներով, որոնք կուգային զինքը լսելու ու Հայ եկեղեցական երաժշտութիւնը ըմբռնելու: Այս երկրորդ տեսակետով, Շահ-Մուրատյան, Կոմիտաս վարդապետին հետ զուգահեռաբար, մեծ ծառայութիւն մը մատուցած է Հայ երաժշտութիւնը ու հետևաբար Հայ մշակոյթը գնահատել տալու գործին մէջ...

Բոլին Վիհատոն... մոր մը գուրգուրանքն ունեցավ միևնույն ատեն Շահ-Մուրատյանի համար: Ու երբ քանի մը տարի հետո, բարեկամիս մեկ ճամբորդութեան միջոցին, իր հանճարարութեան վրա կ'երթայի այցելել այդ մտացի ու մշտադալար հարգելի տիկնոջ, անիկա ինձ կ'ըսեր, խոսելով Շահ-Մուրատյանի մասին. «Կը գուրգուրամ իր ձայնին վրա, դրժբախտութիւն մը պիտի ըլլար անոր կորուստը, որովհետև ան բնութենեն մեզ չնորհված հմայք մ'է խանդավառութեան ու ներշնչումի մշտահոս ու չինչ ակ մը»: Կը մտաբերեմ վիշտը, զոր բարեկամս ունեցավ այս մեծհոգի ու մեծանուն ուսուցիչն ու պաշտպանը կորանցուցած օրը: Անոր նախատեսութիւննները, սակայն, իրականացած էին, ու ավանդված դասերն՝ իրենց արդյունքը տված...

Քոնսեռվաթուառ մտնելէ հետո հաջողութիւններու անընդհատ շարք մը եղան իր ամավերջի մրցումները, հարատև վերելք մը դեպի վերջնական հաղթանակը... Կ'ուզեմ Հայ երիտասարդութեան ու նոր ուսանողութեան ուշադրութիւնն հրավիրել Շահ-Մուրատյանի փայլուն ասպարեզին ամենեն դժվարին ու դժվեմ այս շրջանին վրա, երբ ան կը գտնվի բնական օրենքներուն երբեմն իսկ հակասող ու հետևաբար գրեթե անհաղթելի դժվարութիւններու առջև: Ու սակայն համառ աշխատութիւնն հարթեց զանոնք: Կը հիշեմ, թե այդ շրջանին բարեկամս դադրեցավ Հայոց եկեղեցին երգելե, որպեսզի արևելյան երաժշտութեան ոչ մեկ վերհուշում գար զինքը պղտորել երաժշտութեան արևմտյան ըմբռնումին մեջ: Կը հիշեմ, թե Հայ հասարակութենեն ատեն մը հեռու ապրելու իմաստութիւնը ու նույնիսկ պահ մը իր ամենեն մտերիմ Հայ բարեկամներն իսկ լքելու քաջութիւնն ունեցավ՝ կարենալ առանձնանալու համար ֆրանսական արտասանութեան, ֆրան-

սական մտածելակերպի ու խորհելակերպի մէջ, որոնցմով միայն պիտի հաջողեր այդ իրեն համար օտարոտի ոդին ըմբռնել ու երգի միջոցաւ արտահայտել: Իր ամբողջ կեանքին մոտեն ծանօթ, այդ բեղուն կեանքին այս չրջանն ամենեն ավելի գնահատած եմ ես: Կը փափաքեի, ուրեմն, որ ամեն Հայ անդրադառնար, թէ լոկ սիրուն ձայնի մը չի պարտիր մեր հայրենակիցն իր վերելքը դեպի երգի արվեստին ամենեն դժվար մակարդակները...

Իր տեսյուի երեկույթին հայկական մեծ ու պանծալի տոն մը եղավ Օքերայի մէջ, ուր Հայ տաղանդը կը հաղթանակեր Հայոց քաղաքական դժբախտութիւններուն վրա:

Ամենայն վստահութեամբ կրնանք, ուրեմն, հանձնել մեր այս տաղանդավոր ու արժանավոր հայրենակցին Հայ անունն ու տաղանդն օտար բոլոր բեմերուն վրա պանծացնելու դժվարին առաքելութիւնը:

ՍԱՐԳԻՍ ՍԵՐԹԼՃԱՆ

«Բյուզանդիոն», 1913, թիվ 5,194

ՇԱՀ-ՄՈՒՐԱՏՅԱՆ

Լսեցի՞ք Շահ-Մուրատյանը, եթե ոչ՝ ձեր կյանքի գեղեցկագույն հաճույքներեն մին կորսնցուցիք: Եթե Ֆրեզնոյի մէջ կա հայ մը, որ կամա ակամա այլ և այլ պատճառներով հայ ազգի արդի այս մեծագույն երգիչը լսելու առիթը կորսնցուց, կորսնցուց նաև հոգեկան հրճվանքի մը այս չքնաղ ժամանցը, զոր միայն բարին ու գեղեցիկը կրնան գնահատել: Նույնպես եթե կա տեղական գեղարվեստասեր ամերիկացի մը, որ կա՛մ հայ անունեն նախապաշարված և կա՛մ երկրորդական կամ միջին արթիսթ մը ըլլալու կասկածեն տարուբերյալ պատրվակներով վախցուց Մշո այս հայ սոխակը լսելու առիթը, այսու ցույց տվավ, թե գեղարվեստական իր ճաշակը և կրթությունը տակավին հասած չէ իր բարձր մակարդակին: Որովհետև Շահ-Մուրատյանը լսող տեղացի ամերիկացիք կը վկայեն, թե աշխարհի լավագույն երգիչներեն մին լսելու բարեպատեհ առիթը վայելած են:

Այո, երբեք չափազանցած չենք ըլլար, երբ «աշխարհի լավագույն երգիչներեն մին» կոչենք զայն, որովհետև Փարիզի Քոնսերվաթուարեն հաջողագույն քննություն մը անցընելով առաջին մրցանակին արժանանալ և ուրիշ այլևայլ դժվարին օբերաններու մեջ փրանսական և այլ եվրոպական խստապահանջ համայնքներու առաջ ծափահարություններ խլել չատ դժվարին բան մըն է, զոր միայն կրնան շահիլ Մելպաններ, Սենտրըսըններ և Քարուսոներ, դժվարին նամանավանդ հայ օտարականի մը համար, որ պարտի մաքառիլ այլևայլ խոչընդոտներու հանդեպ: Շահ-Մուրատյան իր բնական տաղանդովը և անխոնջ աշխատությամբը հաջողած է արժանավորապես շահիլ այս մեծ տիտղոսը, և հաղթության այս դափնին այնչափ կը պատկանի իր անձին, որչափ ընդհանուր հայությանն:

Եթե ցավալի կետ մը կա, այն ալ սա՛ է, թե Ֆրեզնո քաղաքը այս տեսակ բարձր ներկայացուցիչ մը՝ ձայնական գեղարվեստի՝ արժանավորապես գնահատելու անկարող է:

Շահ-Մուրատյան անցյալ կիրակի, կեսօրեն վերջ, Հուայթ թատրոնին մեջ համախմբված հայ թե օտար երկսեռ բազմության մը առաջ, ցույց տվավ, թե ինքը նախ ամեն բանե առաջ բառին բուն նշանակությամբ ձայնական գեղարվեստի արթիթ մըն է, որու նմանը չատ հազվադիպորեն խաղաղականի ափունքը ոտնակոխած է: Եվ հետո ցույց տվավ, թե իր հոգին ու ամբողջ էությունը հայ է և հայ պիտի մնա: Սեն-Սենի «Զանգակ»ը և Պերկմենի «Հնդկական երգ»ը երկուքն ալ բավական դժվարին կտորներ էին, կատարյալ կարող երգչի մը ջիղերը փորձաքարի մը ենթարկելու աստիճան...

Շահ-Մուրատյանի վրա ակներև այս առավելությունները պիտի կրնան ընել զինքը Եվրոպիո և Ամերիկայի ձայնական գեղարվեստի աշխարհի մեջ անստգյուտ տիպարներեն մին, որո ներկայությունը ոևէ գեղարվեստասեր համայնքի մը կողմե արժանավորապես պիտի կրնա գնահատվիլ:

Բայց Շահ-Մուրատյան ա՛լ ավելի հրապուրիչ և քարշողական կը դառնա, երբ իր խեղճուկ ազգի բարձրաթռիչ քայլերգերը և մեղվանույշ սիրերգերը կը ձայնե: Ֆրեզնոյի հայը երբեք չի պիտի մոռնա անոր «Հայաստան» ու «Հայրպան»ը, կարծես Մշո քաջակորով մի աղեղնավորն է, որ կուրծքի հևի-

հև մակընթացութեամբ մը հսկա չեչտերով մեզ հայտնել կ'ուզե, թե Հայաստան տակավին կ'ապրի, թեև արյունած, խողխողված, ջլատված: Անցյալ կիրակի Հուսյե թատրոնին մեջ հավաքված հայ թե օտար ունկնդիրք հաճոյալիր հիշողութեամբ մը չպիտի մոռնան այն ժամերը, զորս վայելեցին ի շնորհս Շահ-Մուրատյանի:

«Հապրպան»՝ գյուղական այդ պարզ հովվական սիրերգը, ինքնին սիրային բանաստեղծութեյուն մը, դրդեց բոլորի սրտերը՝ հուզելով գյուղացվուչն զգացմանց նրբագուչն թելերը: Շատ աչքեր թրջեցան և սրտեր հուզվեցան, երբ վերջին չեշտով ձայնեց Շահ-Մուրատյան «Հապրպան»ի նոթերեն: Երբ հասավ այս վայրկյանը, որ ատեն մ'ալ հայ արթիսթը իր վերջին նոթը պիտի հնչեր, ո՞վ ուզեց արդյոք ձգել իր աթոռը և զրկվիլ այդ չնաչխարհիկ ձայնական փարթամ խնջույքեն:

Հիացու՜մ, սքանչացու՜մ և տեսակ մը ազգային բարի հըպարտութեյուն մը՝ միացած ներքին հոգեկան հափշտակութեյան. ահա այս զգացմամբ էր, որ կը ձգեր ամեն հայ թատրոնի սրահը, երբ ալ ևս Շահ-Մուրատյան բեմին վրա չի պիտի երեվար:

Անցյալ կիրակի օտարը զգաց, թե հայը միայն արյունիլ, ընդվզիլ և տոկալ չէ, որ գիտե, այլ հայը կրնա նաև երգել և սիրտ ու հոգի ցնցել ու թունդ հանել: Հայը գիտե, թե Մշո լեռն ու հովիտ քաջակորով հայրենասերներ արտադրած էր, բայց այսօր գիտցավ, թե Մուշ երգիչներ ալ կրնա արտադրել, Շահ-Մուրատյաններ, որոնք մինչև եվրոպյան մայրաքաղաքներու բեմերուն ելեկտրական ջահերուն առաջ կրնան փայլիլ, որոնք Տարոնի ձորերեն մինչև Շանզ Էլիզեի լուսավառ հրապարակները ու պողոտաները սավառնելով՝ Բարիզյան ձայնական Հերքյուլեսներուն հետ ի միասին մրցանակները ձեռք ձգել:

Բայց Շահ-Մուրատյան մեզ կը հարցներ. «Միթե երգելն ալ կռիվ չէ՞»: Այո՛, ազնիվ հայրենակի՛ց, երգելն ալ կռիվ մըն է, զգայական, հոգեցունց կռիվ մը, ուր մարդ պահ մը խելակորույս, նյութական աշխարհս հետս ձգած, Բարվույն և Գեղեցիկին հավերժահարսանց պահապան կռվող զինվորն ըլլալ կը բաղձա...

Երեք մասնավոր կետեր կան նշմարելի, որոնք մեր սիրելի հայրենակիցը կրնան հավասարցնել աշխարհի ուրիշ երևելի երգիչներու պատվույն, որոնցմեն միայն քիչերու վրա կըրնանք նշմարել այս առավելութիւնները:

Առաջին. Շահ-Մուրատյան բնական դյուրաթեքութիւյամբ մը, առանց անբնական ճիգերու, կրնա բարձրանալ, մարդկային ձայնի կարողութեյան սահմանին մեջ, խաղի մը նոթերուն բարձրագույն զենիթը և ընդհանուր ունկնդրութեյան վրա պակուցիչ սքանչացում մը առթել, որչափ դյուրութիւյամբ իջնալ ձայնի ամենեն ստորին աստիճանները հազիվ թե լսելի, որ սակայն կարելի է լսելի ըլլալ նույնիսկ ընդարձակ թատրոնի մը մեջ՝ առանց խռպոտ կամ կոչտ չեշտերու ազդեցութեյան: Անիկա նույնչափ դյուրաթեք սահունութեյամբ կրնա երգել ֆրանսական երգ մը, որչափ հայերեն՝ խառնելով Արևմտյանը Արևելյանին հետ և այդպես արտադրելով եղանակ մը, որ կը դրդե զգայուն սրտերու խորագույն թելերը:

Երկրորդ. Շահ-Մուրատյան իր ձայնը արտադրելու համար երբեք դժվար ու անբնական միջոցներու և չանքերու չի դիմեր: Իր ձայնի բնական ճոխութեյունը և ձայնի արվեստին բարձր մշակութեյունը կարող կ'ընեն Տարոնի այս քաղցրալուր թռչունը կառավարել ձայնի դժվարին ելևէջները հանգիստ և բնական դյուրութեյամբ մը, առանց արտաքո կարգի ճիգերու օգնութեյան: Շահ-Մուրատյանի կուրծքն ու թոքերը կարծես հատակ, վճիտ ձայնական չեշտերու հրաբուխ մըն են, որոնք ալեծածան կոհակներու նման կուրծքն ու թոքը պատռելով՝ դուրս կը սլանան և կորովալիր կը բարձրանան նոթերու բարձրագույն աստիճանը և հետո մեղմորեն սոխակի մը ախորժալուր դայլայլին կը խոնարհին մեղվանույշ, հուզիչ մըրմունջներով, որոնց առաջ ունկնդիրը կը զարմանա, թե ձայնական վիթխարի չահի մը առաջ իր աչքերը կը խտղտի՞ն, թե չէ Եղյուսյան դաշտի մը քաղցրաձայն սոխակի մը զեղգեղումեն իր հոգին ու սիրտը, նրբագույն զգացմանց ազդեցութեյան ներքև, հոգեկան հրճվանքով մը կը դողդղան:

Երրորդ. Չի կրցինք նշմարել հայ արվեստին վրա այն բրնաղբոսիկ չարժուձևները, դրոս կը որդեգրեն կարգ մը թատրոնի արվեստներ: Շահ-Մուրատյան բեմի այնպիսի բնական

պատրաստականություն մը ունի, որ իսկույն իր ունկնդիրները կը հայտնե, թե ինք այնչափ լավ երգիչ մըն է, որչափ դերասան մը: Անոր վրա անբնական չարժուձևեր չենք տեսներ: Անսեթևեթ չարժումներով, բնական դիրքով մը կ'երգե իր երգը՝ իր ամբողջ հոգին, սիրտն ու զգացումն թրծելով իր նոթերուն մեջ: Անիկա միայն չերգեր, այլ կ'զգա, իր երգին հետ կ'ապրի, իր ունկնդիրներուն հոգին ու սիրտը կը հուզե, կը հափշտակե և կոհակի մը նման կը գլորե...

Շահ-Մուրատյան բաղդատաբար մեզ եկած է իբր անծանոթ մը, բայց այսօր կը մեկնի ամեն ֆրեզնոցի հայուն սրտին ու հոգվույն մոտ իբր անկեղծ բարեկամ՝ թողլով անոր հիշողության մեջ համակրելի անձնավորության մը ազնվագույն տպավորություն մը և մեծ երգչի մը անմոռանալի համբավը: Լիահույս ենք, թե ամերիկահայ ամեն հայ գաղութ արժանավորապես պիտի հյուրընկալե մեծ երգիչը՝ ընձեռելով անոր ամեն միջոց իր ճյուղին հաջողության և գնահատման թե՛ օտարաց և թե՛ հայ հասարակության առջև:

Սրտալիր հաջողություն և ողջերթ կը մաղթենք իրեն՝ վրաստահեցնելով զինքը, թե ֆրեզնոցի և քալիֆորնիացի հայը երբեք չի պիտի մոռնա Շահ-Մուրատյան անունը:

ԵՐՎԱՆԴՈՒՆԻ

«Ասպարեզ», Ֆրեզնո, 1919, թիվ 388

ԱՐՄԵՆԱԿ ՇԱՀ-ՄՈՒՐԱՏՅԱՆ
(Տարոնի Սոխակը)

Սոխակ մըն ալ լռեց հայկական դարաստանեն: Կոմիտասեն վերջ իր արվեստի ընկերին ձայնով կը մխիթարվեինք, ասկե ետք այդ ալ չկա:

Աշխարհի բոլոր հայ գաղութները անոր ձայնեն հմայված, իրենք զիրենք Տարոնի մեջ կը զգային. իսկ այժմ անոր ձայնը լոկ պիտի հնչե ձայնագրի սկավառակներեն «Հայաստան, երկիր դրախտավայր»ով, «Անտունի»ով, «Արոր Տատրակ»ով, «Սիրուհի»ով: Մինչ անդին անոր կենդանի դիմագիծը օրե օր պիտի աղոտանա, պիտի նվազի և օր մը պիտի անհայտանա:

Հիշատակը միայն պիտի չարունակե տոկալ հայ ազգի ճակատագրին ամեն ելևէջներուն ընդմեջեն և անմահ պիտի մնա առհավետ:

Հուսով ենք, թե աշխարհի ամեն անկյուն ցրված մշտակայտառ ու կենսունակ հայ ընտանիքները իրենց ցեղին հատուկ հանկարծաբանութեամբ պիտի ծնանին ոչ թե մեկ, այլ հազար Շահ-Մուրատյաններ:

Ինք ծաղիկե ծաղիկ թռչող սոխակին նման գաղութե գաղութ քալեց և իր տարօնցիի ամուր կուրծքով ու գավառացիի բոցավառ սրտով երգեց, հուզեց և սքանչացուց զամենքը: Ամերիկան մանավանդ բախտավոր եղավ երկարօրեն ունկնդրելու զինքը...

Եկող գարնան մեր Տարոնի Սոխակը պիտի չվերադառնա, և Հայութեյան գարունը հետզհետե կը չքանա, որովհետև ժամանակը, այլասերումը և կյանքի պայքարը, և ատոնց վրա ավելցնենք պատերազմը, կը խլեն մեզմե ազգային գեղեցկութեյունները մեր հին ու նոր սերունդին:

Հ. ԱՎԵՏԻՔ ՇՈՎՁԱՆ

«Բազմավեպ», Վենետիկ, 1939, թիվ 11-12

Ի ՀԱՐԳԱՆՍ ՀԱՅ ՄԵԾ ԵՐԳԻՉԻՆ

Իբրև երգի ու երաժշտութեյան սիրահար, տարիներ առաջ, Սեբաստիա գտնված պահուս, հիացումով լսած էի հայ մեծ երգիչին՝ Արմենակ Շահ-Մուրատյանի ունեցած տաղանդին ու կարողութեյան մասին:

Տարիներ վերջ, բաղդի և պատահականութեյան բերմունքով, Ամերիկայի մեջ, մասնավորապես Նյու Յորք և Շիկագո, շատ անգամ, երջանիկ պատեհութեյունը ունեցա ո՛չ միայն անոր հետ դեմ առ դեմ գտնվելու ու խոսելու, այլ անոր անման ավյունով, կյանքով ու կենսունակութեյամբ լեցուն, անու՛յշ, դյութող ձայնը, երգը լսելու ու հիբնոթանալու:

Հայ երգը, ի մասնավորի, անոր չրթներուն վրա այնքա՛ն խոսուն, այնքա՛ն արտահայտիչ, այնքա՛ն տպավորիչ և սրտի ու հոգեկան բոլոր լարերը թրտնդ հանող, թրթռացնող հանդա-

մանք մը ուներ, որ չէր կարելի զայն լսել, և բռնկող հիշատակներով դեմ դեմի չգալ հայրենի երկնասլաց բարձունքներուն, սարերու և բլուրներու անվերջ շարքերուն, հորդառատ ու արագավազ գետերուն, գլգլացող, դղրդող առուներուն ու առվակներուն, ականակիտ ակերուն ու աղբյուրներուն, արևաշեն դաշտերուն ու արոտներուն, խորհրդավոր վանքերուն ու մատուռներուն, բոլոր քաղաքներուն, դյուղերուն ու ավաններուն մեջ, դարերով իր գոյության պայքարը մղող ժողովուրդի մը արևոտ ու ամպոտ օրերուն, ուրախության ու տրտմության, հույսի ու հուսախաբության, վայելքի ու զրկանքի ժամերուն, ունեցած կյանքի բոլո՛ր ելևէջներուն մեկ խոսքով:

Շահ-Մուրատյանը ու՛ր որ երգեր, այնքա՛ն մեծ տպավորություն կը թողուր և այնքա՛ն մեծ խանդավառություն կ'առաջացներ, որ միշտ անմոռանալի հիշատակ մը կը ձգեր:

Եվ այսօր, երբ ան անդառնալի կերպով կը հեռանա մեզմե, կ'արժե մեկ-երկու վերհիշում անոր ունեցած փառքի մասունքներեն:

Անցնող Համաշխարհային պատերազմին, Նյու Յորքի Արմինիը էնտ Սիրիըն Քըմիթիի նախաձեռնությամբ, ի նպաստ տարագրության ահավոր զոհերուն, մեծ ձեռնարկ մը տեղի պիտի ունենար Հիփոտրոմ կոչված ամենաընդարձակ թատերասրահներեն միուլն մեջ:

Այդ օրերուն, քանի որ ձեռնարկը տեղի կ'ունենար նաև հանուն Հայերուն, Նյու Յորքի Հայ Ազգային Միության մասնաճյուղը առաջարկ կը բերեր, որ հայտագրին մեջ ղրվեր նաև Ա. Շահ-Մուրատյանի անունը:

Ինչ-ինչ դիտումներով այդ առաջարկը սկիզբեն մերժվեցավ, բայց հետո ծանր ատիպողականության տակ տեղի տրվեցավ, և ձեռնարկին օրը հայ մեծ երգիչը այնպիսի հաղթանակով մը դուրս եկավ, որ, թերևս ամրթապարտ մնացին և կամ նախանձեն ինքզինքնին կրծեցին արգիլել փորձողները, որոնց մեջ չենք կարծեր, որ ոևէ հայ բաժին ուներ:

Այդ օրը Հիփոտրոմը վեր վար հազարավորներու բազմությամբ այնպես լեցված էր, որ ասեղ ձգելու տեղ չկար:

Այդ վիթխարի ձեռնարկը կը ղեկավարեր հրեա հանրածանոթ ճարտասան Րապպի Վայզ:

Գեղարվեստական հայտագրին մեջ իր բաժինը կը բերեր ամերիկյան առաջնակարգ երգչախումբ մը գրեթե ուր հարյուր հոգիե բաղկացած:

Ի միջի այլոց, հրավիրված էր խոսելու պելճիգացի Քարտինալ մը, որ հայ և պելճ ժողովուրդներու կրած բարբարոսային հարվածներու չուրջ մաքնիսացնող բանախոսություն մը կ'ըներ, հույս և երկաթե հավատք ներշնչելով միանգամայն:

Եվ ամենեն վերջը, հայ և օտար հսկա բազմության ի տես, հրավեր կը տրվեր Արմենակ Շահ-Մուրատյանին:

Ոմանց կողմե չատ անգամ դիտողություն կ'ըլլար, թե մեր մեծ երգիչը բեմի վրա տիրական կեցվածք ու շարժվածք չուներ:

Այդ օրն ալ, ստուգիվ, ան առաջացավ տեսակ մը տատամսոտ քայլերով դեպի բեմը:

Բայց, կա պարագա մը, որ մոռացության պետք չէ տանք:

Կրնա մեկը հաղթական քայլվածքով առաջանալ բեմը և հուսախաբության մատնել ունկնդիր հասարակությունը:

Կրնա ուրիշ մըն ալ թույլ, անհամարձակ երևիլ սկիզբեն և հետո բուռն հաղթանակով մը անակնկալի բերել ու մեկ անգամով կապել, չղթայել բոլոր սրտերն ու հոգիները իրեն:

Հայ մեծ երգիչը այս տեսակեն էր:

Եվ ահա ան սկսավ երգել «Հայաստան, երկիր դրախտավայր»ը:

Շատ անգամ լսած էի զայն, բայց այդ օրը Արմենակը ինքզինքը կը գերազանցեր:

Անոր չրթներուն վրա հայ երգը իր գեղեցկությամբ, իր հարազատությամբ, իր ներշնչումով ու վսեմությամբ կը գոռար Ամերիկայի բեմեն դղրդիչ կերպով:

Թույլ Արմենակը առյուծ մըն էր, փոթորիկի ուժգնությամբ առաջ նետվող մեկը այլևս, որ կը հիշեցներ արյան ու տառապանքի ծովերեն դուրս նետվող Հայության ճշմարիտ պատկերը, որ բոլոր վհատեցուցիչ երևույթներուն մեջեն մեկեն իր քաջության, մեծության, պողպատե հավատքի ու հաղթանակի կուրծքը ցույց կուտար:

Ջեր կարելի չհուզվիլ, չբռնկիլ:

Եվ երգը հազիվ լրացած՝ տասնեն տասնևհինգ վայրկյան անընդհատ կը ծափահարվեր:

Ունկնդիրներու բուռն պահանջքին իբր պատասխան, այս անգամ ան կ'երգեր «Մարսելյեզ»ը նուչնքան ներչնչիչ ու հաղթական կերպով:

Վերջին անգամ մեծ երգիչը լսեցի Շիկագոյի աչխարհահռչակ ռեսթորանին մեջ: Երեկի Շահ-Մուրատը չէր ան, խամրիլ սկսեր էր, բայց երբ առաջացավ բեմը, դարճյալ ամենաբուռն ծափերու ու գնահատանքի արժանացավ բոլորեն:

Այսօր չկա ան, բայց անոր «Հայաստան»ը, «Ալագյազ»ը, «Քելե քելե»ն, «Խնծորի ծառի տակին»ը, «Քրիստոս Պատարագեալ»ը, «Բամ Փորոտանը» պիտի լսենք միշտ անցյալի խորերեն ու միշտ փոթորկվինք քանի կանք ու կ'ապրինք:

ՎԱՀԱՆ ՋՈՒԳԱՍԸՉԱՆ

«Երիտասարդ Հայաստան», Փարամուս, 1939, նոյեմբեր 8

ԱՐՄԵՆԱԿ ՇԱՀ-ՄՈՒՐԱՏՅԱՆԻ

մահը, զոր իմացա քիչ օր առաջ, ազատում մը եղավ անոր համար այն տառապագին վիճակեն, ուր ավելի քան հինգ տարիե ի վեր, ծանր հիվանդության մը հետևանքով, անիկա իր երբեմնի էության մեկ ուրվականն է որ կը քաշկռտեր:

Ես զայն ճանչցած և սիրած եմ առաջին օրեն իսկ, ուր եկավ Փարիզ: Իրիկուն մը, ուր փարիզահայ խմբակցության մը գրական ու գեղարվեստական մեկ հավաքույթին Մկրտիչ Պեչիկճաշլյանի վրա բանախոսություն մը պիտի ընեի, էտկար Շահինը, որ քովս էր, և ես տեսանք կարմիր, լեցուն երեսնեռով գիրուկ երիտասարդ մը (հետո ավելի առնական, բայց ավելի նիհար, տժգույն ու ջղուտ դեմք մը առավ), որ եկավ ինքզինքն ինծի ներկայացնել. «անունս Շահ-Մուրատյան է, ըսավ: – Մչեցի եմ, երգիչ եմ, եկեր եմ արվեստիս մեջ կատարելագործվելու. կ'ուզե՞ք որ այս իրիկուն երգ մը երգեմ»: Զայնը նուչնիսկ պարզ խոսակցության մեջ անուշ թեմպր մը ուներ: Սիրով հավանեցանք: Երեկույթի ընթացքին ան երգեց «Հայաստան, երկիր դրախտավայրը»: Իր երգեցողությունը, որ լի էր կրակով, ճաշակի պակասներ կը հայտներ դեռ. բայց ի՜նչ ձայն: Այդ հոյակապ թենորի ձայնը զմայլանքով ծափա-

հարվեցավ ամենքեն: Զգացինք, որ ապագա մեծ երդիչ մը կար այդ նորեկին մեջ:

Զինքը ներկայացուցի Օրիորդ Մարգարիտ Բաբայանին, որ եվրոպական երաժշտութեյան ուսման անոր առաջին վարպետը եղավ: Հետո ան մտավ Սքոլա Քանթորում, որուն տնօրենն էր այն ատեն Վենսան տ'Էնտի, ու հուսկ ապա հաջողեցավ ընդունվիլ Փարիզի Ազգային Քոնսերվաթուարը իբրև ուսանող. իր հրաշալի ձայնով և իր աչխատասիրութեյամբ անիկա համակրութեյունը գրաված էր նաև ծերունի տիկին Վիարտոյին, որ ատենով աչխարհի ամենեն մեծահռչակ երգչուհիներեն մեկը եղած էր և ան ալ իրեն մասնավոր դասեր կուտար առանց ոևէ վճարման: Քանի մը տարի հետո, Շահ-Մուրատյան Հիմնավարտ կ'ելլեր Քոնսերվաթուարեն՝ օփերայի առաջին մրցանակ և երգեցողութեյան երկրորդ մրցանակ ստանալով, կը մտներ Մեծ-Օփերան, ուր իր սկզբնավորութեյունը կ'ըներ Կունոյի գլուխգործոցին մեջ՝ երգելով Ֆաուստի դերը:

Կամքի ուժը, աչխատասիրութեյունը, յուրացման կարողութեյունը, զոր ուսանողական տարիներու ընթացքին ցույց տրվավ այդ հայ երիտասարդը, որ Փարիզ եկած ատեն բառ մը ֆրանսերեն չէր գիտեր ու եվրոպական երաժշտութեյան մասին ալ հարևանցի ծանոթութեյուն մը միայն ուներ, սքանչելի էին իրապես և հայ ցեղին պատվաբեր: Պետք է ըսել, որ եթե սկիզբները ունեցավ չըջան մը, ուր նեղ միջոցներով – Փարիզի Հայոց եկեղեցվույն իբր դպրապետ ստացած համեստ ամսականով միայն, – ծայրը ծայրին բերել ստիպված էր, իր ուսանողական կյանքին վերջին տարիներուն ան՝ իմ խնդրանքովս՝ լայն օգնութեյունը վայելեց Աթանիկ Էգնայանի, Աղեքսանդր Մանթաչյանի և Ներսես Խան Ներսեսյանի պես մեծատուն Հայերու. ատկից զատ, իբր դպրապետ Փարիզի Հայոց եկեղեցվույն, ուր իր ձայնը և երգեցողութեյունը հրճվանք մըն էին ունկնդիր հասարակութեյան համար, ան կը չարունակեր ստանալ իր ամսականը, որով ունեցավ երջանիկ ուսանողութեյուն մը, որուն արժանի էր լիովին, բայց որուն նմանը քիչ աղքատ երիտասարդ կրցած է ունենալ:

Անիկա արդարացուց իր վրա դրված հույսերը՝ փայլուն կերպով ավարտելով Քոնսերվաթուարի ընթացքը և Մեծ-Օփե-

բայի տիեզերահռչակ բեմին վրա, ուր ոչ մեկ Հայ դեռ երգած էր, չորս անգամ երգեց Ցաուսթի դերը: Կը հիշեմ իր սկզբնավորության իրիկունը: Փարիզի հայ գաղութը – այն ատեն շատ նվազ բազմաթիվ, քան այժմ – մեծ մասամբ հոն էր: Շահ-Մուրատյան պատվով ելավ այդ դժվար սկզբնավորության տակեն. ձայնը զմայլելի էր, երգեցողությունը, ինչ-ինչ կտորներու մեջ՝ հմայիչ, այլ մասերուն մեջ՝ վայելուչ, խղճամիտ, դեռ հղկվելու կարոտ, բայց արդեն իսկ ներկայանալի. խաղացվածքը սկսնակային էր դեռ, բայց ի հայտ կը բերեր երկար ու համբերատար աշխատանք ու ապագա լավագույն դերասանուհության մը հույսերը կը ներշնչեր: Հասարակությունը ջերմորեն ծափահարեց զինքը: Ներկա հայերը ուրախ էին և հպարտ: Փարիզյան մամուլը, որ անոր Քոնսերվաթուարի մրցմանց մեջ ունեցած հաջողության առթիվ արդեն գովեստով խոսած էր իր մասին, խորին համակրությամբ ողջունեց այդ գործեղ ձայնով ու քաղցր երգեցողությամբ նորեկ հայ արվեստագետը («Անահիտի»ի մեջ այն ատեն հրատարակած եմ երկու պարագային ալ փարիզյան մամուլին մեջ երևցած հոդվածներուն թարգմանությունը): Երբ ներկայացումեն ետքը զինքը տարինք ճաշարան մը՝ բաժակ մը գինիով իր հաջողությունը տոնախմբելու, մեզի ըսավ. «Երբ առաջին րոպեին ոտքս դրի բեմին վրա, դտնելով գիս այդ մեծատարած չքեղ սրահը լեցընող խուռն բազմության առջև, հուզմունքի պահ մը ունեցա. բայց մտքես մեր Մշո Սուրբ Կարապետը օգնության կանչեցի և Մշեցվոց պես իր անունն ալ արտասանելով Սըրբը Կարապի (Մշեցվոց Կարապետ հնչումն է, ետ-ը սղված) և իսկույն գտա պաղարյունություն, զոր պահեցի մինչև վերջը, այն աստիճան, որ սրահին մեջ որոշ կը տեսնեի ինծի ծանոթ հայ դեմքերը»:

Շահ-Մուրատյան կրնար մնալ Փարիզի Մեծ-Օփերային մեջ, հետզհետե ավելի կատարելագործել իր երգեցողական արվեստը, ճոխացնել իր խաղացանկը, դառնալ հայ Քարուզո մը: Զհաջողեցավ ատիկա ընել, որովհետև անխելք բարեկամներ զինքը շփացուցին շողոքորթ ծայրահեղ գովեստներով, իրեն այնպես կարծել տվին, թե այլևս երգի արվեստին մեջ սորվելիք չուներ. անոնցմե մեկն էր Պ. Փաթաբան (որ հետո

անձնասպան եղավ չեմ հիշեր ինչ պատճառով)։ Ֆաուստի ներկայացումեն քանի մը շաբաթ ետքը, օր մը Շահ-Մուրատյանին ու Փաթաբանին հետ կը նախաճաշեի Ծոլի Պերժերի մոտ ճաշարանի մը մեջ. Փաթաբան նորեն սկսավ չափազանցյալ ներքողներու լիճանիան. Շահ-Մուրատյան բերանը բացավ և ըսավ սա տարօրինակ խոսքը, զոր բառ առ բառ կը հիշեմ. «Մեծ-Օփերային մեջ չկա երգիչ մը, որ ինձմե ավելի գեղեցիկ ձայն ունենա (ասիկա ճիշդ էր) և ինձմե ավելի լավ երգե (ասիկա ճիշդ չէր). դերասանական արվեստի և ֆրանսերենի արտասանության մեջ դեռ ունիմ կատարելագործվելու պետք, բայց երգեցողության արվեստին մեջ այլևս սորվելիք չունիմ»։ Արվեստի, ինչպես և գրականության ու գիտության մեջ, մարդ մինչև իր մահը սորվելիք ունի, և ան որ կը կարծե, թե գերագույն կատարելության հասած է, իր իսկական կատարելագործումը իր ձեռքովը կ'արգիլե։ Շահ-Մուրատյան չէր նկատած, որ Ֆաուստի մեջ իր սկզբնավորության առթիվ փարիզյան մամուլին մեջ երևցած հոդվածները եթե տոգորված էին ջերմ համակրությամբ, վերապահումներ ու խրատներ ալ կը պարունակեին, ինչպես, օրինակի համար, սա տողերը «Քոմետիա»ին, որ թատերական արվեստով միայն զբաղող մասնագիտական օրաթերթ մըն էր. «Երեկ իրիկուն Պ. Շահ-Մուրատյան կ'երևար առաջին անգամ Օփերան՝ Ֆաուստի դերին մեջ։ Անշուշտ շատ փորձառություն կարելի չէ պահանջել այս երիտասարդ թենորեն, որ թեպետ լուրջ ուսումնասիրություններ ըրած կը թվի, սկսնակ մըն է՝ բառին ամբողջ նշանակությամբ։ Սակայն հաջողեցավ շատ պաղարյունությամբ զսպել իր հուզումը և գնահատել տալ այն շատ իրական հատկություններըը, որոնց շնորհիվ Քոնսերվաթուարին մեջ առաջին մրցանակ մը ստացավ։ Այդ հատկությունները պիտի ընդլայնին հետզհետե, երբ ինքնավստահությունն ու արվեստի քաջավարժությունը ձեռք ձգե ավելի մեծ չափով։ Վարժվելով Օփերայի սրահին, հետզհետե հարկ եղած տարողությունը պիտի տա իր երանգներուն, և անշուշտ գինքը չրջապատող պատվական խորհրդատուներուն մեջ պիտի գտնվին իրեն ըսողներ, որ նվազ թուլլ գնացքով մը երգե։ Բայց սա անտարակուսելի է, որ իր ձայնը շատ սիրուն թեմպր մը ունի, շատ

համակրելի գույն մը, և օտարականի թեթև հնչում մը, զոր պահած է, չի վնասեր իրեն, ընդհակառակն, և թե չատ մը կը տորներու մեջ ամենալավ ճաշակի մը ապացույցներ տվավ: Հասարակութիւնը զինքն ընդունեցավ չատ բարյացակամութիւնով և ամենեն խրախուսիչ հաջողութիւնը չնորհեց իրեն»: Մտածումս անկեղծորեն ըսի իրեն. չախորժեցավ, և մեր հարաբերութիւնները այնուհետև ատեն մը ցրտեցան: Բայց անոր այդ «ինքնարբեցութիւնը» չուշացավ իր վնասաբեր հետևանքները երևան հանել: Ծաուսթի երրորդ ու չորրորդ ներկայացմանց, Շահ-Մուրատյան քանի մը տեսարաններու մեջ երգեցողութեան սայթաքումներ ունեցած էր և Մարկրիթի դերը կատարող երգչուհին դժգոհ մնացած ու գանգատած էր: Ատոնք ամեն սկսնակի կրնան պատահիլ, և պատճառ մը չէին կրնար ըլլալ, որ հեռանար Օփերային, եթե չանք ցույց տար իր երաժշտական հմտութիւնը զորացնելու: Ծաուսթեն հետո, Օփերային տնօրենութիւնը իրեն առաջարկել էր ուրիշ երգախաղի մը մեջ երկրորդական դեր մը ստանձնել և անոր համար պատրաստվիլ: Շահ-Մուրատյան պետք էր կառչած մնար այդ մեծ Տան, ուր դեռ չատ սորվելիք ուներ, ուր մնալով և իր մտավոր ու երաժշտական զարգացման համար չարաչար աշխատիլ չարունակելով է – ինչպես ըրած էր իր ուսանողական շրջանին – որ պիտի կարենար հասնիլ ավելի մեծ բարձունքներու: Պետք էր ընդունել երկրորդական դերերն ալ, որ իրեն առաջարկված էին, հետո նորեն առաջնակարգ դերեր իրեն տրվելուն ապահովութիւնն ունենալով (ամենամեծ արվեստագետներ, Օփերային կամ Քոմետի Ֆրանսեզին մեջ, մերթ երկրորդական դերեր կը ստանձնեն և անոնց մեջ ալ իրենց տաղանդը ցույց կուտան): Շահ-Մուրատյան մերժած էր իրեն առաջարկված երկրորդական դերը սորվիլ, ինչ որ իբր արդյունք ունեցավ իր Օփերային հեռացումը, և անկից հետո ա-նիկա ոևէ ուրիշ երգախաղ չսորվեցավ, ոևէ ուրիշ երաժշտական թատրոնի մեջ չհրավիրվեցավ երգելու, չեղավ ինչ որ պիտի ըլլար, եթե իր առաջին հաջողութիւնները զինքը մոլորեցուցած չըլլային, ինչ որ եղավ ուրիշ հայ երիտասարդ մը Արման Թոքաթյան, որ Միլանի Քոնսերվաթուարեն հաջողութեամբ շրջանավարտ եղավ և Սքալային մեջ իր սկզբնավո-

րութիւնը փայլուն կերպով ընդլե հետո՝ շարունակեց աշխատիլ, զարգանալ, և եղաւ օպերայի մեծանուն երգիչ մը, որ Նյու Յորքի Մեթրոփոլիթըն թատրոնին մեջ, ինչպես և նույնիսկ Վիեննայի և Փրակայի դժվարահաճ հասարակութեան մոտ ամենաջերմ ընդունելութիւն գտաւ բազմաթիւ երգախաղերու մեջ՝ իր իբր երգիչ և իբր դերասան ցույց տված տաղանդով:

Բայց ատով, ինչ որ Շահ-Մուրատյան իբր եվրոպական երաժշտութեյան երգիչ կորսնցուց, հայ երգը չահեցավ: Շահ-Մուրատյան ինքզինքը նվիրեց այլևս հայ երգին, որուն, կոմիտաս վարդապետեն հետո և անոր կողքին, ամենեն դյուրթիչ թարգմանն ու ամենեն բազմարդյուն տարածիչը եղավ ամբողջ աշխարհին մեջ:

Հայ եկեղեցական երգեցողութիւնը ան արդեն Թիֆլիս, Ներսեսյան դպրոցին մեջ սորված էր ուրիշ հայ մեծ վարպետե մը՝ Եկմալյանեն. ժողովրդական երգեր ալ սորված էր այս կամ այն երգիչեն, բայց բուն հայ երաժշտական ոճը անիկա սորվեցավ Կոմիտաս վարդապետեն, որուն աշակերտեց Փարիզի մեջ և որուն եղավ անշուշտ լավագույն աշակերտը:

Կոմիտաս վարդապետ ոչ միայն իբր հայ երաժշտութեյան ուսումնասիրող, այլև իբր երգիչ անզուգական էր, բայց չուներ Շահ-Մուրատյանի սքանչելի թեմպո-ով թենորի միանգամայն քաղցր ու հզոր ձայնը. ուներ պառիթոնի թավ, մեղմ, ճկուն ձայն մը, որ առենով ավելի չինչ եղած ըլլալու էր, բայց որ ծայրահեղորեն գործածված ըլլալով՝ թե՛ եկեղեցական արարողութեյանց և թե՛ ուսուցչական գործունեութեյան մեջ, քիչ մը մաշած ու խռպոտած էր: Երբեմն եվրոպական օպերայի պես կ'երգեր մեր եկեղեցական երգերը, նոթերը ճիշդ հայկական ոճով, բայց երգված՝ թատերական, քիչ մը ուռուցիկ, ձայնը ավելի մեծագոռ ու միանգամայն երկարաձգվող, քան մեղմ ու ելևէջավոր. իր երգի լավագույն վայրկյանները չէին ատոնք: Աննման էր ան, երբ կ'երգեր զուտ արևելքցիի, հարազատ Հայու նման, ինչպես ձայնեղ գյուղացի մը կամ հայատոնցի վարպետ երգիչ քահանա մը, ավելի ալ լավ քան ատոնք, որովհետև ինք այդ տոհմիկ ոճին ավելի գիտակցորեն ծանոթ էր և կ'երգեր ավելի ուղիղ, ավելի կատարյալ, ավելի

ալ հղկված: Զայնի վերասլաց կամ նվաղկոտ ելևէջներուն նուրբ կիրարկումը, կոկորդային խաղերուն բնորոշ մոդուլյունը իր մեջ կը հասնեին հայեցի գեղեցկութեան մը գագաթնակէտին: Ան խորապես կը հուզեր իր երգեցողութեամբ, կը լացներ: Շահ-Մուրատյան իր երգով այդ սիրտ ճմլող հուզումը չէ, որ կը պատճառեր, այլ եվրոպական երգեցողութեան իր ընտելացումը չափավոր և ճաշակավոր աստիճանով մը միացնելով Կոմիտասեն սորված հարազատ հայ երաժշտական ոճին՝ ան իր մեծ վարպետութեամբ ղեկավարված սխրալի ձայնով, ուր կարծես Տարոնի ճոխ ծաղիկներուն բուրյրն ու թռչուններուն դայլայլը խտացած էին, և իր ջերմ, հոգելից, հզոր երգեցողութեամբ կը հրճվեցներ, կը պայծառացներ, գեղարվեստական հեշտանքով կ'արբեցներ ունկնդիրները:

Հայ երգը՝ եկեղեցականն ու ժողովրդականը, այդ կախարդիչ երգչին չնորհիվ հաղթական պտուլտ մ'ըրավ, ինչպես երբեք չէր ըրած այդ ձևով ու չափով, Փարիզեն Պոլիս ու Իզմիր, եվրոպական մեկե ավելի երկիրներ, Ամերիկայե մեկ ծայրեն մյուսը, Եգիպտոսեն, Եթովպիայեն, Պաղեստինեն ու Սուրիայեն մինչև Պարսկաստան ու Հնդկաստան, և ամեն տեղ միջազգային հասարակութիւններու կողմե գնահատվեցավ, սիրվեցավ, ծափահարվեցավ ու հայրենիքեն հեռու գտնվող պանդուխտ Հայերու սիրտը ուրախութեամբ ու հպարտութեամբ ուռեցուց:

Հայ արվեստի առաքյալի այդ գեղեցիկ դերը, զոր կատարեց Շահ-Մուրատյան, հայ ժողովուրդին կողմե ընդմիշտ երախտագիտութեամբ պիտի հիշվի:

Շահ-Մուրատյանի մեջ՝ չքեղ արվեստագետին քով, կար և ազնիվ նկարագրով մարդ մը, ատոր ապացույցները, զոր մոտեն տեսած եմ, շատ են: Կ'ուզեմ հոս հիշատակել ատոնցմե մեկ քանին: Ինք է, որ վերջ դնելու համար այն ցրտութեան, որ վերև հիշված պարագաներուն հետևանքով ինծի հետ ունեցած հարաբերութեանց մեջ մտած էր 1913-ին, երբ քանի մը տարիե ի վեր ղռային տկարութենեն մը կը տառապեի, ինքնաբերաբար խորհեր էր, Պոլիս գտնված միջոցին, Գրիգոր Զոհրապին թելադրել, որ իմ գրական գործունեութեանս քսանևհինգամյակի տոնախմբումը կազմակերպեր, ինչ որ ըրավ

Զոհրապ՝ կազմելով հոբելյանական մեծ հանձնաժողով մը: 1914-ի պատերազմը պայթելով՝ այդ ծրագիրը ջուրն ինկավ: Շահ-Մուրատյան, որ աղվոր նամակով մը ինծի հաղորդեց իր այդ նախաձեռնությունը, նորեն դարձավ՝ ինչպես առաջ՝ իմ ամենասիրելի բարեկամներուս մին, և մեր բարեկամությունը այլևս մինչև իր մահը մնաց անայլայլ: Ան իր ազնիվ սիրտը ցույց տվավ նաև իր և իմ երիտասարդ բարեկամ բաղիշեցի տոքթ. Սարգիս Սերթլյանին՝ փոխ տալով հազար հինգ հարյուր ֆրանքի գումար մը (որ այն ատեն բավական կարևոր գումար էր), որպեսզի կարենա տպագրել տալ իր ֆրանսերեն գրական մեկ գործը, որուն ձեռագիրը տեսած և խորապես գնահատած էի. գիրքը տպվելեն ու տարածվելեն հետո Սերթլյան մաս առ մաս անոր պիտի դարձներ այդ գումարը: Շահ-Մուրատյան, որ խնայասեր մարդ էր, իր կաթիլ-կաթիլ մեկդի դրած դրամեն հոժարակամ փոխ տվավ այդ գումարը, երբ իմացավ իմ նպաստավոր կարծիքս տաղանդավոր հայրենակցի մը ծառայություն մատուցանելու համար: 1914-ի պատերազմը պայթելու ատեն Սերթլյան Պոլիս կը գտնվեր. ամիսներ հետո երզնկայի մեջ նահատակվեցավ, և իր գիրքն ալ, զոր Ֆիկիեռ հրատարակչական ծանոթ տունը իմ հանձնարարությամբս հավանած էր հրատարակել, տպագրված ըլլալով հանդերձ, հրապարակ իսկ չելած՝ կորավ այդ քառամյա ահեղ փոթորիկին մեջ: Շահ-Մուրատյան իր համոզումները ամեն տեղ և ամենուն աներկյուղ պոռացող մարդ էր, նույնիսկ երբ անոնք հիմնովին կը տարբերեին ազդեցիկ խմբակցություններեն: Բաբգեն վարդապետ Կյուլեսերյանը (որուն Մուշին մեջ ունեցած պատվական գործունեությունը մոռեն գիտեր ու կը գնահատեր) և Օրմանյան Սրբազանը՝ իր բազմաճև մեծ արժանիքներով՝ հիացական բացատրություններով կը տարփողեր ամեն առթիվ, նույնիսկ այնպիսի օրերու մեջ, ուր այլք զանոնք կը դատափետեին անարդար ամբաստանություններով:

Այս մեծարժեք Հայը ունեցավ կյանքի վերջին շրջան մը անհունապես տխուր: Հինգ վեց տարի առաջ, Ամերիկային դարձին, արդեն ան սկսած էր ցույց տալ առաջին նշանները անգութ հիվանդության մը. այդ հիվանդությունը չարունա-

կեց իր մռայլ բնաշրջութիւնը՝ քայլ առ քայլ քայքայելով իր ղայրին դրութիւնն ու իր ուղեղը: Ջեմ կրնար մոռնալ այն խոր հուզմունքը, զոր զգացի այն օրն, ուր Տարոն-Տուրուբերանի Հայրենակցականին ընդհանուր քարտուղար Պ. Տոնիկյանին հետ գացի զինք տեսնել Ավընյու տը Շուազիի իր բնակարանին մեջ: Բավական ատենե ի վեր չէի հանդիպած իրեն: Ճանչցավ զիս և մանկական ուրախութեամբ մը սկսավ աղաղակել (բառերը կիսատ արտասանելով). «Օ՛, մեռա՛ծ էիր դուն, ողջնցե՛ր ես... ուրախ եմ... Ավընյու Թրյուտենին մեկ ծայրեն կուգայիր, հանկարծ վար իննկար, մեռար... Հարութիւն ես առեր... Ղազարո՛ս.... ուրա՛խ եմ»): Այդ երևակայված մահը իր հիվանդ էութեան մեկ ցնորքն էր: Ավա՛ղ, ինչ որ եղեե ոչ մեռած, գեթ կիսամեռ էր արդեն, իր ուղեղն էր: Քիչ հետո իր հին վառավոր օրերը թվեցավ հիշել ու սկսավ իր համբավավոր «Հայաստան»ը երգել, այն «Հայաստան»ը, որով ելեքտրականացուցած էր հազարավոր Հայեր. բառերը չէր հիշեր, լա լա լայով երգեց ամբողջը, բայց եղանակը ճիշտ հիշեց, թեև լիրտելով կ'երգեր, ու ձայնը, թեպետ քիչ մը խեղդուկ, տեղ-տեղ իր հին օրերուն ուժն ու ջերմութիւնը կը վերստանար: Վերջին անգամն էր, կարծեմ, որ կ'երգեր:

ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՑԱՆ

«Անահիտ», Փարիզ, 1939, թիվ 6

ԱՐՄԵՆԱԿ ՇԱՀ-ՄՈՒՐԱՏՅԱՆ

Ինքը գնաց, ձայնը մնաց:

Ձայնը, որ բարձրացավ «Էն վլած տներ»են վեր ու տարածվեցավ խաղաղ «Մերանի ծառ»երու Հորդ ծփանքին միջով դեպի սարերը Տարոնի՝ հարց տալու համար, թե անոնք՝ սարերը, ինչու՞ չեն իր «տարտին դարման անում», հայու իր տարտին, որ «Օրհնյալ է Աստված», հինեն ի վեր իր իսկ ճակատագրին հետ հյուսված չաղկապված է: Ձայնը, որ տարածվեցավ փոթորկոտ, աշխարհի չորս ծագերուն մեջ, ուր որ երկու հայ կար, ու եղանակ առ եղանակ անոնց հոգիներուն վրա

քամեց մեր ազգային ապրումներուն ամենե՛ն հարազատ և ամենե՛ն տաքուկ թախիծն ու խինդը:

Մեծ բարեբախտություն մըն էր, որ մեր երաժշտական երկնքին տակ Շահ-Մուրատյան Կոմիտասի օրո՛վ ծագկեցավ: Առանց Կոմիտասի ան պիտի չըլլա՛ր գուցե հայ երգիչը իր իսկական առումով: Ու չափով մ՛ալ արդեն, մեր սերունդին համար, որ զինք չէ՛ լսած ու տեսած, Կոմիտասը նույնպես պիտի մնար հավետ մի քանի տետրակներու մեջ մերօրյա նորելուկ «երգիչ»ներու քմայքին հանճնված խաչյալ մը, առանց իրապես հասկցվելու, առանց չունչի մը առաջնորդող: Շահ-Մուրա՛տն էր միայն, որ Կոմիտասը թարգմանեց այնպես, ինչպես Կոմիտաս իր երգերով հայ հոգի՛ն թարգմանեց իր իսկութեյամբն անեղծ: Ապացու՞յց: Նվագեցեք Շահ-Մուրատի խմորատիպ երգերեն որևէ մեկը և բազկաթոռի մը մեջ դեպի ետև նստած ծունկերնուդ վրա բացեք Կոմիտասի ձայնագրություն-ը այդ նույն երգին ու տեսնեք, թե չեչտի և ընթացքի ի՛նչ եզական նմանողություն կա գրվածին ու երգվածին միջև: Ահա այդատեն միայն պիտի հասկնանք, թե ինչու՞ այս երգերը հոգի ու կյանք ստացած՝ համակ զգացում ու պատկեր կը դառնան և երգիչին հոգիեն բղխելով՝ կաթիլ առ կաթիլ հայ արյունիդ կ'ընդելուզին:

Անվիճելիորեն՝ Շահ-Մուրատը առաջին հայ երգիչն էր: Կոմիտասյան հուրով թրծված՝ իրենը առաջին ձայնն էր, որ մեր գեղջուկ բնաշխարհին երգերը կ'արձագանքեր իրենց մըտերմիկ ու պեսպիսուն տոհմիկ չեչտերովը և զանոնք սրճարանային և տիրացուական «բերան»ներու արևելյան միօրինակ ու լալկան տաղտուկեն ազատելով՝ մեր ազգային տարազը կը հագվեցներ անոնց: Եվ այս տարազը իր ալ վրա նույնքան հարազատ էր և ընդոծին, որքան հողը լեռնային, որ զինք սնույց:

Թերևս լեռնցի այս անընկճելի հանգամանքն էր նաև, իր կազմախոսուլյան հետ սերտորեն նույնացած, որ Շահ-Մուրատի ձայնին մեջ անխաթար պահեց հայեցի չեչտն ու գեղջուկ առոգանությունը, հակառակ տարիներու իր եվրոպական ուսման ու միջավայրին. իր բնավորության պես, ձա՛յնն ալ անուղղա մնացած է և պահած իր առաքինի անհատականությունը:

իր անձին մեջ չեշտվող այն արտակարգորեն անտաչ ու համառ դիծը, ի վնաս իր իսկ ժողովրդականութեան, մեծագույն ազդակը հանդիսացած է զինք արևմտյան արվեստի դաշտին դեպի հայկական համեստ երգերու «փոքր ածուն» վերադարձնելու, իր հոգիին խոսող մտերիմ ու պարզուկ ձայներուն ականջ տալու: Ահա հոս պետք է փնտռել եվրոպական ծայրահեղորեն արվեստականացած բեմին վրա իր անհաջողութիւնը, կամ ավելի ճիշդ՝ անկե իր փախուստը դեպի կալեբը «Հոռովել»ի և կամ «Ուրախ Լեր»ի կամարները խնկաբույր:

Հոս փոքրիկ չեղում մը:

Երաժշտութեան լեզուն տիեզերական է: Լա՛վ – պայմանավ, որ ակնարկվածը գործնական երաժշտութեան մասին ըլլա, այն՝ որ ականջեն ուղղակի հոգիին մեջ կը հոսի: Երգը, սակայն, չափավոր բացառութի՛ւն է: Որովհետև ան տիեզերական ըլլալեն բավական մը առաջ տեղական է, բյուրեղացու՛մը զինք ստեղծագործող ժողովուրդին խորհրդին ու ապրումներուն. և առ այդ հոգիին կը փոխանցվի առավելապես սրտին ճամբով: Երգին մեջ եղանակը ազնիվ ու վայելուչ զարդ մըն է միայն, բանաստեղծութեան և լեզվին գեղեցկութեանց զարդարող, պարագային ու կլիմային հարմար: Հարկ կա՞ ըսելու, թե երգիչին մեջ բանաստեղծը նույնքան կարևոր է, որքան ձայնական լարերը: Ապա թե ոչ՝ ունկնդիրներու մեջ ո՛չ թե մնայուն, այլ նույնիսկ անցողակի տպավորութիւն անգամ չարթննար, երբ երգիչը ինքը ո՛չ խորք ունի և ո՛չ ալ հարազատութիւն:

Ահա հոս է, որ ի հայտ կուգա ճշմարիտ երգիչին արժանիքը (ձայնամարզութիւնը չատ քի՛չ դեր ունի խաղալիք հոս), ուր իր սեպհական բնիկ հողին վրա անգերազանցելի է ան: Օրինա՞կ – Մերիըն Էնտրըսըն իր Negro Spirituals-ին մեջ, Ջան Մեք-Քորմիք՝ իրլանտական մեղեդիներուն և Արմենակ Շահ-Մուրատյան՝ Կոմիտասյան գեղջուկ երգերուն մեջ: Հիմար բաղդատական մը չէ, որ կը փորձվինք ընել – բայց Քառուզոն, իր աշխարհահռչակ ձայնով ու ճիրքով, պիտի կրնա՞ր մեզի տալ «Անտունի»ն իր փչաքաղող ու պատռող չեշտերով այնպես, ինչպես մեր մեծ քիթով ու թխադեմ Արմենակը կու-

տա: Որո՞ւ հոգիին ավելի զորավոր թափով կը խոսի, քան հա՛յ պանդուխտ հոգուն, ողբերգական պատմությո՛ւնը «էն փլած տներ»ուն ու մեր ազգային քարուքանդ երազներուն... և ո՞վ կրնար զայն տալ ավելի հարազատորեն, քան Արմենակը, որ «լա՛ճ»ն իսկ էր այդ մխացող հողին ու քարին, Արմենակը, որ ինքը գնաց, ձայնը մնաց:

ՀԱԿՈԲ ԱՍԱՏՈՒՐՅԱՆ

«Նոր գիր», Նյու Յորք, 1940, թիվ 4

ԱՐՄԵՆԱԿ ՇԱՀ-ՄՈՒՐԱՏՅԱՆ

(1878-1939)

Երեսունինը տարիներ առաջ Հայ երաժշտությունը կրեց անդարմանելի կորուստ մը, մահը խլեց կյանքը Կոմիտաս վարդապետով նոր ավյուն ստացած հայ տոհմիկ երաժշտության անկրկնելի մենակատար Արմենակ Շահ-Մուրատյանի:

Անուններ կան, որոնք ինչքան ալ ժամանակով և միջոցով հեռացած ըլլան, անթառամ հիշատակի վերածված անոնց կյանքեն ճառագայթող լույսը խոր ու չերմ զգացումներով կը համակե էությունդ:

Արմենակ Շահ-Մուրատյան մեկն է այդ համաստեղության շարքեն...

Կոմիտաս վարդապետի տաղանդով որակ և հրապույր ստացած հայ երգը կենդանություն և ընդհանրացում կը գըտներ Շահ-Մուրատյանի կատարողական արվեստին չնորհիվ:

Հայ երգի տարածումը քնաբան ընտրած գույդ հանճարներ միասնաբար կը չրջին հայահոծ կեդրոններ, համերգներ կուտան՝ արժանանալով հայ թե օտար մամուլի և հանդիսատեսի չերմ գնահատանքին...

Ուրեմն, հայ տոհմիկ երգի միջոցավ հայ ժողովուրդը իր դարավոր մշակույթով աչխարհին ծանոթացնելու ազնիվ նըպատակի ճամբուն վրա ուղեկից կը դառնան Կոմիտաս Վարդապետն ու Արմենակ Շահ-Մուրատյանը, մեկը՝ հավաքող և հղկող վարպետ, իսկ մյուսը՝ անկրկնելի մեկնաբան...

Շահ-Մուրատյանի երգացանկը հարուստ եղած է եկմալյանի, Ռոմանոս Մելիքյանի, Սպենդիարյանի, Տեր-Ղևոնդյանի, Սյունիի, Սրվանձտյանի և հատկապես Կոմիտաս Վարդապետի ստեղծագործութիւններով: Ան, արվեստի նուիրաստիճան մակարդակով մեկնաբանած է նաև Զայկովսկիեն, Պուչինիեն, Վերտիեն, Մոցարտեն և այլ հռչակված արվեստագետներեն հորինուածները՝ արտակարգ խանդավառութիւն ստեղծելով հանդիսատեսներու մոտ...

Այսօր, մեծատաղանդ վարպետի մահեն մոտ քառասուն տարիներ ետք, երբ կ'ուզենք ցանկի վերածել Արմենակը նախորդող և հաջորդող սերունդներու շարքին համբավված երաժիշտ-կատարողներու անուննները, ականավոր այդ մշակներու համաստեղութեան մեջ Շահ-Մուրատյանի անունը կը գլխավորե ցանկը:

Արմենակի երաժշտական գործունեութիւնը կը զուգադիպի հայ երաժշտական մշակոյթի ինքնորոշման ու վերանայման դժվարին ժամանակաշրջանին, երբ հայ երգը կը ստանար իր վերամկրտութիւնը կոմիտասյան մաքրամաքուր ավազանին մեջ: Ինքը հանդիսացավ այն երախտավորներեն մեկը, որոնք հայ երգի վերածնունդեն խանդավառ՝ ծառայելու տենչով զինվորագրվեցան հայ ժողովրդական երաժշտութեան լուսավորութեան բանակին:

Հայ ձայնական արվեստի մարզին մեջ Շահ-Մուրատյանը կը մնա անկասկածելիորեն անկրկնելի: Արդարև, կ՞ երաժշտական կատարող մը, որ երգած չըլլա «Հայաստան»ը, «Կռունկ»ը, «Անտունի»ն կամ «Մայր Արաքսի»ն, սակայն ո՞վ կրցավ կրկնել Շահ-Մուրատյանը:

Երգչի ձայնը արտահայտչական միջոց է կերպարը մարմնավորելու, բնավորութիւն ստեղծելու, հոգեվիճակ արտահայտելու՝ պայմանավ, որ ձայնը ըլլա մշակված և լիովին ենթարկվի կատարողի հղկված երաժշտական հասկացողութեան: Արմենակը իր բարձրարվեստ կատարողականով և անվիճելի մեկնաբանութեամբ կանգնած էր այդ ցանկալի մակարդակին վրա...

ՍԱՐԳԻՍ ԱՎԱԳ ՔԱՀ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

«Հայրենիք», Բոսթոն, 1978, մարտի 18-19

ԿՐԱԿԸ ԴԵՌ ՉԻ ՀԱՆԳԵԼ

Շահմուրադյանը երգում էր կրակի նման և ապրեց կրակի նման: Ես նրան լսել եմ միայն ձայնապնակով, տեսել եմ նրա լուսանկարները միայն, թեև առնվազն մեկ անգամ նա այցելել է Ֆրեզնո, երբ ես գտնվում էի այնտեղ: Վերջին համերգը տվել է Ֆրեզնոյի Քաղաքացիական լսարանում: Համենայն դեպս, այդ համերգի ժամանակ ես Ֆրեզնոյում չեմ եղել: Սակայն հետո իմացա համերգի մասին:

Նրա ձայնը կտրվել է, չի կարողացել հիշել տարիներով երգած իր երգերի բառերը, ջղայնացել է, գոռացել երաժիշտների վրա, հանդիմանել ունկնդիրներին:

Մահը եկավ, երբ նա դեռ հիսունին չէր հասել (մեծ գրողն այստեղ վրիպել է – Խ.Ս.): Ես մինչև հիմա էլ լսում եմ նրա ձայնագրված երգերը, և նա ինձ համար մնում է մեծ երգիչներից մեկը: Նա որոշ ժամանակ երգել է Փարիզի օպերայում, բայց օպերայի երաժշտությունը նրա համար չէր: Նա Հայաստանի երգերի երգիչ էր: Ձայնը նույնքան հարուստ էր, ուժեղ ու խորունկ, որքան կրակը: Մի պարզ տղա էր նա, պարզ ծնողների զավակ՝ ծնված Մուշում, որ մեկն է Հայաստանի Վանա լճի չուրջ երրորդությունն կազմող քաղաքներից՝ Բիթլիս, Մուշ և Վան:

Իմ ուսումնառության տարիներին գրեթե ամեն օր ունկընդրում էի նրա ձայնը: Միշտ, երբ երաժշտություն էի լսում ձայնապնակներից, պետք է նաև Շահմուրադյանի ձայնը լսեի: Երբ նա երգում էր, ազդն էր ապրում, վառվում էր ազգի հոգին և լույս տալիս: Նրա երգը մելամաղձոտ էր, բարկացած, միայնակ, հպարտ, քնքուշ:

Ֆրեզնոյում նրա վերջին համերգը կոտրեց այն հայերի սիրտը, որոնք չէին վարակվել նրա ջղագրգիռ վիճակից, ինչպես շատերը: Նրա անակնկալ մոռացությունը, ջղագրգռությունն ու ձախողությունը չշմեցրեց ու զարմացրեց նրանց, որովհետև նա հայ հոգու կրակն էր կրում բոլոր այն հայերի համար, որ լսել էին նրան, և հանկարծ տեսան, որ կրակը հանգում է:

Հորեղբայրս հազիվ էր կարողանում արտահայտել այն ցավն ու վիշտը, որ զգացել էր, երբ տեսել էր Շահմուրադյանի ձախողությունը:

– Հիվանդացա, – ասաց նա: – Ամբողջ գիշերը չկարողացա քնել:

Մորեղբայրս ասաց.

– Էլ չէր կարողանում երգել, ու վերջ: Բավական չէ, մեկ էլ վիրվորում էր: Կատարյալ ողբերգություն:

– Ի՞նչ տեսք ուներ:

– Խելագարի, – ասաց մորեղբայրս: – Իրոք խելագար էր: Եվ սիրտդ էր ճմլվում: Բոլորն էլ հիշում էին, թե ինչպիսին էր առաջ՝ բարձրահասակ, ուժեղ, դեղեցիկ, հպարտ: Էլ նույն մարդը չէր, ու վերջ: Պրծել գնացել էր: Չէր կարողանում երգել ու մարդկանց էր մեղադրում: Այնպես էր ձևացնում, որ իբր թե նրանք են մեղավոր:

Կրակն սպառեց նրան, բայց դա տեսան իր հարազատները, որոնք նրան սիրում էին այնպես, ինչպես սիրում էին Հայաստանը: Մեծ ձայնն այլևս երբեք չլսվեց ու մնաց միայն ձայնապնակների վրա, ուր նա ձայնագրվել էր երիտասարդ հասակում: Այս ձայնապնակները ամեն մի հայ ընտանիքի մասն են կազմում Ամերիկայում: Նորելուկ հայերը, որոնք ամերիկացի են, սկսում են Հայաստանի երգն ու երաժշտությունը լսել այնպես, որ իբր թե միայն կատակի համար կարելի է լսել, բայց շուտով հասկանում են, որ դա բոլորովին էլ կատակ բան չէ: Սկսում են հավաքել Շահմուրադյանի ձայնապնակները և շուտով տեսնում են, որ իրենք էլ երգում են այն երգերը, որ նա էր երգում, որովհետև այս երգերի մեջ կա իրենց սեփական հոգու կրակը: Այս երգերը երգում է նաև իմ որդին, մի մարդ, որ կարող է ասել իր հորը.

– Դեն չե՞ս գցելու էդ քո հայությունը:

– Էլ ինչու՞ ես հայերեն երգեր երգում, – հարցնում եմ:

– Զգիտեմ,– ասում է:

Դե ուրեմն կրակը դեռ չի հանգել: Կրակը վերջացավ Շահմուրադյանի անձի մեջ, բայց չհանգավ:

Եղել են ուրիշ հայ երգիչներ, բայց Շահմուրադյանի նմանը չի եղել: Եթե ինձ հարցնեք՝ նա փառավոր կյանք ապրեց: Կարևոր չէ, թե ինչպես և ինչու մահացավ, որովհետև քիչ մարդիկ են փառավոր մեռնում:

ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ

Ընտիր երկեր, հտ. 3, Երևան, 1988

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԹՐՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՄԸ ԱՐՄԵՆԱԿ ՇԱՀՄՈՒՐԱՏՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Անցյալ շաբթու, երբ Անգարա էինք, իրիկուն մը Քարփիչի մեջ պատահաբար հանդիպեցանք ծանոթ վիպագիր Աքա Քյունտյուզի և Անատոլու հեռագրական գործակալության ավագ խմբագիր Քերամի Քուրապայի: Միասին ճաշեցինք:

Խոսակցությունը մինչազգային քաղաքականութենեն փոխադրվեցավ Թուրքիո ներքին հարցերուն, ուր առաջին դիծին վրա եկավ տեղ գրավել թուրքահայ հարաբերություններու պարագան:

Աքա Կյունտյուզ խանդավառությամբ սկսավ խոսիլ այս նյութին շուրջ և թվեց իր իսկ կյանքեն կարգ մը հիշատակներ, որոնց քաղցր ոգեկոչումը կը հուզեր զինքը:

Համիտյան շրջանի թուրք երիտասարդությունը շատ բան կը պարտի հայ մտավորականության և մանավանդ թուրք բեմի հայ արվեստագետներուն, ըսավ Աքա, որոնք իրենց բարոյացուցիչ թատերախաղով հրապարակային դաստիարակության դերը կը կատարեին և Արևմուտքի հետ շփումներե զրկված թուրք երիտասարդության առջև արդիականության և նոր գաղափարներու հորիզոններ կը բանային:

Աքա Կյունտյուզ ապա խոսեցավ Փարիզի իր հիշատակներեն, որոնք հայտնի է, թե մասնավոր տեղ մը կը գրավեին իր սրտին ու մտքին մեջ...

Աքա հանկարծ ընդմիջելով խոսքը՝ հարցուց.

– Շահմուրատյանը կը ճանչնա՞ք:

Ինձմէ առաջ Քերամի նետուեցաւ՝ «այո» պատասխանելով և ըսաւ, թէ քանիցս առիթը ունեցած է լսելու զայն Իսթանպուլի մէջ:

Արդարև, իսթանպուլցի հասուն սերունդը 1908-ի Սահմանադրութենեն վերջ առիթը ունեցած է մոտեն տեսնելու և լսելու հռչակաւոր թենոր Շահմուրատյանը: Իսկ նորահաս երիտասարդները հավանաբար անունը միայն լսած են այդ տաղանդաւոր արվեստագէտին, որ եթե չենք սխալիր՝ տխուր վախճան մը ունեցաւ:

Զարմացա, թե խոսակիցներս ինչպե՞ս կը ճանչնային զայն: Աքա Կյունտյուզ անմիջապես բացատրեց, թե Փարիզի մեջ ծանոթացած ու բարեկամացած է Շահմուրատյանի, երբ ան տակավին նոր ավարտած էր Քոնսերվաթուառը: Այս առթիվ Աքա պատմեց նաև հետևյալ դեպքը, որ շատ հետաքրքրական է, մանավանդ անոնց համար, որոնք պիտի փորձեն օր մը գրել Շահմուրատյանի կենսագրությունը:

Պատմությունը հետևյալն է:

Շահմուրատյան Փարիզի Քոնսերվաթուառին ընթացքը առաջնութեամբ ավարտած ըլլալով հանդերձ, հակառակ իր բազմաթիվ դիմումներուն, պետական Օփերան կը մերժե ընդունիլ զայն՝ առարկելով, թե օտարահպատակ է: Երիտասարդ թենորը, որ զուրկ էր նյութական միջոցներե, այս կացութեյան առջև հուսահատութեյան կը մատնվի: Աքա և իր մյուս ընկերները կը չանան սրտապնդել զայն և օր մըն ալ երկար խորհրդակցութեյուններե հետո կ'որոշեն, որ Շահմուրատյան դիմե Փարիզ գտնվող մեծահարուստ Հայու մը՝ աջակցութեյուն խընդրելու համար անկե:

– Թելադրեցինք Շահմուրատյանի, որ Փարիզ գտնվող իր հարուստ ազգակիցներուն դիմելով՝ կացութեյունը պարզե, նյութական և բարոյական աջակցութեյուն մը ապահովելու համար: Շահմուրատյան դժկամութեյուն ցույց տվավ հանդեպ մեր այս թելադրութեյան: Այդպիսի դիմում մը իր արժանապատվութեյան դեմ կը նկատեր: Ան տարիներով չունչ և հոգի սպառեր, ամեն զրկանքներու տոկացեր էր իր վկայականը ստանալու համար: Եվ հիմա չէր ուզեր իր երազներու բարձունքեն վար իջնել:

Խրախուսեցինք զինքը և ըսինք, թե իր բաղձանքներուն իրականացման համար այդ զոհողութեան ալ պետք է հանձնառու ըլլար: Համոզվեցավ և դիմեց մեծահարուստ Հայու մը, որ այդ թվականներուն Փարիզի մէջ համբավ կը վայելէր իբրև քարյուղի իշխան: Դժբախտաբար այս լոպէին անունը չեմ հիշեր այդ անձնավորութեան:

Ընդմիջեցի և Մանթաշոֆ ըսի:

- Ոչ, Մանթաշոֆը չէ, ուրիշ Հայ մը, նույնպես քարյուղի հայտնի հանքատեր:

Եվ Աքա, չարունակելով դարձյալ.

- Շահմուրատյանը կը դիմէ այդ անձնավորութեան և կը պարզե ամբողջ կացութիւնը՝ հայտնելով, թե հակառակ «Քոնսերվաթուար»ի քննութեանց մէջ առաջնութիւն շահած ըլլալուն, Օփերայի տնօրենութիւնը մերժած է ընդունիլ զինքը և դեր տալ իրեն՝ առարկելով, թե օտարահպատակ է ինք:

Քարյուղի իշխանը անտարբեր երևույթով մը Շահմուրատյանը մտիկ ընելէ վերջ կը ճամբե զայն՝ պատվիրելով, որ չաբաթ մը վերջ դարձյալ հանդիպի իրեն:

Մեր մշեցի բարեկամը այս պաղ ընդունելութենեն բոլորովին սրտաբեկ, եկավ գտավ մեզ ու պատմեց բոլոր եղելութիւնը: Ցավ զգացինք և նույնիսկ ընդվզեցանք այդ քարյուղի իշխանին դեմ, որ իր օժանդակութիւնը ըլլացած էր արժեքավոր ազգակիցի մը: Բայց ի՞նչ օգուտ: Ուրիշ բան չէր գար մեր ձեռքեն, այլ միայն մխիթարել Շահմուրատյանը:

Այս միջադեպեն քանի մը օր վերջ էր. դարձյալ բոլոր թուրքիացիներս նստած էինք Քաոթիե Լաթինի մեր ծանոթ հավաքատեղին, երբ հանկարծ Շահմուրատյանի բնակած տան դռնապանը եկավ հևիհև ու ըսավ, թե Օփերայի տնօրենութիւնը ստիպողաբար զինքը կը փնտռե:

Շահմուրատյան գնաց: Շյուքրյու, կարպիս ու ես հետաքրքրութեամբ կը սպասեինք անոր վերադարձին: Արդարև, քանի մը ժամ վերջ ճառագայթող դեմքով մը եկավ մեր առջև ցցվիլ Շահմուրատ՝ ավետելով, թե Օփերայի տնօրենութիւնը պայմանագրութիւն մը կնքած է իրեն հետ՝ «Ցաուսթ»ի ներկայացումներուն մէջ «Թենոր»ի դերը իրեն տալով:

Շնորհավորեցինք զինք: Բոլորս ալ ուրախ էինք: Այդ օրը մինչև առավոտ խրախճանք և ցնծութիւն կատարեցինք:

վերջապես ներկայացման թվականը եկավ: Շահմուրատյան մեզի Ա. կարգի թիկնաթոռներ տրամադրած էր: Ներկա եղանք: Երեկույթը աննախընթաց հաջողություն մը ունեցավ: Շահմուրատյան երկարատև ծափեր խլեց, ծաղկեփունջ ստացավ, և բոլոր գեղարվեստական քննադատները անվերապահ դրվատիքի տողեր նվիրեցին անոր:

Այս բոլորը լավ: Բայց ո՛չ Շահմուրատյան և ո՛չ ալ մենք չէինք կրցած հասկնալ, թե ինչպե՞ս Օփերայի տնօրենությունը հանկարծ իր մերժողական դիրքը փոխելով՝ հոժարած էր պայմանավորվիլ Շահմուրատյանի հետ: Հետաքրքրվեցանք: Ահա լուծումը այդ գաղտնիքին.

– Քարյուղի այն մեծահարուստ հայ հանքատերը, որուն դիմած էր Շահմուրատյան՝ օժանդակություն խնդրելու, երիտասարդ «թենոր»ին պատմությունը լսելե վերջ հրաման կուտա իր պաշտոնյաներուն, որպեսզի հրապարակեն հավաքեն Փարիզի Օփերային բոլոր արժեթուղթերը: Հրամանը իսկույն կը գործադրվի, և հայ հանքատերը քանի մը օրվան ընթացքին տեր կը դառնա Օփերայի արժեթուղթերու մեծ մասին, ուրկե վերջ իր մոտ կը հրավիրի Օփերայի տնօրենը և կը հարցնե, թե ինչու՞ մերժած են դեր տալ Շահմուրատյանի: Տնօրենը կը կրկնե օտարահպատակության ծանոթ հանկերգը:

Ասոր վրա հայ հանքատերը տնօրենին ցույց կուտա իր ձեռքը գտնվող արժեթուղթերը և կ'ըսե, թե յուրաքանչյուրը ՀԻՆԳ ԾՐԱՆՔի ծախու պիտի հանե զանոնք՝ վարկաբեկելով Օփերային բարոյական անձնավորությունը, եթե համառին Շահմուրատյանի դեր չտալու իրենց որոշման մեջ: Տնօրենը սարսափահար կը փութա կացությունը պարզել Վարչական Խորհուրդին, որ այլևս առանց երկար բարակ ձևակերպությանց մեզ մտնելու, ետ կ'առնե իր որոշումը և կը պայմանավորվի Շահմուրատյանի հետ:

«Հառաջ», Փարիզ, 1946, թիվ 304

Այս պատմությունը չարադրել է Կ. Պոլսի «Ժամանակ» թերթի խմբագիրը նույն թվականի մարտի 12-ի և 13-ի համարներում: «Հառաջը» արտատպել է այն վերապահությամբ, թե «անշուշտ իրազեկներ կը լուսաբանեն»:

ՀՌՉԱԿԱՎՈՐ ԵՐԳԻՉ
ԱՐՄԵՆԱԿ ՇԱՀՄՈՒՐԱԴՅԱՆԸ

Ձմեռ էր: Դպրոցում սովորելու ժամանակ ես մի որոշ չըրջան անցկացրի ամուսնացած քրոջս տանը, որի ամուսինը Ներսիսյան դպրոցն էր ավարտել և երգել Եկմալյանի խմբում:

Մի օր նրանց տուն հյուր էին եկել իրենց հարևան մի ուսուցիչ և նրա մոտ էջմիածնից եկած բարեկամ Ընճակ վարդապետը, որը մի քանի օրից հետո մեկնելու էր աշխատանքի եգիպտոս: Վարդապետը շատ զարգացած մարդ էր:

Թեյի ժամանակ նրանք երկար խոսեցին զանազան հետաքրքիր հարցերի մասին. հանկարծ Ընճակ վարդապետը ոգևորված հայտարարեց.

– Լավ է հիշեցի, Թիֆլիս է եկել Փարիզից մի հայտնի հայ երգիչ. մոտ օրերս կայանալու է նրա համերգը:

Բոլորը շատ ուրախացան և որոշեցին գնալ նրան լսելու: Այդ երգիչն էր Արմենակ Շահմուրադյանը:

Այդ լսելով, ես, որ սեղանի մոտ նստած էի քրոջս կողքին, կամաց ասացի.

– Ասա քո ամուսնուն, որ ինձ էլ տանի այդ համերգին:

Այդ խոսակցությունը, որ լսեց վարդապետը, հարցրեց.

– Ի՞նչ է ասում մեր աղջիկը:

Քույրս ժպտալով ասաց.

– Խնդրում է, որ իրեն էլ տանենք համերգի:

– Ես կտանեմ մեր աղջկան, ե՛ս, – ասաց Ընճակը:

Ես շատ ուրախացա, որովհետև երբեք չէի բաց թողնում հետաքրքիր համերգները:

Երեք օրից հետո բոլորս համերգում էինք... Ես նստած էի առաջին կարգում, վարդապետի կողքին (նա աշխարհականի չորերով էր), իսկ մերոնք՝ մեծերը, հինգերորդ. ես անհամար էի զգում:

Սկսվեց համերգը:

Բեմ դուրս եկավ բարձրահասակ, շատ համակրելի դեմքով երիտասարդ Արմենակ Շահմուրադյանը: Նրա առաջին երգից ես արդեն հիացա: Նա հիանալի, մաքուր զանգակի ձայն ուներ. տենոր էր: Նա երկու բաժնում զանազան երգեր կատա-

րեց, բայց ամենից շատ՝ Կոմիտասի ստեղծագործություններից: Բոլորը հիացած էին: Շատ մեծ հաջողություն ունեցավ երգիչ Արմենակ Շահմուրադյանը:

Համերգը կայացավ Հայարտանը, որը գտնվում էր Գոլովինսկի պողոտայում:

Ես այդ գիշեր բոլորովին չքնեցի: Արմենակ Շահմուրադյանը չարունակ կանգնած էր աչքերիս առաջ, իսկ նրա ձայնը անվերջ ուղեղիս մեջ էր, չէի կարողանում հանգստանալ:

ԽՈՋԱՅԱՆ-ԾՈՎՅԱՆՈՎԱ ՆԱԴԵԺԴԱ

Այս անհավակնոտ հուշիկը վերաբերում է 1913 թվականին. գրված է 1969-ին: Մեքենագիր օրինակը գտնվում է ԳԱԹ, Ա. Շահմուրադյանի ֆոնդ, թիվ 8:

ՄՇեՅի ԳՅՈՒՂԱՅԻՆ ՓԱՐԻԶԻ ՕՓԵՐԱՅԻ ՄԵՋ

Պատմական մեծագույն թվական մըն էր, ինչպես էր գրոց դյուտին հազար հինգհարյուրամյակը, որ Արմենակ Շահ-Մուրատյանի համբավը իր չողարձակումը կը գտներ Սահակի և Մեսրոպի գործին պանծացման նվիրված ծաղկեհյուս կամարներու համաստեղության մեջ. մինչ ան Կոմիտաս Վարդապետի հետ կը թնդացներ Գումգաբուի Մայր եկեղեցվո հոյաչեն տաճարը, մեր երանյալ հայրապետներու հոգիչունչ և մեծասքանչ տաղերով:

Ս. կարապետը իր երկրպագուներուն կուտա իմաստություն, Նավասարդյան մարզիկներուն՝ հաղթանակի դափնիներ խլելու կամք ու կորով, լարախաղացներուն՝ ճկունություն և չարխափան կարողություն: Իսկ մեր Շահ-Մուրատյանին տված էր քաղցրանվագ ձայն: Դեռ ութ տարեկանին արդեն ճանչված երգիչ մըն էր և կը թնդացներ Մշո Սուլթանի տաճարին կամարները:

Տառապանքով թրծված աստանդական կյանք մը եղավ իրը... Հունվար 17-ի այն բախտավոր երեկոյին, երբ Շահ-Մուրատյան առաջին անգամ կ'երևար Կունոյի «Ֆաուստ»ին համանուն դերին մեջ, միջազգային բազմությունը, որ կը փու-

թար Օփերա՝ վայելելու իր երգը, անշուշտ կ'անգիտանար այն ահավոր տառապանքը, զոր կրած էր այդ Հայոցդին՝ դարբին Սըրգոյի տղան՝ լսելի դարձնելու համար իր երկնային ձայնը երաժշտության տաճարի բեմին վրա:

Զինադադարի օրերուն, երբ Պոլիս հանդիպած էր երգահանդեսներ տալու, ան չէր մոռցած որբերը, որոնց բախտակից եղած էր այնքան կանուխեն: Երուսաղիմատուն եկած էր, այն ժամանակ «Վիքըի Հոմ»-ի որբանոց մեր տան դիմացը, բախտազուրկ հայորդիները ոգևորելու իր երգերով: Տնօրենին ծանոթ էի, ասկե զատ կեդրոնականի դասընկերներս հոն էին, պետք էր օգտվիլ առիթեն: Որքա՜ն անհամբերությամբ սպասեցի իրիկվան: Մեր երգիչը որբանոցին պարտեզը մտերմիկ խոսակցության մը բռնված էր տղոց հետ: Շատ չանցած վեր ելավ: Քանի մը ուղերձներե և երգերե ետք կարգը իրն էր: Շահ-Մուրատյան երգեց «Հերիք որդյակք»ը զեղեցիկ և ներդաշնակ շարժուձևերով, բայց իր երգածը օփերեթային սովորական եղանակ չէր, բոլորովին տարբեր հմայք, տարբեր ներգործություն մ'ուներ:

Տաղանդավոր երգիչը կարճ բացատրութենե մը վերջ երգեց նաև «Արոր Տատրակ»ը այն կենդանի ու խանդավառ չունչով, որուն գաղտնիքը միայն ինք գիտեր: Դաժան կյանքի մը լուսանցքեն չողացող այդ լույսի նշույլը պարզ է, զեղեցիկ, սակայն այլաբանական:

Տարօրինակ աղերս մը, համագոյություն մը կա մարդկային հոգիներուն միջև: Օ՜հ, կուզեք Նախախնամության վերագրեցեք այդ հոգեմիտումը, կուզեք՝ համաստեղության առեղծվածային մեկ բաղակցության:

Շահ-Մուրատյանի աստղը, որ իր լույսը կը ստանար Կոմիտասի ակեն, վարդապետի մահեն ետքը խավարեցավ բոլորովին:

Կոմիտասի հուղարկավորության նախորդ առտուն միասին էինք եկեղեցին: Ջեր ուզեր բաժնվիլ իր մեծ գործակիցին քովեն, որուն հետ այնքա՜ն թանկագին պահեր ապրած էր նախապատերազմյան երանելի օրերուն: Լու՜ռ, մտամփոփ, աչքերը կիսափակ և ձեռքերը կուրծքին խաչաձևած, կը խոկար ծանրորեն: Հարցուցի, թե վարպետը հաճախ երգա՞ծ է եկեղեցին: Հաստատական պատասխան տվավ: Հետո ձայնին հաստատական շեշտ մը տալով հարեց.

– Տեսնու՞մ եք Վարդապետին. նրա ֆիզիքական գոյությունը վերջ գտած է, բայց ինչ որ կը մնա նրանից, դա իր կատարած գործն է:

Գո՞րծ... մի՛թե ինքն ալ մաս չէ՞ր ունեցած ասոր մեջ, մի՛թե քաղաքէ քաղաք, գաղութէ գաղութ չէր տարաձած հայ չունչը, հայ հոգին իր դյութական ձայնով բազմությունները խանդավառելով:

Շահ-Մուրատյա՛ն. անուն մը հոյակապ, որ իր ճառագայթները սփռած էր ամեն հոն, ուր հայություն կար, ի վերջո փուլ եկած էր «Անտունի»ի չենքին նման, դադրած երազելե բնաշխարհի ոսկեծիր հորիզոնը, որպես թե Լեթեի ցնորաբեր ակեն ըմպած ըլլար... Դադրած էր և իր հոգին անպարագիծ բարձունքներ չափելե, դարձած Կոմիտասի կենդանի ուրվականը: Իրաց վախճան, որուն վրա որքան ալ իրատես կամ փիլիսոփայական աչքով նայելու ըլլանք, չենք կրնար զսպել մեր սրտի ճմլումը:

Ճակատագրորեն դատապարտված թարթափելու անհատակ Տարտարոսին մեջ, Հայոց երգիչը լուեց հավիտյան: Երկրորդ աշխարհամարտի սկզբնական օրերուն, սակայն, իր երգը դեռ կը խոսի ձայնագրի մեջեն կարոտակեզ բազմություններու սրտին, ինչպես Նաիրի աշխարհին աղբյուրներուն կարկաչը, դեռ կը գգվե ականջները մեղմահուլզ զեփյուռին սույլերով ու կը վարարե ուռնգերը բազմերանգ հազրեվարդերու բույրերով:

ԱՐԱՄ ՊԵՏՐՈՍՑԱՆ

«Քուլիս», Կ.Պոլիս, 1963, Հունվարի 1

ՎՐԵԺԽՆԴԻՐ ԵՐԳԻՉԸ

«Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն...»

Ամեն անգամ, երբ Արմենակ Շահմուրադյանի անունն է միտս գալիս կամ իր երգերի հաճախական ունկնդրությունն եմ կատարում Երևանի ռադիոկայանից, հուզումով և սարսուռով մտաբերում եմ նրա համերգը կալկաթայում մոտ քսան-հինգ տարի առաջ, երբ գուցե իր կյանքի ամենաանզուսպ ա-

տելանքը, զայրույթը ու վրեժի զգացումը հրապարակ հանեց նենգ արևմտացիների դեմ:

Հայոց մարդասիրական ճեմարանի աշակերտների մեջ մի օր լուր ընկավ, թե հայ ազգի մեծ երգիչը՝ Տարոնի Սոխակ Շահմուրադյանը, մի շարք երկրներ ճամփորդական համերգներ տալով, հասել է Կալկաթա (1931-32 թվականներն էին): Ասում էին արտասահմանի հայերի դառն հուսախաբությունները և սրտաբեկ վիճակը նկատի ունենալով, նա ձեռնարկել է դժվարին պարտականություն՝ այցելել հայաշատ վայրեր, իր հայրենաբաղձ երգերով հայրենիքի ու ցեղի ոգին արթուն պահել նրանց մեջ, անթեղված կրակը խառնել, թեժացնել, մինչև... «արդարությունը» իր անկաշառ խոսքն ասի մեր իրավունքների մասին, մինչև մեր ժողովրդի վերադարձը իր հայրենիք: Լոզանի խորհրդաժողովներում մեր դատի հանդեպ ցուցաբերած անարդ անտեսումը, մեր ժողովրդի վերադարձը հայրենիք, մեր միլիոն ու կեսի անճիտման մոռացությունը Ազգերի Լիգայում, մեր արյան ու բազկի նպաստով հաղթանակների տիրացած, շահամոլ ու եղկելի Մեծերի դավաճանությունը, անզոր ցասումով բռնակալել ու վշտացրել էին մեր բնազուրկ ժողովրդին: Մեր ժողովուրդը իր դատի անդունդ չպրտվելը վերջնական նկատելով՝ եկել էր իր գլխի ճարը մտածելու՝ ի խնդիր գոյատևման, հացի պայքար սկսելով: Այդ օրերին էլ հայությունը եկավ զգալու, թե որքա՜ն անզոր է ինքը, որքա՜ն նկուն, որքա՜ն անարժեք աշխարհի մեծ տերերի անկուշտ աչքերում...

Մենք մի օր միայն տեսանք Շահմուրադյանին, երբ մեր ճեմարանի ավագ ուսուցչի հետ անցավ դպրոցի միջով՝ անուշադիր դեպի իր շրջապատը և ձուլվեց փողոցի բազմության մեջ: Մենք նույնիսկ չզիտեինք իր ո՛վ լինելը. ինչպես ամեն նորեկ հետաքրքրում էր մեզ դպրոցի անմատչելի պարիսպներից ներս, նա էլ իր առավել տպավորիչ արտաքինով բուռն հետաքրքրություն արթնացրեց մեր մեջ. ո՞վ պիտի լիներ արտիստի երկար ու ծփուն մազերով, սպիտակ, մաքրամաքուր ու վայելուչ հագուստներով, կարմիր փողկապով, լայնաճակատ, ու գեղեցիկ ձեռքերով այս ազնվական օտարականը:

– Շահմուրադյա՛նը, «Հայաստան»ի, «Հիշեցուք»ի, «Կիլիկիա»ի, «Կռունկ»ի պաշտելի երգիչը:

Ուշ իմացանք այս, և մինչև ամբողջ աշակերտությունը թափվեց կենտրոնական դռան առաջ, նա արդեն աներևութացել էր փողոցում: Քիչ հետո ավագ ուսուցիչը Շահմուրադյանին ճամփա դնելուց հետո ներս եկավ, մենք նախ մեր դժգոհությունը հայտնեցինք, որ նա թաքուն էր պահել անվանի երգչի ո՛վ լինելը և հետո վշտացած էինք երգչից, թե ինչու՞ չէր ուզեցել հանդիպել հայրենակարոտ, ազգի մեծեր տեսնելու տոչոր, որբահենցաղ տղաներին: Ամենաանչան այցելուն անգամ ժամերով մեզ հետ էր լինում. ինչու՞ Շահմուրադյանի պես մեկը, որ ազգի ամենամեծ երգիչն էր, պիտի չտեսնվեր մեզ հետ, պիտի մեկ-երկու խոսք չասեր մեր ազգի ու մեր բախտի մասին և վերջապես մի երգ երգեր մեզ համար... Մեր հոգեկան ընդվզումը ու գանգատը թեպետ սուր, բայց արդարացի էին, այդ զգաց ուսուցիչը և համարյա այս բառերով հանգստացրեց մեզ.

– Նա չուտով համերգ է տալու. օգնող ու ձեռնհաս մարդիկ գրեթե պակասում են իր համար. ինքն էլ մի օտարական է տեղի համար և մտահոգության մեջ: Այլ երկրներում նրա չուրջն է պտույտ գալիս արվեստասեր հասարակությունը, ինքը ոչ մի աշխատանքի հետ գործ չունի. իսկ այստեղ ինքն է, որ պիտի վազեվազ անի քաղաքի մեկ ծայրից մյուսը, նախապատրաստական աշխատանքների համար. հոգնած է ու սրտնեղված: Հետո սիրտը լիքն է. իր տեսած հայերը իրենց ներկա տխուր վիճակով շատ ծանր տպավորություն են թողել իր հոգեկանի վրա. այնքան է շտապում իր ճամփորդության մեջ, որ կարծես փախչում է հայությունից... Խնդրեցի հանդիպել աշակերտության, նա մերժեց, բայց ասաց, որ հավանական է այդ բանը անի իր համերգից հետո:

Այնուհետև մենք չատ նայեցինք նրա ճամփին, բայց էլ չտեսանք, մինչև համերգի գիշերը: Այդ գիշերը ես երբե՛ք, երբե՛ք պիտի չմոռանամ. այդ համերգը իր տեսակի մեջ իմ տեսած ամենանշանավոր համերգն է կյանքումս – իր թողած տպավորությամբ, իր բացառիկ արժեքով և մանավանդ իր ունեցած քաղաքական սատիրայով:

Համերգը տեղի ունեցավ Կալկաթայի ամենաչքեղ ու ամենամեծ թատերասրահում: Ավելորդ է նկարագրությունը այն ազդեցության, որ նրա առնական ու անզուգական ձայնը ու-

նեցավ հարյուրավոր անգլիացիների և օտարների վրա, իսկ վարար հուզումը, թովչանքն ու հրապույրը հայրենաշունչ երգերի՝ հայ ունկնդիրների վրա: Ուռուանները և կեցցեները սրտառուչ բացականչությունների վերածված՝ խլացնող ծափերի հետ տևում էին երկար պահեր, սակայն որոնց Շահմուրադյանը իր նշանավոր համառությամբ կարևորություն չէր ընծայում և կրկնություն չէր կատարում: Այսպես շարունակվեց մինչև վերջին երգը, երբ հասարակությունը, կարծես խոսքը մեկ արած, քանի բոպե անդադար ծափահարեց ու հիացական կանչերի խելահեղ ժխոր բարձրացրեց, իր կամքը պարտադրելու հանճարեղ երգչին՝ ծրագրից դուրս մի երգ ևս տալու:

Շահմուրադյանը, դժկամ ու անհնազանդ, մեկ-երկու անգամ իրեն ցույց տվեց բեմի վրա, թեթևակի գլուխ տվեց ու քաշվեց, բայց հասարակությունը մնաց անդրդվելի, և սրահը թնդացնող ցույցը շարունակվեց:

–Էլ չի երգի, կրկնելը կամ հայտագրից դուրս երգելը իր սովորությունից դուրս է...– լսվեց բեմից:

– Պիտի՛ երգի, մի հատ էլ պիտի՛ երգի, սրահը չենք թողնի, մինչև մի ուրիշն էլ չերգի...– որպես թելադրական վճիռ լսվեց մի քանի տեղից, և ժխորը ավելի սաստկացավ:

Այնուհետև Շահմուրադյանը կրկին հայտնվեց բեմի վրա, զգալապես տրտմած և դժգոհ. էլ գլուխ չտվեց, հայացքը ման տվեց հանդիսականների վրա, բարկությունից առկայծուն ու քենոտ աչքերից բոցե սլաքներ ցրվեցին ձախ ու աջ, և մի պահ մնաց արձանացած, հայտնապես տարված իր ներաշխարհը փոթորկող խոհերով: Գուցե մտածում է, թե ի՞նչ երգի. գուցե մի հատ էլ օտար երգ է ուզում երգի և բառե՞րն է միտ բերում. գուցե... բայց նա հանկարծ մատի հրավիրական շարժումով առաջ կանչեց առաջին շարքում նստած մեկին, կռացավ, մի բան հայտնեց և ուղղաձիգ կանգնեց բեմի եզրին: Ռոպեապես ամբողջ սրահը տեղյակ դարձավ նրա պահանջ-պայմանին. «Եթե ուզում եք ծրագրից դուրս երգեմ, պե՛տք է բոլորդ անխտիր ոտքի կանգնեք այս երգի համար...»

Պայմանը ոչ միայն արտասովոր, այլ սրտամոտ թվաց հայերին. չէ՞ որ հայ մեծ երգիչը ծանր էր ծախում իր բացառիկ շնորհը. բայց օտարների համար, մա՛նավորապես անգլիացիների համար, երևույթը անհաճո ու անբնական թվաց: Տեսնը-

վել է արվեստագետ, որ դժվարությամբ ընդառաջի հասարակության ցանկության, բայց չի տեսնվել մեկը, որ այսպես դողդող ու ամբարտավա՛ն գտնվի՝ մարդկանց զեղուն զգացումները չարաշահելով, իր «ես»-ը պարտադրելով նրանց: Սակայն պարագայական պատկերը այստեղ ուրիշ էր. պարզ էր, որ երգիչը արվեստի շղարշի տակ ու արվեստի ուժով մի մասնավոր հետապնդում. ուներ, որը հայտնվեց հայերի համար չուտով: Շահմուրադյանը կատակ չուներ, անժպիտ էր, հատուտակամ ու դաժան. նա ձգտում էր մի նպատակի. նա մի հետին միտք ուներ. իր անայլայլ դեմքը, բոցակալած աչքերը ու անսեթևեթ կեցվածքը մատնում են իր առելավառ ու վրեժաբորբ հոգին: Նրա սլաքը հե՛նց ուղղված էր անգլիացիների դեմ. նրա հաչիվը հե՛նց նրանց հետ էր. «Սուրբ-Սուրբ»-ը, «Կռունկ»-ը իր զգայուն սիրտը մրրկել էին հայ ժողովրդի եղերական ներկայով. գաղթական, անիրավված հայի վիշտը ծնել էր վրեժ իր մեջ, որը կիզում էր իր հեգ սիրտը...

Եղան հատ ու կենտ անհատներ, որոնք չուզեցին հպատակվել մի նահատակ ցեղի վտարանդի արտիստի կամայականության, ելան հեռացան: Եղան, որ դժգոհ մնացին, բայց ժողովրդական օրենքը հպատակեցրեց ընդհանուր կացութեան: Երբ ամբողջ ժողովուրդը ոտքի էր, և երգչի արծվատես աչքերը կատարեցին այդ ստուգումը, ընդոստ ետ շրջվեց, արագ թերթեց դաշնամուրի վրայի ձայնատետրը և աջ ցուցամատը դրեց մի էջի վրա. ազդանշանը տրվել էր: Հետո ուղղվեց, առաջացավ բեմեզրին, հասակը մեկնեց, կուրծքը մի քանի անգամ բարձր ու ցած արեց, ձեռքերը կցեց, ու նայվածքը իր խոհերի հետ բաժանվեց շրջապատից:

Ջայնանիչերի հենց առաջին հնչյունները սառը սարսուռ վազեցրին հայերի մարմնով. ահա՛ թե ինչ. իրավունք ուներ հայրենախոս երգիչը այսպիսի երգի համար ո՛չ միայն այս երկու հազարի մոտ բազմությունը, այլև համայն մարդկությունը ոտքի հանելու և խոնարհեցնելու: Հետո նրա ձայնը, կարծես հեծած հայկական քամիներին, մրրկավազ թավալումով, ահեղ շչյուններով ու ամպրոպային հզորաձայն արձագանքներով սկսեց իր խոլ արշավը Հայոց աշխարհի երկնամերձ լեռների, սիրասուն լճերի, անդնդախոր վիհերի վրայից, ապա նետվելով Արարատյան դաշտ՝ սկսեց սլացքը դեպի լյառն Մասիս.

Հայաստա՛ն, երկիր դրախտավայր,
Դու մարդկայնոց ցեղիս օրրան,
Դու և բնիկ իմ հայրենիք,
Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն...

Մեկն այստեղ, մի քանիսը այնտեղ՝ փղձկում են, ուրիշներ թաշկինակ են տանում աչքերին. օտարները չփոթված ու ահաբեկված են զգում:

Շահմուրադյանը աճել, մի հսկա է դարձել բեմի վրա. ձեռքերը այնքա՛ն սրբազնորեն է կցել և այնքա՛ն հեռացել դեպի իր սրտի ու հոգու ներզոր բարձունքները, որ թվում է մի հնադարյան քուրմ լինի նա, որ իր գոյությեան ամբողջ էությամբ ձայն է տալիս իր հավատքի Աստծուն՝ ուշադրություն, գութ ու փրկություն հայցելով իր ժողովրդի համար:

Եվ անճկայրյաց ի քեզ հուսամ,
Ի քեզ, ի քեզ, հու՛յս իմ միայն.
Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն...

Տեր Զորի, Հալեպի, Նահր էլ Օմարի ավազների վրա տվայտող ու խանձվող մնացորդացի, եվրոպական ափերում սև ապրուստի գեհենն ապրող հողմացրիվ գաղթականության մորմոքն ու անարցունք հծծյունը կա իր երգի տարազի տակ: Գանգատն ու ցասումը մեր երեկվա «մեծ դաշնակիցների» դեմ, որոնք իրենց ավարին հասած, խարուկ էին պատրաստել մեր խողխողված մարտիրոսների աճյուններից, մեր արյունը լճած ավելի քան ութ-տասը ղեկավար բորենիներին Մալթայի աքսորից ազատ ձգել և ժանտորեն աճուրդի հանել մեր արյունաթաթաւ դատը... Ե՛ղ ժողովուրդ:

Քե՛զ ապրիմ ես, քեզ միշտ ցնծամ,
Քե՛զ, քե՛զ պանծամ, փա՛ռք իմ միայն.
Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն...

Հիմա նրա աչքի առաջ են գալիս մեր մեծ նահատակները՝ Զոհրապ, Վարուժան, Սիամանթո, Զարդարյան, Կոմիտաս, և աչքերը մի պահ պղտորվում ու փակվում են, կուրծքը ու-

ռում, շրթունքները դողում, ու թվում է, թե հիմա երեսը կծածկի թևերի տակ ու թառանչյունով կարտասվի... Թվում է, թե տեսնում է իր մեծ վարպետի մագաղաթյա դեմքը – Փարիզի հոգեբուժարանում – որի առեղծվածային աչքերը իզուր կռունկներ ու խաբրիկ են որոնում օտար երկնքում: Բայց նա իսկույն հաղթահարում է իրեն, աչքերը չանթեր են մաղում, և իր քրմական երգի բառերը նոր երանգ ու իմաստ են առնում. – ատու՛մ եմ ձեզ, ո՛վ ցածրաքարշ ու խարդախ Մեծ Լիգայականներ. դուք Նազովրեցու անունով ճառող, բայց հավետ եղկելի նենգմիտներ, մենք մի օր ձեզ հետ հաշվեհարդարի կնըստենք, որովհետև դեռ կա Արարատը, որի փեշերին կառչած մեր բզկտված ու սովալլուկ ժողովուրդը իր փոքր համրանքով այսօր որպես Փյունիկ կրկին հարուբյուն է առել՝ ժայռերից հաց քամելով, որովհետև Լուսավորչի անմար կանթեղը դեռ պլպլում է քառագագաթ Արագածի կատարին, որովհետև դեռ Հայկյան հող ունենք մեր ոտքի տակ, և մեր սրբազան երգի առաջ, ահա՛ դուք՝ բարևի կանգնած, մեր անմահության ճայնին եք ականջ դնում...

ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐՑԱՆ

«Եղիցի լույս», Գլենդել, 1997, ապրիլ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թանգարանի կողմից 3
Կոմիտասի արժանավոր սանը - Խ.Սաֆարյան 5

Ինքնակենսագրություն 17
Հայ ժողովրդական երգը 43
Նամակներ 46

Օտար մամուլի գնահատականներ 66
Հայկական մամուլի արձագանքներ 75
Հայ մտավորականների կարծիքներ 94
Ժամանակակիցների հիշողություններ 128

ԱՐՄԵՆԱԿ ՇԱՀՄՈՒՐԱԴՅԱՆ

(Տարոնի Սոխակը)

Շարվածքը ԼԱՈՒՐԱ ՎԻՐԱԲՅԱՆԻ
Էջադրումը ԳՈՒՐԳԵՆ ԳԱՍՊԱՅԱՆԻ
Սրբագրիչ՝ ՀԵՂԻՆԵ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Գրականության և արվեստի թանգարանի հրատարակչություն